




ԶԱՄԱՐ

1982

ԺԱ-ԺԲ



ԼԹ
ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Հայեմբեր - Կեկեմբեր

1982



ՀՐԱՄԱՆԱԻ

Ց. Ց. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՆ
ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՊԱՏԻՎ
ՆԱԽԱԳԱՀ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿԱՐԱՄԱՆԼԻՍԻՆ՝ ՕՍՄԱՆՅԱՆ
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻՆ ՀՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՅՈՒՑԱԲԵՐՎԱԾ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ
ՀԱՄԱՐ

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿԱՐԱՄԱՆԼԻՍԻՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՍԵՄԱՓԱՅԼ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ա Թ Է Ն Ք

Վսեմաշուք Տիար Նախագահ,

Աստուծոյ ողորմութեամբ, Մենք՝ առաջին սպասաւորը Հայ Առաքելական Եկեղեցու, հայոց քրիստոնէական հաւաքի բազմադարեան կենտրոն Սուրբ Էջմիածնից Ձեզ ենք բերում Մեր յարգալից ողջոյնը և առ Աստուած առաքում Մեր աղօթքը Ձեր արեւշատութեան և Ձեր հայրենանուէր առաքելութեան փայլուն յաջողութիւնների համար, ի փառս հեղին մեծանուն ժողովրդեան, որ աշխարհի քաղաքակրթութեան պատմութեան հորիզոնի վրայ առաջին ջահակիրը հանդիսացաւ ոգեկանութեան անկորչելի արժէքների, ոգեկանութիւն, որ իր լուսաշող արձագանքը ունեցաւ նաև հայ ժողովրդի քրիստոնէական մշակութային վարթօնքի ճանապարհին, սկսած չորրորդ և հինգերորդ դարերից:

Հայ Եկեղեցին ու ժողովուրդը երախտապարտ են հեղին ազնիւ ազգի՝ նաև այն մարդասիրական վերաբերմունքի համար, որով առաջին համաշխարհային պատերազմից յետոյ, բազմահապար հայ գաղթականներ՝ 1915 թուի Օսմանեան ցեղասպանութեան դժոխքից փրկուածներ, ապաստան ու կեանքի

ապահովություն գտան Յունաստանում, վայելելով պետական իշխանությանը պաշտպանությունը և հոգատարությունը:

Հայ Եկեղեցին ու ժողովուրդը յատկապես այս օրերին յիշատակում են Չմիռնիայի յոյների և հայերի կոտորածը 1922-ին, երբ վերապրողներին հեղին պետությունը եղբայրական օգնության ձեռք երկարեց ու ապաստան տուեց դժբախտ այդ հայերին ևս: Արդէն վաթսուն տարիներ են անցել այդ ողբերգական իրադարձություններից, սակայն համայն հայությունը որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի, երախտագիտութեամբ յիշում է և բարձրօրէն գնահատում հեղին պետութեան մեծահոգի օգնությունը, ցուցաբերում կոտորածներից փրկուած հայ գաղթականներին և որբերին:

Արդի աշխարհի խռովայոյս այս օրերին, վերյիշելով 1915-ի սև տարին ու Չմիռնիայի 1922-ի աղէտը, Մենք աղօթում ենք, որ նման ողբերգություններ չկրկնուեն ոչ մի տեղ և ոչ մի ժողովրդի կեանքում, որ վերջ գտնեն ամէն տեսակի ազգամիջեան թշնամություններ, և պետություններ ու ազգություններ ապրեն խաղաղութեան արևի տակ համերաշխ գործակցութեամբ:

Երախտապարտ սրտով հաստատում ենք նաև մեր օրերին հեղին պետութեան նոյն հոգատարությունն ու լայնախոհությունը Յունաստանում բնակող մեր Եկեղեցու պաւկների նկատմամբ, որոնք ապրում են խաղաղ և բարօր կեանքով, վայելելով ամէն տեսակի նպաստաւոր պայմաններ, կազմակերպելու իրենց կրօնական, կրթական ու մշակութային համայնքային կեանքը, իբրև հաւատարիմ ու ջինարար քաղաքացիները հեղին հիւրընկալ հայրենիքի:

Թոյլ տուեք, մեծայարգ Տիար Նախագահ, Ձերդ Վսեմութեանը և հեղին եղբայր ժողովրդին ներկայացնելու Մեր ամենաբարի մաղթանքները առաջադիմութեան ու ծաղկումի՝ մշտական խաղաղութեան մէջ:

Ամենակալն Աստուած թող յաւետ անասան ու պայծառ պահպանէ անմահ Հելլադան, միշտ փառաւորուած իր հանճարի լոյսերով:

«Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ. առաւելով ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13): Ամէն:

Կարգիս

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուաւ կոնդակս ի 27 հոկտեմբերի
1982 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԱԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1161





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ „ARMENIAN MIRROR-SPECTATOR“-Ի
ԹՂԹԱԿՑԻ ՀԱՐՑԵՐԻՆ

(4 նույեմբեր 1982 թ.)

Հարց.—Ձերո՞ Սրբություն, ամբողջ աշխարհի հայերը հաճույքով մասնակցում են Ձեր գահակալության 27-րդ տարեդարձի հանդիսությանը: Ձեր կարծիքով, որո՞նք են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած նշանակալի իրադարձությունները կամ ձեռք բերված նվաճումները անցած 27 տարիների ընթացքում:

Պատասխան.—Բարին Աստված և մեր հավատացյալ ժողովուրդը Մեզի օգնեցին, որ 27 տարիներու ընթացքին կարողանանք իրագործել Մեր ծրագիրները քայլ առ քայլ: Մեր գործին նպաստեցին նաև մեր երկրի մեջ ըստեղծված օրինական և գործնական պայմանները: Կարևոր իրագործումներ կնկատենք՝

Նախ հիմնովին վերանորոգումը և բարեկարգումը Հայաստանի բազմաթիվ վանքերու և եկեղեցիներու՝ սկսյալ Սուրբ Էջմիածնի տաճարեն, և կրոնական կյանքի պարթոնքը հայրենաբնակ մեր ժողովուրդի կյանքի մեջ:

Երկրորդ՝ կարևոր կնկատենք հիջել կառուցումը կամ վերակառուցումը Նոր Վեհարանի, Էջմիածնի տպարանի ջենքի, Մայր Աթոռիս վանական

հյուրանոցի, Ս. Գեղարդա, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի և Ս. Խորվիրայի վանական շենքերու և վերջերս «Ալեք և Մարի Մանուկյան» Գանձատան:

Երրորդ՝ վերակազմակերպումը՝ հոգևոր ձեմարանի կրթական ծրագրի և դասախոսական կազմի, վարկ տալով հատկապես կրոնական և եկեղեցագիտական ուսման, հոգևոր և բարոյական կարգապահության մթնոլորտի մեջ: Արդյունքը եղավ բավականին պտղառատ, և հոգևոր ձեմարանը մեր Եկեղեցիին նվիրեց ցարդ մոտ երկու իարյուր ապաստվորներ՝ եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ և սարկավազներ, որոնք մեր օրերուն կաշառտունավարեն մեր երկրի եկեղեցիներուն մեջ, մի քանիսն ալ՝ արտասահման:

Չորրորդ՝ Մեր գահակալության շրջանին բնականոն և սերտ կապեր ստեղծվեցան Մայր Աթոռիս և մեր Եկեղեցվո նվիրապետական Աթոռներու, թեմերու և համայնքներու միջև, որով Սուրբ Էջմիածինը առավել աւարայնեց ամենայն հայոց հոգևոր գերագույն կեդրոնը ըլլալու իր կոչումը:

Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իր պատմական առաքելության ողիղ ճանապարհին վրա կգտնվի:

Եվ վերջապես գոհունակությամբ կրնանք նշել, որ վերջին 27 տարիներու ընթացքին, սքանչելի կերպով վարձացան մեր հարաբերությունները քրիստոնեական քույր Եկեղեցիներու հետ, Արևելքի և Արևմուտքի: Այս ճանապարհին վրա Մայր Աթոռս գործոն կերպով կմասնակցի եկեղեցական համաշխարհային Էկումենիկ շարժումին, ըլլալով անդամ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին երկար տարիներէ ի վեր:

Հարց.—Ինչպե՞ս կընթացրե՞իք Էջմիածնի Մայր Աթոռի ներկա վիճակը հոգևոր, տնտեսական և կազմակերպչական իմաստով:

Պատասխան.—Մայր Աթոռիս ներկա ֆինանսական վիճակը բավական լավ է: Թե՛ Մայր Աթոռը և թե՛ մեր մյուս վանքերն ու եկեղեցիները բավականաչափ եկամուտ ունին իրենց այրտձենները հավասարակշռելու:

Եկամուտներու գլխավոր աղբյուրներն են մկրտություններու, պսակներու և հոգեհանգիստներու առիթներով հավատացյալներու կամավոր նվերները, մումավաճառությունը և եկեղեցիներու գանձանակներէն գոյացած գումարները:

Բացառիկ ծախսերը սակայն՝ եկեղեցիներու վերանորոգման, նոր շենքերու կառուցման և հոգևոր ձեմարանի կարիքները, կհոգացվին ադտասահմանի մեր հավատացյալներու նվիրատվություններով: Ինչպե՞ս, օրինակ, Գանձատան կառույցը, որ իրականացավ Տիար Ալեք Մանուկյանի առատաձեռն նվիրատվությամբ:

Հարց.—Բոլորս հպարտ ենք Հայաստանյայց Եկեղեցու վաղեմի ավանդություններով: Բայց Եկեղեցու անդամներից ոմանք կարծում են, որ կարիք կա եկեղեցական կանոնների և ավանդությունների հիմնական վերանայման. օրինակ հոգևորականության կուսակցության հարցը: Կարծո՞ւմ եք, որ այդպիսի վերանայման կարիք կա:

Պատասխան.—Հայ Առաքելական Եկեղեցին՝ աշխարհի հնագույն Եկեղեցիներէն մեկը, բնական է, որ պահպանէ իրեն համար նվիրական դարձած կանոններն ու ավանդությունները:

Ամեն նորարարություն չէ որ հառաջդիմություն կնշանակե, մանավանդ Եկեղեցին ներս:

Ինչ կվերաբերի կուսակրոնության հարցին, Մեր կարծիքով այդ դրությունը պետք է պահպանվի անփոփոխ, մանավանդ վանքերն ենքս և բարձրաստիճան հոգևորականության համար:

Սակայն կխորհինք թե ապագա եպիսկոպոսական ժողով մը պիտի կարողանա որոշ հնարավորություն ստեղծել, բացառիկ պարագաներու բերումով, ամուսնանալու իրավունք տալու կուսակրոնության ուխտ չկատարած արեղաներուն:

Հարց.—Չե՞լ մոտ արձագանք գտնո՞ւմ է շատ կանախց այն ցանկությունը, որ իրենք Եկեղեցու կողմից ավելի շատ նկատի առնվեն և ավելի պատեհություններ ունենան մասնակցելու մեր Եկեղեցու հոգևոր կյանքին:

Պատասխան.—Հավատացյալ կանանց մասնակցությունը մեր Եկեղեցվո մեջ հնուց ի վեր իրողություն մըն է. իսկ մեր օրերուն առավել ևս ողջունելի և նույնիսկ անհրաժեշտ: Թե՛ ընտանեկան կյանքեն ներս, թե՛ եկեղեցական համայնքային կյանքին մեջ կարևոր դեր վերապահված է մեր մայրերուն և քույրերուն: Մեր երկրի մեջ եկեղեցական վարչական մարմիններեն ներս՝ կգործեն նաև կիներ, իբրև հոգաբարձության անդամ և նույնիսկ ատենապետ:

Քաջալերելու համար կանանց եկեղեցանվեր գործունեությունը, Մենք մտադիր ենք հատուկ ջբանշան մը ստեղծել, պարգևատրելու համար անոնց եկեղեցական ծառայությունն ու վստակը:

Հարց.—Ամերիկայի Հայ Եկեղեցու համար լուծման կարոտ մի կարևոր խընդիր է լավ պատրաստված կղերականների պակասը: Դա Հայ Եկեղեցու համար ընդհանո՞ր երևույթ է. եթե այդպես է, ապա ի՞նչ կարելի է անել այն լուծելու համար:

Պատասխան.—Մեր ալ մտահոգության առարկան է մեր Եկեղեցվո հոգևոր ծառայողներու պակասը: Մեր ներքին թեմերու և եկեղեցիներու համար, Ս. Էջմիածնի հոգևոր ձեմարանը բավարար չափով հունձք տվալ այս վերջին 27 տարիներու ընթացքին, սակայն գիտենք, թե արտասահմանի թեմերը գրեթե ամեն տեղ բավարար չափով հոգևոր ծառայողներ չունին:

Անհրաժեշտ է, որ մեր նվիրապետական Աթոռներու կրթական հաստատությունները առավել կազմակերպյալ աշխատանք ծավալեն, պատրաստելու համար հավատավոր, լուսամիտ և նվիրյալ հոգևորականներ:

Թեմերու մեջ ևս, կխորհինք, հնարավոր է այս ուղղությամբ աշխատանք կազմակերպել, ինչպես «Ս. Ներսես» վարժարանն է Միացյալ Նահանգներու մեջ, պայմանավ սակայն, որ ապագա հոգևորականները կատարելապես յուրացնեն հայերեն լեզուն, բավարար չափով նաև գրաբարը և Հայ Եկեղեցվո պատմությունն ու մատենագրությունը: Առանց հայ լեզվի լիակատար իմացության՝ կարելի չէ պատկերացնել հայ հոգևորական:

Հարց.—Գործող քանի՞ հայ եկեղեցիներ կան Սովետական Հայաստանում: Ինչպե՞ս են հարաբերությունները Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և Սովետական Հայաստանի կառավարության միջև:

Պատասխան.—Սովետական Հայաստանի և ներքին թեմերու մեջ կան յոթ գործող վանքեր և 52 եկեղեցիներ: Մայր Աթոռի և պետական իշխանության միջև հարաբերությունները բնականոն են: Կտիրե փոխադարձ հարգանքի մթնոլորտ: Պետությունը նյութապես չօժանդակեր Եկեղեցիին, սակայն ամեն դյուրություն կընծայե, որպեսզի Մայր Աթոռը նպաստավոր պայմաններու մեջ և պետական զեղչյալ գիներով ապահովե իր կարիքները շինարարական աշխատանքներու ճանապարհին:

Մեր պետական իշխանությունները ամեն դյուրություն կընծայեն նաև, որպեսզի Մայր Աթոռս իր հարաբերությունները լայն չափերով կարողանա զարգացնել արտասահմանի մեր եկեղեցական կեդրոններու և քույր Եկեղեցիներու հետ:

Հարց.—Մեզանից ոմանք անցած հունիս ամսին Երուսաղեմ այցելեցին և այնտեղ տիրող անհամերաշխությունը գտան մտահոգիչ: Կացության մեջ որևէ բարվոքում նկատվո՞ւմ է: Ի՞նչ կարելի է անել խնդիրը ճիշտ լուծելու համար:

Պատասխան.—Ցավով տեղեկացանք Երուսաղեմի հայոց Պատրիարքության միաբանության մեջ ստեղծված ներքին անհասկացողություններու մասին: Հույս ունինք, որ միացյալ ձիգերով և սրտցավությամբ, մոտ ապագային հնարավոր կդառնա միաբանության ծոցին մեջ վերահաստատումը եղբայրական համերաշխության:

Հարց.—Ամերիկայում Հայոց Եկեղեցու առջև մի կարևոր խնդիր է դրված, դա միասնության պակասն է: Վերջերս Չերոք Սրբությունը այս խնդրի շուրջ հրապարակեց երկու նամակ, որոնց մեջ Դուք ասում էիք, որ միությունը կարելի է իրագործել՝ աշխատելով վերևից ներքև, այսինքն համազգային մակարդակի վրա, և հետո միայն տեղական, այսինքն թեմական մակարդակի վրա. և կամ թեմական մակարդակից սկսել դեպի վեր համազգային մակարդակ:

Համազգային մակարդակի վրա նոր զարգացումներ կա՞ն: Չերոք Սրբությունը նոր հաղորդակցություններ ունեցա՞ծ է Անթիլիասի Տանն Կիլիկիո Աթոռի հետ:

Չերոք Սրբությունը ինչպե՞ս է գնահատում միության նպատակով վերջերս ԱՄՆ-ում տեղի ունեցած բանակցությունները: Կարծո՞ւմ եք, որ դրանք կարող են հաջող ելք ունենալ:

Պատասխան.—Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իրավասության և օրհնության ներքև եկեղեցական միության վերահաստատումը Միացյալ Նահանգաց հայ համայնքներուն մեջ, հրամայական անհրաժեշտություն է կանոնական, բարոյական և ազգային տեսակետներեն:

Մենք առաջինը պիտի ուրախանանք, եթե իրականություն դառնա այդ միությունը: Մեզի համար տարբերություններ չկան ամերիկահայերու միջև: Բոլոր հայերը անխտիր կնկատենք Մայր Աթոռիս հարապատ հոգևոր զավակները: Այո, երանի թե միությունը իրապես կյանքի կոչվեր, վերադարձովը Մեր զավակներուն, որոնք ինքզինքնին բաժնված կնկատեն Ս. Էջմիածնեն և միացած են Անթիլիասի Աթոռին:

1956 թվականին Անթիլիասի մեջ որոշում մը տրվեցավ. այն է՝ Սփյուռքի հայ թեմերն ու եկեղեցիները բաժնել Ս. Էջմիածնեն և միացնել Անթի-

լիասի Կիլիկյան Աթոռին: Այդ որոշումը տակավին չէ փոխված: Եվ ինչքան ժամանակ այդ որոշումը չէ փոխված, անհնար է միություն և խաղաղություն ստեղծել Սփյուռքի հայ եկեղեցական կյանքեն ներս:

Անթիլիասական դիրքերու վրա կանգնած սակարկություններ կատարելով իրական միություն չի գոյանար:

Մեր սպասումն է և հույսը, որ թե՛ Անթիլիասի Մեր եղբայրները և թե՛ անոնց միացած ամերիկահայ Մեր զավակները, ի վերջո պիտի համոզվին, թե արտասահմանի հայ հավատացյալ ժողովուրդը բաժնել Ս. Էջմիածնեն, կրոնական և ազգային հանցագործություն է:

Հայ Եկեղեցվո ներքին տագնապը հեռացնել հնարավոր է, այո՛, միմիայն հեռացումովը տագնապի բուն պատճառին և վերականգնումովը մինչ 1956-ի օրինական վիճակին, հարգելով Անթիլիասի իրավասությունները ամբողջապես իր թեմերուն մեջ՝ ի Լիբանան, ի Սուրիա և ի Կիպրոս:

Հարց.—Բոլորս գիտենք, որ Հայ Եկեղեցին ազգային Եկեղեցի է և շատ տեսակետներով կատարում է կարևոր դեր մեր համայնքային կյանքում: Դա որն է կերպ հակասում է Եկեղեցու կոչմանը որպես հոգևոր հաստատություն:

Պատասխան.—Հայ Առաքելական Եկեղեցին հայ քրիստոնյա ազգի ծոցեն ծնած, վարձացած ու նվիրագործված Եկեղեցին է, ահա մոտ տասնկյոթ դարերն է ի վեր, իբրև գլուխ ունենալով Ամենայն Հայոց Հայրապետությունը ի Սուրբ Էջմիածին: Սուրբ Էջմիածնի կամարներուն տակ ստեղծվեցավ հայ լեզվի այբուբենը, սկիզբ առավ հայ գրականությունը, թարգմանությամբը Սուրբ Գրքի Ե դարուն: Հետագա դարերուն նույն Հայ Եկեղեցվո հովանիին տակ ծաղկեցան մեր մատենագրությունը, գիտություններն ու արվեստները:


Սուրբ Էջմիածնի օրհնությամբ Վարդան Մամիկոնյան Ավարայր լուջավ պաշտպանելու Քրիստոսի Ավետարանը և հայրենիքի ազատությունը: Այսպիսով հայ ժողովուրդի պատմության ամբողջ ընթացքին, քրիստոնեական հավատքը և ազգային գիտակցությունը միասին կապմավորվեցան ու վարձացան, մեկը մյուսով առավել իմաստավորված, մեկը մյուսին պաշտպան, մեկը մյուսին ներշնչանքի աղբյուր: Հայոց քրիստոնեական ոգեկանությունը կենդանի է Հայ Առաքելական ազգային Եկեղեցիով:

Կարելի է նույնիսկ ըսել, թե հայ ժողովուրդը Եկեղեցի-ժողովուրդ եղած է իր ամբողջ պատմության ընթացքին, չորրորդ դարեն սկսյալ:

Քրիստոնեությունը հայ ազգի ոգեկանության հիմնաքարն է, անոր ստեղծագործ ուժերու սկզբնաղբյուրը, անոր ճակատագիրը և պարծանքը մինչև այսօր:

Այս իմաստով, ահա, մեր Մայր Եկեղեցին ազգային է: Հետևաբար ոչ միայն հակադրություն չէ եղած, այլ միշտ եղած է լիակատար միաձույլ ներդաշնակ գոյավիճակ և առաքելություն Հայ Եկեղեցվո կրոնական և ազգային նկարագիրներու: Այսօր ալ կացությունը նույնն է:

Հաճելի է Մեզի օգտվիլ այս առիթեն և Մեր հայրապետական օրհնությունները հղել օգտաշատ թերթիդ խմբագրության և ընթերցողներու:



**ՊՐՈ-ՕՐԻԵՆՏԵ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ
ԱՅՅԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ՝ ԿԱՐԴԻՆԱԼ
ՖՐԱՆՑ ՔՅՈՆԻԳԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ**

1982 թվականի հոկտեմբերի 29-ին, ուրբաթ օրը, առավոտյան, Պրո-Օրիենտե կազմակերպության պատվիրակությունը, նախօրոք եղած կարգադրությանց համաձայն, պաշտոնական այցով եղել է Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքում: Պատվիրակության անդամները այցելել են Ս. Հակոբի Մարտաճարը և «Եդուարդ ու Հելեն Մարտիկյան թանգարանը»: Այնուհետև նրանց ցույց են տրվել տաճարի գանձատանը ի պահ դրված հայ եկեղեցական արվեստի մի շարք արժեքավոր նմուշներ:




Երուսաղեմի հայոց Ամենապատիվ Ս. Եղիշե Սրբազան Պատրիարքը և Վիեննայի Արքեպիսկոպոս կարդինալ Ֆրանց Բյոնիցը՝ շրջապատված հայ բարձրաստիճան հոգևորականներով

Սույն օրը, երեկոյան, պատրիարքարանի դահլիճում, ի պատիվ Վիեննայի Արքեպիսկոպոս կարդինալ Ֆրանց Քյունլիգի և Պրո-Օրիենտե կապմակերպության պատվիրակության, Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոսը տվել է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա են եղել Երուսաղեմում Ավստրիայի հյուպատոսության կազմը, օտար եկեղեցական հարանվանությունների, ինչպես նաև Երուսաղեմի հայկական կապմակերպությունների ներկայացուցիչներ:

Կարդինալ Ֆրանց Քյունլիգը, իր անակնկալ հիվանդության պատճառով, չի կարողացել ներկա գտնվել սույն այցելությանը: Սակայն նոյեմբերի 2-ին, երկուշաբթի օրը, առավոտյան, եկել է հայոց պատրիարքարան իր հարգանքը և ջնորհակալությունը հայտնելու Ամենապատիվ Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքին՝ պատվիրակության անդամներին ցույց տրված սիրալիր ընդունելության համար: Այդ առթիվ Սրբազան Պատրիարքը կարդինալ Ֆրանց Քյունլիգին պատվել է Ս. Հակոբի ոսկյա խաչով, իսկ կարդինալը Նորին Ամենապատվությանը նվիրել է մի սկիհ ի նշան քրիստոնեական եղբայրական սիրո:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՐՁՆ

Սույն հոդվածը գրված է ամերիկահայ առաջնորդարանի հայ դպրոցների համագումարի առթիվ:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օտարազգի հայագետներ մարմաջն ունին Հայաստանի քրիստոնեության դարձի թվականը 314 ընդունելու, որպեսզի տարիով մը ավելի ուշ տարած ըլլան Վայն Հռոմեական Կաթողիկէ Եկեղեցւոյ 313 թվականէն, երբ Հռոմեական կայսրության սահմաններէն ներս քրիստոնեությունը թույլատրյալ կրոն հռչակվեցաւ ի շարս այլ կրոններու: Մեր նայատակն է հաստատել, որ հայոց քրիստոնեության դարձի թվականը 301 թվականն է, Ս. Էջմիածնի, ինչպէս նաև հայ հոգևոր իշխանության սկիզբն ալ տեղի ունեցած է 303 թվականին: Մկրտիչ Ա խրիմյան կաթողիկոս իրավամբ 1903 թվականը հռչակած էր հատուկ կոնդակով մը որպէս 1600-ամյակը Մայր Աթոռի հաստատման ի Ս. Էջմիածին:

Երկու հիմնական ապրակներ պահպանված և վարձագրուցած են հայկական կրոնական և մշակութային ավանդը քաղաքական անընդհատ վերիվայրումներու ընթացքին: Առաջին ապրակն է հայ ժողովուրդի ազգային Եկեղեցին, որ դարեր շարունակ հովանավոր դարձած է մեր ժողովուրդին որպէս կեդրոնական գլխավոր ուժը, բան մը, որ նույնիսկ հայ պետությունը չէ կրցած տալ անոր: Երկրորդ ապրակը հայ գրավոր ավանդն է, գիտականորեն ճանչցված որպէս պատմագրություն, որ ծագում առաւ հայ գիրերու ստեղծումով Ե դարու սկիզբը: Խոսելով Հայ Եկեղեցւոյ ծագման մասին, հարկ է ի մտի ունենալ, որ հայոց գրավոր ավանդութեամբ հասած վավերական պատմությունը կարելի է միայն ընդունելի նկատել Ե դարու առաջին քառորդէն սկսյալ և ոչ ավելի կանուխ, քանի

որ անկէ առաջ չենք ունեցած գրավոր պատմությունը մեր կրոնքին: Այս կնշանակէ որեւէ, որ հայ նախնական քրիստոնեության և առաքելական շրջանի դեպքերը շղթայված են իրարու ավանդութեամբ ստացված տեղեկություններով, որոնք ավելի ուշ գրի առնվեցան մեր առաջին պատմիչներու ձեռքով:

Հայ քրիստոնեության ծագման պարագաները արտահայտված են արդէն իսկ մեր Եկեղեցւոյ պաշտոնական անունին մեջ: Երբ մեր Եկեղեցին կկոչենք «Հայ Առաքելական Եկեղեցի», իսկույն անոր հայ ըլլալը բնորոշած և առաքելականությունը խոստովանած կըլլանք: Մեր Եկեղեցին առաքելական է, որովհետև երկու առաքյալներու՝ Թադեոսի և Բարթողիմէոսի ձեռամբ ցանվեցան առաջին սերմերը քրիստոնեության Հայաստանի մեջ: Ճիշդ է, որ գրավոր հաստատ ապացոյց մը չկա, որ ըլլա ժամանակակից սույն կրկնակի քարոզութեանց, և սակայն ավանդութեամբ ստացված են հնագույն մյուս Եկեղեցիներու ծագման պարագաները ևս, քանի որ, մեր պարագային գոնէ, գրավոր միջոցներ կպակսեն: Նաև նոր կրոնքը սկսաւ տարածվիլ քաղաքական շարունակական հալածանքներու ներքեւ Բ և Գ դարերուն հավասարապէս Հռոմեական կայսրութենէն ներս և անկէ դուրս: Հայոց պարագային սրբացուցած ենք երկու վայրեր, ուր պահպանված կնկատվին մեր երկու առաքյալներու նահատակման տեղերը՝ Արտաշ (Ս. Թադեոսի) և Աղբակ (Ս. Բարթողիմէոսի): Ուղիղ առաքելականությունը մեր Եկեղեցւոյ երկու բան կհաստատեն. նախ թէ ան նախնագույն և ամենէն հարա-

վատ Եկեղեցիներեն մին եղած է, և ապա թե Հայաստանյայց Եկեղեցին իրապես հաստատված է որպես անկախ Եկեղեցի հատկապես և բնորոշ կերպով հայ ժողովուրդին համար ի Հայաստան աշխարհ:

Առաքելական քարոզչությանց վերջավորության, հակառակ բազմիցս կրկնված հալածանքներու հայոց Սանատրուկ թագավորի (75—110), Խոսրով Բ թագավորի (230 թ.), և Տրդատ Գ թագավորի (287 թ.) կողմե, քրիստոնեությունը պաշտոնապես պետական կրոն դարձավ 301 թվին Ս. Գրիգոր Պարթև Հայրապետի (վ. 325 թ.) քարոզչությամբ ու Տրդատ Գ հայոց թագավորի (մեռ. 330 թ.) բժշկությամբ ու մկրտությամբը հանդերձ արքայական ընտանյոք: Անշուշտ որ նման ժողովուրդային և քաղաքական դրության մը ամբողջական դարձը պետականորեն դեպի քրիստոնեություն հանկարծակի կառավարված դեպք մը չէր, այլ շարահար դեպքերու երակացությունն ու վերջնական արդյունքը եղավ նախորդող շրջանի առաքելական քարոզչության:

Վերնի ընդհանրացումներեն խոսափելով հարկ է այժմ որոշ մանրամասնությամբ քննարկել հայոց պատմության այս մեծագույն անկյունաքարին՝ քրիստոնեության ծագման ներքին ծայքերը: Նկատի առնվելու են, օրինակի համար, ժամանակաշրջաններու բաժանումը, քաղաքական տվյալներն ու պայմանները, գոյություն ունեցող օտար և հայ աղբյուրները, որոնք բոլորը միասնաբար լույս կրնան սփռել հայ քրիստոնեության ծագման հարցին վրա: Ժամանակագրության տեսակետեն պատրոշելու ենք առաջին երեք դարերը, որոնք առաքելական քարոզչության դարերն են, հաջորդող 150 տարիներեն. այսինքն՝ մինչև 301 թվականը, և անկե ետք մինչև 450 թվականը, որու ընթացքին թե՛ քրիստոնեությունը պետականացավ Հայաստանի մեջ և թե՛ գիրն ու գրականությունը ստեղծվեցավ և ծաղկեցավ մեր ժողովուրդին մեջ, առաջին հերթին Աստվածաշունչ մատյանը հայերենի թարգմանվելով և դարու երկրորդ քառորդին:

Քաղաքական դեպքերը նկատի առնելով կրնանք ապահով կերպով տեսնել, որ Ս դարեն մինչև 428 թվականը (Ք. ե.) Հայաստանի վրա իշխեցին հայ Արշակունիներ: Հռոմեացի (Ք. ե. 63 թվ.) դաշնագրով ընդմեջ Հռոմի և Պարթևստանի, համաձայնություն գոյացավ, որ Պարթևաց թագավորի եղբայրը Հայաստանի վրա իշխե որպես ենթակա Հռոմի կայսեր: Ասոր վրա ուրեմն 66 թվին առաջին Արշակունի թագավորը Տրդատ Ա (63—75) դեպի Հռոմ ճամբորդեց թագ ըստանալու համար Ներոն կայսրեն ու վերա-

դառնալու Հայաստան որպես թագավոր: Տրդատ Ա վերականգնեց Հայաստանի թագավորությունը և վերականգնեց հին Արտաշատ մայրաքաղաքը, որ քանդված էր հռոմեացի պորավար Կորբուտոնի ձեռքով (Ք. ե. 59 թվին): Տրդատ Ա-ի հաջորդ Սանատրուկ թագավոր (75—110) իր կարգին կառույց արքայանիստ քաղաք մը ևս, Մծուրք անունով, Եփրատ-Արածանիի եզրին, պարսպապատեց վայն և իր արձանն ալ հոն կանգնեցուց (Փավստոս Բյուզանդ, Հայոց Պատմություն, էջ 233): Արտաշատ կործանվեցավ Մարկոս Ավրելիոս կայսեր Պրիսկոս պորավարի ձեռքով 163 թվին և անոր փոխարեն Վաղարշապատ (Էջմիածին) կառուցվեցավ Սանատրուկ թագավորի որդի Վաղարշի (117—140) ձեռքով, որ հայոց թագավորն էր: Մեզի համար կարևոր է գիտնալ, որ Հայաստանի վերոհիշյալ երեք մայրաքաղաքները միջազգային հարաբերությանց և առևտուրի կարևոր կենդանիներ ըլլալով և Ասորիքի և Հայաստանի միջև, կարելի դարձուցին քրիստոնեության թափանցումը ի Հայաստան նույնիսկ առաքելական շրջանին (Մելքոնյան, Հայաստանի հարաբերք, էջ 452):

Գ դարու սկիզբը քաղաքական երկու կարևոր դեպքեր պատահեցան, մին Ասորիքի և մյուսը Պարթևստանի մեջ, որոնք ուղղակի կապ ունեցան քրիստոնեության դեպի Հայաստան ներթափանցման հետ: Ասորիքի (Ոսրոյենե-Եդեսիա) վերջին թագավորը՝ Աբգար Թ (197—216), իր արքայանիստ քաղաքին՝ Եդեսիո մեջ գերի կիլնա Անտոնիոս Կարակալա կայսեր ձեռքը 216 թվին և իր թագավորությունը իսկույն վերջ կգտնե: Ասորի պատմագետներ հաստատած են, որ Աբգար Թ ծանոթ առաջին քրիստոնյա թագավորը եղած է Եդեսիո, ուր նույնիսկ եկեղեցի մը գոյություն ունեցած է և սակայն կործանված ջրհեղեղի մը պատճառով 201 թվին: Քիչ ետքը Պարթևաց կայսրությունը կտապալի և Սասանյանք կտիրեն Պարսկաստանի 226 թվականին: Այս երկու դեպքերը, պատահած Հայաստանի անմիջական դրացի պետությանց մեջ, ինքնին կհիշեցնեն մեզի, թե քրիստոնեության մուտքը Հայաստան կապ ունեցած է թե՛ առաջին լուսավորիչներու՝ Թադեոսի և Բարդուղիմեոսի քարոզչությանց և թե՛ Ս. Գրիգոր Լուսավորչի կատարած հիմնական գործին հետ: Առաքյալները նախ հարաբերած են Աբգար թագավորներու երկրին՝ Ասորիքի հետ, ուրկե ապա անցած են Հայաստան: Նաև, Սասանյան պետության հիմնադիր Արտաշիրի դրդումով Ս. Գրիգորի հայրը՝ Անակ, սպաննած էր Հայոց Խոսրով Բ թագավորը, դեպք մը, որ հրաշալի ճամբով մը ուղղություն տված է քրիստո-

ներության պաշտոնական կրոն դառնալուն Հայաստանի մեջ Խոսրովի որդվուն Տրդատ Գ թագավորի ձեռքով 301 թվին:

Ազաթանգեղոս հայ պատմիչը մանրամասնորեն կխոսի վերջին այս դեպքերու մասին՝ սկսելով Խոսրով Բ Հայոց թագավորի սպանությունեն, որուն մոտավոր թվականն է 240, պատմելով Գրիգորի և Տրդատի հարաբերությանց մասին իրենց մանկությունեն մինչև չափահասություն, և վերջապես Գրիգորի քրիստոնյա եղած ըլլալը հայտնվելով Տրդատ չարչարանքներու կենթարկել վայն, մինչև որ թագավորը ինքը կստիպվի լսել Գրիգորի ձայնը և ընդունի անոր բժշկությունը, և ի վերջո քրիստոնեությունը հռչակել որպես պետական կրոն Հայաստանի մեջ:

Հարկ է հիշել, որ Հռոմ քրիստոնեությունը որպես թույլատրյալ կրոն ընդունեց կայսրության սահմաններեն ներս 313 թվականին միայն, Լիկիանոս կայսեր (312—324) Միլանի հրովարտակով, բան մը, որ երբեք չէր նշանակեր կրոնքի պաշտոնական հռչակում, ինչպես տեղի ունեցած էր Հայաստանի մեջ 301 թվին: Տարբերությունը շատ մեծ է երկուքին մեջ: Մինչև 313 թվականը կայսրության մեջ անընդհատ հալածանք կար քրիստոնեության դեմ, հակառակ գոյություն ունեցող Առաքելական Հայրերու քրիստոնեական ջատագովական, քարոզչությանց և գրականության: Այդ հալածանքները արձագանք գտան Հայաստանի մեջ, կարևոր կետ մը որ կհաստատե քրիստոնեության տարածման իրողությունը մեր երկրին մեջ Բ և Գ դարերուն: Ս: Ալեկիոս և իր տասը հապար հետևորդները, կհաստատե լատին մարտիրոսագրությունը, նահատակվեցան նոր կրոնքի սիրույն Արարատ լեռան մերձակայքը Ատրիանոս կայսեր օրով մոտ 117 թվին: Ավելին, հույն քրիստոնյա առաջին պատմաբանը՝ Եվսեբիոս Կեսարացի, իր հռչակավոր **Եկեղեցական պատմության** մեջ կհիշատակե Մաքսիմիանոս կայսեր (305—313) մղած պատերազմը Հայոց դեմ «իրենց քրիստոնեական կրոնքին վերագրած բարձր արժեքին համար որպես պաշտամունք հանդեպ աստվածության» (**Եվսեբիոս Կեսարացի, Թ 7-րդ գլ.**): Նաև Դիոկղետիանոս կայսր հալածեց խումբ մը կոյսեր, որոնք փախան Հռոմե և ազատստան գտան Վաղարշապատ, Հայոց Տրդատ Գ թագավորի մոտ, ուր սակայն նահատակվեցան կայսերական հրահանգով: Ասոնց մեջ կգտնվեին առաջին քրիստոնյա հայ սրբուհիները՝ Գայանե և Հռիփսիմե:

Սասանյան Պարսկաստանի առաջին գործը եղավ Մալդեպական (կրակի պաշտամունքը) կրոնը պետական պարտադիր կրոնը հռչակել 226-են սկսյալ, որուն սակայն

հակադեմոկրատիկ քրիստոնեական ներքին շարժումներ, ինչպես Գնոստիկյան և Մանիքեական աղանդները, որոնք փիլիսոփայություններ էին, քան թե հարապատ կրոնք, առաջինը խառնուրդ մը քրիստոնեական հավատալիքներու և հելլենական աստեղագիտության, իսկ երկրորդը իրանական և քրիստոնեական գաղափարաբանությանց խառնուրդ մը: Գնոստիկյան աղանդը շուտով տարածվեցավ դեպի Ասորիք և Հայաստան, քանի որ պատմությունը կճանչնա Բարդաճան Ասորի անունով քարոզիչ մը, որ, ըստ Մովսես Խորենացիի, այցելած է նաև Հայաստան 216 թվականին՝ հոն ևս քարոզելու համար իր աղանդը: Մեր պատմահայրը՝ Խորենացի, կըսե, թե Բարդաճան Դարանաղյաց Անի բերդաքաղաքը եկավ, ուր նաև Հայոց հին պատմության գիրք մը գտնելով վայն ասորերենի վերածեց: Խորենացի կշարունակե ըսել, որ սույն ասորերեն բնագիրը հետո հունարենի թարգմանված է և ծառայած է իրեն, Խորենացիին, որպես աղբյուր հայոց պատմության (Մովսես Խորենացի, **Հայոց Պատմություն, Երևան (1968), Բ գլ. 66**): Բարդաճանի Հայաստան գալը քրիստոնեական նախնական քարոզչության նպատակով կհաստատե հայասորի հարաբերությունները և անոնց վրա հիմնված առաքելական քարոզչությանց ավանդությունը:

Ճիշդ այս կետն է, որ այժմ պետք է քննարկենք: Ս. Թադեոս առաքյալի քարոզչությունը Հայաստան անմիջական աղերս ունի նույն առաքյալին Եդեսիա կատարած առաքելության հետ, ըլլալով վերջնուպս շարունակությունը: Ասորի ավանդության մը հավաճայն թղթակցություն մը տեղի ունեցած է Հիսուսի և Եդեսիո թագավոր Աբգար Ե-ի (4. և. Ք.—50 Ք. է.) միջև ու նամակները հետագային ամփոփված են **Վարդապետություն Աղդեի** ասորերեն բնագրի մը մեջ: Սույն նամակները արտագրած են Եվսեբիոս Կեսարացի և Մովսես Խորենացի: Եվսեբիոս, որ իր հայտնի **Եկեղեցական պատմությունը** գրեց 325 թվին, կավելցնե, որ մեր Տիրոջ Համբարձումեն ետք «Հուլյա, Թովմաս ղրկեց Թադեոս (Աղդե) յոթանասուններեն մին, որ բժշկեց թագավորը և քարոզեց իր ժողովուրդին»: Հայկական ավանդությունը շարունակություն է առորակաին, որուն բնագիրը, **Վարդապետություն Աղդեի**, մեր հայ թարգմանիչները հայերենի վերածեցին Ե դարուն, ուր ավելցուցին հայկական ավանդության բաժինը, թե Թադեոս չմեռավ Եդեսիո մեջ, այլ շարունակեց իր առաքելական ճամբան դեպի «արևելք և քարոզեց Քրիստոսի Ավտարանը» (Լաբուբնիա, **Նամակ Աբգարի, Վենետիկ, 1868, էջ 46**): Մովսես Խորենացի

իր տեղեկությունը սույն հայերեն բնագրին ստացած է, և Փավստոս Բյուզանդ, մեր առաջին հայ պատմիչներեն, երբ կիսուսի Ս. Գրիգոր Լուսավորչի ի Հայաստան հաստատած Աթոռին մասին, կկոչե՞ն զայն «Աթոռ Թաղեոսի» (Փավստոս Բյուզանդ, Հայոց պատմություն, էջ 141, 153, 187): Խորենացի կկրկնե՞ն զայն՝ ըսելով, որ «հետագային Ս. Գրիգոր կատարեց Թաղեոսի մնացած անավարտ գործը»: Երկու հայ պատմիչները կը հավաստեն, թե Ս. Թաղեոս նահատակվեցավ Հայոց Սանատրուկ թագավորի հրամանով և ցույց կուտան Արտապի Աթոռը որպես սրբավայր գերեզմանը Թաղեոսի: Արտապի Աթոռը իր առաքելական հաջորդականությունը պահած է, որուն հսկած են յոթը եպիսկոպոսներ, իրենց անուններով ալ ծանոթ, հաջորդաբար մինչև Բ դարու վերջը: Այս առաքելական հաջորդականությունը հԱրտապ ըստոված է հիշյալ յոթը եպիսկոպոսներու հաջորդներեն մեկուն անունովը՝ Մեհրութան եպիսկոպոսի, որուն մասին կիսուսի Եվսեբիոս Կեսարացի: Եվսեբիոս կմեջբերե նամակ մը՝ «Վասն ապաշխարության» վերնագրով, որ գրված է 254 թվականին Աղեքսանդրիո Դիոնիսիոս Պատրիարքի կողմե և ուղղված Հայաստանի Ծովք նահանգի Մեհրութան եպիսկոպոսին (Եվսեբիոս Կեսարացի Եկեղեցական պատմություն, 2 գլ. 46): Իսկ հայ մարտիրոսագրությունը կհիշատակե հայ նահատակներ, ինչպես Սանդուխտ կույս, Սանատրուկ թագավորի՝ դուստրը, նաև Չարմանդուխտ, Սամվել և Իսրայել սատրապներ և այլ հապարներ, որոնք նահատակված են Ս. Թաղեոսի քարոզության ատեն:

Հայ քրիստոնեության ծագման հետ կապ ունի նաև Բարթողիմեոս առաքյալի քարոզությունը: Ան «խուսի տասներկու աջակերտներեն էր, որ զայով Հայաստան՝ անցավ Գողթն, Հեր և Չարեվանդ գավառներեն, նույն Սանատրուկ հայոց թագավորի օրով: Բարթողիմեոս ես նահատակվեցավ Մեծ Հայքի Ուրբանուպոլիս քաղաքին մեջ, կամ ըստ Մովսես Խորենացիի, Արևքանոսի մեջ: Ավանդական Աղբակը, Հայաստանի հարավ-արևելքը, կցուցվի որպես վայրը Առաքյալի նահատակման: Գոնե երկու նահատակներ, ի շարս բազմաց, անունով ծանոթ են՝ Ոգոտիի առաքյալաբույր և Տերենտիոս պորավար, որոնք հետևեցան Բարթողիմեոսի: Բարթողիմեոսի առաքելական հաջորդականությունն ալ նվիրված է ութ հաջորդական եպիսկոպոսներով, որոնք Սյունիքի մեջ նստած են, որոնցմե՝ առաջինը՝ Կուսի, ձեռնադրված է Առաքյալեն: Հայաստանի վերոհիշյալ չորս առաքելական աթոռները՝ Արտապի և Սյունիքի, քրիստոնե-

ության գոյությունը կհասցնեն մինչև Գ դարու առաջին քառորդը (225 թ.):

Այսքանը բացատրելի ետք հատուկ կդառնա, որ Հայաստանի մեջ քրիստոնեության գոյությունը Ս. Գրիգոր Լուսավորիչի առաջ անառարկելի է, նկատի առած երկու առաքյալներու Եղեսիո վրայով Հայաստան գալու վերոյցը, Հայաստանի Մեհրութան եպիսկոպոսի պատմական անձ մը ըլլալը, նահատակներու հանվանե հիշատակումը, որոնք յուրրը հիմը կապմեցին ավելի պորավոր շարժումի մը, որ ծանոթ է որպես պետական դարձը հայոց Ս. Գրիգորի և Տրդատ Գ-ի ձեռամբ:

301 թվականը կանխող քաղաքական կարևոր դեպքն էր Պարսից և Հռովմայեցվոց պատերազմը՝ Հայաստանի տիրապետելու մտքը, որ հանգեցավ 298 թվի դաշնագրության ընդմեջ Դիոկղետիանոս կայսեր և Պարսից Ներսես արքայի: Հուլաստան, համաձայն կնքված դաշինքին, ենթակա մնաց Հռոմի: Սպանված Խոսրով Բ հայոց թագավորի որդին՝ Տրդատ Գ, հայոց գահին տիրացավ 287-ին նույն Դիոկղետիանոսի հավանությամբ և կեդրոնական դեմքը հանդիսացավ Ս. Գրիգորի հետ հայոց դեպի քրիստոնեություն դարձին մեջ: Մեր Ազաթանգեղոս պատմիչն է միակը, որ մանրամասնությամբ կգրե ճիշդ հարյուր տարվան (226—325) պատմությունը, նախընթացն ու հետևանքը այս մեծագույն դեպքին՝ Հայոց դարձին:

Ազաթանգեղոսի պատմությունը մեզի կուտա ծանոթ մանրամասնություններ, թե ինչպես Խոսրով Բ հայոց թագավորի սպաննիչ Անակի մանկիկը՝ Գրիգոր, և Խոսրովի մանկիկը՝ Տրդատ, կապատին տոհմական կռիվներեն և կդատտիարակվին, առաջինը Կապադովկյան Կեսարիո մեջ, ուր քրիստոնյա կղառնա, իսկ երկրորդը՝ Պարսկաստանի մեջ, ուր կկրթվի որպես ապագա Արջակունի թագավորը հայոց: Գրիգորի ամուսնությունը Մարիամի՝ հետ տեղի կունենա մերձավորաբար 261 թվին, և իրենց երկու որդիներուն՝ Վրթանեսի և Արիստակեսի ծնունդեն ետք կբաժնվին իրարմե 267 թվին (Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Բ գլ. 80): Ազաթանգեղոս կհաղորդե՝ նաև, որ Գրիգոր Հայաստան կմեկնի 285 թվականին և արքունիքին մեջ ծառայության կմտնե Տրդատ թագավորի հրամանով: Իսկույն երկուքին միջև հակառակություն կծագի հայտնի ըլլալով Գրիգորի քրիստոնյա ըլլալը: Գրիգոր անտանելի չարչարանքներու կենթարկվի թագավորին կողմե և ի վերջո կբանտարկվի Խորվիրային մեջ հԱրտաշատ: Հոն մեռած կը կարծվեր և սակայն 13 տարիներ ետք ողջ

կգտնվել և կծբշկել հիվանդ թագավորը Տրդատ, պատճառ դառնալով անոր ևս քրիստոնյա մկրտվելուն: Այս ձևով կարելի կդառնա նաև Հայաստանը դարձի բերել դեպի քրիստոնեություն:

Հաջորդ կարևոր դեպքը երկու երես ունի. նախ Գրիգոր Լուսավորիչի տեսիլքով հիմնադրված հայոց Մայր Եկեղեցին՝ Էջմիածին, Վաղարշապատի մեջ, և երկրորդ՝ Գրիգորի եպիսկոպոս ձեռնադրվող Կեսարիո մեջ, ուր նախապես սնած էր որպես քրիստոնյա: Ազաթանգեղոս գեղահյուս կերպով և հիանալի մանրամասնությամբ կնկարագրե Ս. Գրիգորի տեսիլքը, որ հրաշապատում պատկերացումն է հայոց Մայր Եկեղեցվո հիմնադրության Հայաստանի մայրաքաղաք Վաղարշապատի մեջ: Տեսիլքին տուն տվող դեպքը Միածնի էջքն է ի Հայաստան, որ իր կարգին, ավելի ուշ, անունը դարձավ Հայ Եկեղեցվո Մայր տաճարին և Մայր Աթոռին ու կեդրոնը հոգևոր վերին իշխանության:

Մինչև հոս Գրիգոր տակավին աշխարհական քարույիչն է Հայաստանի: Թագավորն ու արքունիքը, արդեն քրիստոնեությունը հայտարարած, անհրաժեշտ գտան, որ Գրիգոր երթա և մերձավորագույն եպիսկոպոսն մը քահանայական և եպիսկոպոսական ձեռնադրություն ստանա, ու վերադառնալով Հայաստան՝ կապակերպե Հայ Եկեղեցին առաքելական լրիվ իշխանությամբ: Գրիգոր հանդիսով կերթա Կապադովկյան Կեսարիա, ուր տեղովյն Ղևոնդիոս եպիսկոպոսի ձեռամբ և ի ներկայության այլ եպիսկոպոսներու, կձեռնադրվի քահանա, և առաջին եպիսկոպոս Հայաստանի: Ազաթանգեղոս իր Պատմության մեջ պահած է պատճենները այն նամակներուն, որոնք փոխանակված են Տրդատ թագավորի և Կեսարիո Ղևոնդիոս եպիսկոպոսին միջև ի մասին Գրիգորի ձեռնադրության: Վերադարձին՝ Գրիգոր կմկրտե Տրդատ թագավորը, Աշխեն թագուհին, Խոսրովիդոխտ իշխանուհին, և «ավելի քան չորս միլիոն ժողովուրդ» Եփրատ գետին եզերքը:

Գրիգոր իսկույն կձանչցվի որպես «Կաթողիկոս» թե՛ Ազաթանգեղոսի և թե՛ Փավստոս Բյուզանդի կողմե, որ կիսուսի Գրիգորի մասին որպես «առաջին կաթողիկոս Մեծ Հայքի» (Ազաթանգեղոս, Պատմություն ԺԴ, Փավստոս Բյուզանդ, Պատմություն, Գ, գլ. 10): Քսանհինգ տարի շարունակ Գրիգոր Լուսավորիչ կգործե անդադրում, կկապմե թեմեր, կկապմավորե ծեսն ու ծիսակատարությունը, կգրե ճառեր ու քարոզներ, կշարադրե դավանանքի հատուկ կետեր, և 325 թվականին քաջվելով գործե իր կրտսեր որդին՝ Արիստակես (325—333) կհաջորդե իրեն: Արիստակեսի կհաջորդե իր երեք և ա-

մուսնացյալ եղբայրը՝ Վրթանես (333—341): 325-ի Նիկիո Ա Տիեզերական ժողովին Հայ Եկեղեցին ներկայացուց Արիստակես Հայրապետ, որուն անունը կերևի ներկաներու ցանկին մեջ: Վերադարձին՝ Արիստակես իր հետ բերավ Հայաստան Նիկիո ժողովին կանոններն ու որոշումները, որոնց վրա Գրիգոր Լուսավորիչ կատարեց հավելումներն ու հաստատումները:

Այս բոլորով մեկտեղ հարկ է նշել, որ հայոց քրիստոնեության դարձի գլխավոր պատմիչը Ազաթանգեղոս չի տար որոշ թվականներ և տրամաբանական ժամանակագրություն մը: Այսուհանդերձ կասկած չկա, որ դարձին հետ կապ ունեցող բոլոր անձնավորությունները պատմական անձինք են և ունին իրենց գործունեության թվականն ու աշխարհագրական սահմանը: Այսպես, Տրդատ Գ թագավորի անմիջական հովանավորն է Հռոմի ծանոթ կայսր Դիոկղետիանոս (284—305), որու հավանությամբ Տրդատի թագավորությունը հաստատվեցավ Հայաստանի մեջ: Նաև, Տրդատի հայոց թագավոր ըլլալը հաստատված է երկու վիմական արձանագրություններով, մին գտնված 1899-ին և մյուսը 1945-ին, առաջինը Մայաֆարկին (Տիգրանակերտ) քաղաքի պարիսպին վրա, և երկրորդը Գառնիի հեթանոսական տաճարի պատին վրա, որուն մասին Մովսես Խորենացի ունի ճշգրիտ ծանոթություն (< Մանանդյան, Քննական տեսություն, Բ. Ամաս (1957), էջ 120, 132. Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Բ, գլ. 90): Գրիգոր Լուսավորիչ նույնպես անմիջական կապ ունեցած է Կեսարիո Ղևոնդիոս արքեպիսկոպոսի հետ, որմե իսկ ձեռնադրվեցավ: Ղևոնդիոս պատմական անձ մըն է, որովհետև ան ներկաներեն մին եղած է Նիկիո Ա Տիեզերական ժողովին և իր անունը արձանագրված է որպես մասնակից:

Երկու օտար պատմիչներու վկայությունները անհրաժեշտ կնկատեմ հոս արձանագրել որպես եպրակացություն, ցույց տալու համար, թե քրիստոնեությունը, տիրական կրոնը դարձած էր Հայաստանի 310 թվականին առաջ և ոչ ետքը: Անոնցմե առաջինն է դեպքերու ժամանակակից Դ դարու Եվսեբիոս Կեսարացին, որ հետևյալը կըսե հայոց մասին, երբ կիսուսի Մաքսիմիոս Դայաի (305—313) Հռոմի կայսեր արշավանքներու մասին, նշելով հատկապես կայսեր հայտարարած պատերազմը հայոց դեմ 311 թվին, հայերու քրիստոնեությունը ընդունած ըլլալուն համար: Քրիստոնյա պատմիչը Եվսեբիոս կըսե.

«Բացի այդ, բռնակալ կայսեր (Մաքսիմիոս Դայաի) ձեռքով պատերազմ

հայտարարվեցավ հայերու դեմ, որոնք սկիզբն բարեկամ էին ու դաշնակից հռոմայեցիներուն. բայց որովհետև անոնք (հայերը) քրիստոնյա էին և եռանդով ու բարեպաշտությամբ Աստուծո կերկրպագին, այս աստվածատյացը փորձեց անոնց ստիպել, որ անոնք պոհաբերություն մատուցանեն կոտորելուն և դներուն: Ուստի իրենց բարեկամ և դաշնակից ճանչցվածները (հայերը) վերածեց թշնամիի և մարտնչողի: Ինքն իսկ հայերու դեմ մղած այդ պատերազմի ընթացքին ջախջախվեցավ իր բանակին հետ»:

(Եվսեբիոս Կեսարացի, **Եկեղեցական Պատմություն**, Թ գլ. 8)

Երկրորդ պատմիչն է Ե դարու եկեղեցական պատմիչ Սուրբ Երեմիայի, որ կհիշե Տրդատ թագավորը որպես պաշտպան քրիստոնեության, և կավելցնե ըսելով.

«Ես տեղեկացա, որ հայերը քրիստոնեությունը ընդունած են ավելի առաջ, քան վրացիներն ու ուրիշները: Կըսեն, որ Տրդատը, որ այս ժողովուրդի առաջնորդն էր, աստվածանշան հրաշքի մը պատճառով, որ պատահեցավ իր տանը մեջ, իսկույն ինքը դարձեր է քրիստոն-


յա ու նաև հրամայեր է, որ քարոզության միջոցով այդ կրոնը ընդունին բոլոր իր հպատակները»:


(Սուրբ Երեմիայի, **Եկեղեցական Պատմություն**, Բ գլ. 8)

Այս երկու մեջբերումները անփոխարինելի են և շատ կարևոր. անոնք կհաստատեն օտարներու բերնով և գրեթե ժամանակակից ճշգրտությամբ, թե հայերը քրիստոնյա դարձած էին պետականորեն, թագավորով և ժողովուրդով չորրորդ դարու առաջին տարիներուն: Համաձայն Հ. Մանանդյանի՝ վրացիք քրիստոնյա եղան 337 թվականին: Մովսես Խորենացի իր կարգին կհաստատե, որ Գրիգոր Լուսավորիչ «գրավեց Ս. Թադեոս առաքյալի Աթոռը Տրդատ թագավորի գահակալության 17-րդ տարին», որ է 303 թվականը, Ս. Էջմիածնի հաստատման ճշգրիտ թվականը: Խորենացիի հաշիվը ճիշդ է, քանի որ Տրդատ Գ թագավորի գահակալության թվականը ծանոթ է որպես 287, որուն 17-րդ տարին կըլլա 303:

ԶԱՎԵՆ Ծ. Վ. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

Ֆիլատեֆիա,
Հուլիս, 1982





ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

(Քարոզ՝ խոսված 1982 թ. Առյեսբերի 28-ին Ա. Էջմիածնի Մայր տաճարում Հայաստանի Սովետական Հանրապետության հիմնադրության 62-ամյակի առթիվ)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
ամեն»:

«Մի երկնչիր հօտ փոքրիկ, չի հաճեցաւ
Հայր ձեր տալ ձեզ պարթայութիւն» (Ղուկ.
ԺԲ 32):

Ավետարանի այս հավիտենական պատգամը կարծեք ուղղված լինի բոլոր այն փոքր ազգերին և ժողովուրդներին, որոնք կյանքում հալածանքի են ենթարկվել: «Մի երկնչիր, ով փոքր հօտ կամ ժողովուրդ, որովհետև մեր Հայրը ձեզ տեղ է տվել իր արթայության մեջ»:

Եթե կարողանանք շրջել մեր պատմության անիվը և վաթսուհինգ տարի ետ տանել, այնտեղ կտեսնենք հալածանք, ատելություն և անարդարություն և ի վերա այսր ամենայնի՝ սով, առևանգում, կոտորած: Այս էր վիճակը մեր ժողովրդի տակավին մինչև վաթսուներկու տարիներ առաջ, երբ նա իր հավատքի համար հալածվում էր իր հարևանների կողմից:

Մեր անցյալը ևս՝ հին պատմությունը, երբեմն այնքան փառավոր և սխրանքներով լեցուն, իր մեջ բովանդակում է այնպիսի տխուր էջեր արյունով գրված, որոնց ընթերցումը այսօր ինքնաբերաբար մեր աչքերից արցունքներ կխլի: Մեր անցյալի սխրալի պատմությունը նկատի ունենալով, մեր պատմահայր Մովսես Խորենացին իրավամբ ասում է. «Թեև փոքր ածու ենք, սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավո-

րություններից նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում ևս կան քաջության շատ գործեր, արժանի գրոց հիշատակության»:

Հայ ժողովուրդը բազմադարյան իր պատմության ընթացքում միայն մեկ աշխարհակալ է ունեցել՝ Մեծն Տիգրանը, Ա դարում Քրիստոսից առաջ: Վաղ ժամանակներից մեր երկիրը կռվախնձոր է դարձել արևելքի ու արևմուտքի քաղաքականությանը՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: Այս յոթերորդ դարում արաբները, մահմեդական կրոնը տարածելու նպատակով, արշավել են Հայաստան և շուրջ երեք հարյուր տարի իրենց լուծն են դրել մեր վրա: Դրանից հետո հայ ժողովուրդը ենթարկվել է սելջուկների, թաթարների, մենուկների մոնղոլների և այլ բարբարոս ցեղերի արշավանքներին և իր եղունգներով փորձել է պաշտպանել իր հայրենիքը: ԺԱ դարի ըսկըպին, Անի մայրաքաղաքը կորցնելուց հետո, նա դառնում է դեպի արևմուտք՝ Կիլիկիա, և այնտեղ բազում դժվարություններով կարողանում է հիմնել մի նոր թագավորություն: Կիլիկյան մեր թագավորության ճակատագիրը ևս դառն է լինում. 1375 թ. վերջնականապես այն կործանվում է:

Այդ թվականից հետո, շուրջ վեց հարյուր տարի, որպես ստրուկ ապրեցինք մերթ պարսիկի, մերթ թուրքի բռնության տակ մնալով: Սակայն հայ ժողովուրդը իր ապատության ծարավը կորցրած, հոգեպես ստրկացած ժո-

դովորող չէր: Մեր պատմության ընթացքում ապատագրական շարժումները բազմիցս կապմակերպվել են:

Հայոց կաթողիկոսները սկզբից նեթ, իբրև ազգապետներ, ազգի գլուխ կանգնած ղեկավարներ, Ս. Սահակ Հայրապետից սկսած մինչև Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը, մինչև Նորիմյան Հայրիկ ու մինչև մեր օրերի օրինյալ Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Ս. Վապգեն Ա եղել են հայ ժողովրդի, հայ հայրենիքի, հայ հավատքի պաշտպանները իրենց ողջ կյանքում: Ներսես Աշտարակեցու և մեր մյուս քաջակորով Հայրապետների էկլիպսավորությամբ ծավալված ապատագրական շարժումները եկան հաստատելու, որ հայ ժողովուրդը իսկապես կարող է իր երկիրն ու իր հայրենիքը ունենալ և հարկ եղած դեպքում որպես փյունիկ վերածնվել իր մոխիրներին:

1915—1918 թվականներին մեր ժողովուրդը օրհասական վիճակում էր, մեկ ու կես միլիոն հայեր Արևմտյան Հայաստանում ջարդվել էին Օսմանյան թուրքերի կողմից, ենթարկվելով դարասկզբի առաջին ցեղասպանության: Ապա՝ թշնամին դարձրել էր իր վենքերը դեպի Արևելյան Հայաստան, դեպի Այրարատյան երկիրը, բնաջնջելու նաև հայ ժողովրդի մյուս հատվածը, նպատակ ունենալով այսպիսով հայի անունը ջնջելու պատմության էջերից ու ասելու, որ հայեր անցյալում գոյություն ունեցել են, բայց այսօր գոյություն չունեն:

Սարդարապատը, իբրև երկրորդ Ավարայր, եկավ երևան հանելու հայ ժողովրդի թաքնված ուժերը, ապացուցելու նրա կորովն ու անսահման հայրենասիրությունը: Սարդարապատի, Բաշ Ապարանի մարտերում, հայ ժողովուրդը անսման հերոսությամբ կարողացավ 1918 թ. մայիսին իր հայրենիքի գլուխին կախված վտանգը վերացնել՝ բարբարոս բանակներին վտարելով իր սահմաններից: Սակայն վերջնական ապատությունը, խաղաղությունը և ապահովությունը եկավ մեր երկիրը 1920 թ. նոյեմբերի 29-ին, այնուհետև նրա սահմանները այլևս մնացին անձեռնմխելի, ապահով, և հայ ժողովուրդը հնարավորություն ունեցավ ապրելու իբրև շինարար, ստեղծագործ ժողովուրդ իր սեփական իշխանությամբ՝ այլ ժողովուրդների շարքում:

Երբ վաղն առավոտ արջալույսը բացվի, և պայծառ արևը լուսավորի մեր աշխարհը, Երևանի հրապարակի Կառավարական շենքի վրա փողփողող հայոց դրոշակը պիտի ավելի վաթսուներեքերորդ տարեմուտը խաղաղ, երջանիկ և ապահով մեր հայրենիքի:

Մեր ժողովուրդը վաթսուներկու տարիների ստեղծագործ իր աշխատանքով հաջողությունից հաջողություն գնաց: Որքան ջանք ու աշխատանք թափվեց պայծառակերպելու, գեղեցկացնելու համար մեր երկիրը, և այսօր ամեն մեկ այցելու՝ օտար կամ հայ, բարի նախանձով ու հիացումով է նայում մեր հայրենիքին, մեր Երևանին: Կարծում եք, թե այս քարակերտ շենքերը պոփում են, թե այս ցեղուն ինչ է պոփում, ոչ երբեք: Քարերը քար են անպզա, բայց նույն այդ անպզա քարերը պզայուն ձեռքերում իմաստ և ձև են ստանում, գեղեցկանում, բոլորին պարմացնում և հպարտությամբ են լցնում մեր սրտերը:


Հայաստանը ողջ աշխարհում ցրված հայ ժողովրդի զավակների համար իսկական հայրենիք է, մայր խանդակաթ: Նույնպես, սիրելի հավատացյալներ, մեր Եկեղեցին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, Ս. Թադեոս և Ս. Գրիգոր Լուսավորչի հրաշալի տեսիլքով հիմնված, ամբողջ հայ ժողովրդի միության կռվանն է և վեմը. այդ վեմի վրա է խարսխված մեր հավատքը, այդ վեմի վրա են մեր տեսիլքները կենդանություն և կերպարանք ստանում, և այդ վեմի վրա հայ ժողովուրդը, սկսած իր հայրապետներով, ոխտ է կնքում հավատարիմ մնալու և ծառայելու անցյալի մեր մշակութային և հոգևոր հրաշալի ժառանգությանը:

Այսօր տոնական օր է՝ հայ ժողովրդի վերածննդի, ապահովության և խաղաղության ձգտումների իրագործման օրը: Վաղվա սեմի առջև կանգնած՝ ոխտենք լինել հավատարիմ զավակները հայկյան ցեղի և ծառայել մեր հայրենիքին ու նրա վերելքին՝ բոլորանը վեր սրտով և գիտակցությամբ: Մենք հայ ժողովրդի բախտավոր որդիներն ենք, որ ապրում ենք մեր սեփական հողի վրա խաղաղ ու երջանիկ կյանքով:

Երկու-երեք սերունդ առաջ ո՞վ կարող էր երազել այսպիսի վիճակ: Կարողացեք խաչատուր Աբովյանի, Նորիմյան Հայրիկի երկերը ընտանիքի, հայրենիքի, հողի արժեքների մասին. ինչ երազներով էին նրանք ապրում և ինչպիսի հույսեր էին փայփայում, որ մի օր ապատ երկիր ունենային:

Թող ծաղկի ու բարգավաճի մեր երկիրը, և թող բազմանան մեր զավակները՝ Աստուծո օրհնությամբ: Թող անսասան մնա մեր հայրենիքը և հաջողությունից հաջողություն սլանա, և մենք ապրենք մեր Եկեղեցու աստվածային շնորհների տակ այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ



ԿԱՆԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԸ

Վերջին երեք տասնամյակների ընթացքում բազմիցս քննարկվել է կանանց քահանայագործման հարցը և տարբեր դավանությանց պատկանող եկեղեցիների միջև բազմաթիվ վեճերի դուռ բացել: Մինչև կաթողիկե և ուղղափառ եկեղեցիները այս հարցի առնչությամբ մեջտեղ են դնում իրենց վճռական «ոչ»-ը՝ մերժելով դուպլո չափով իսկ շեղվել եկեղեցու սահմանած ավանդական կարգից, Բողոքական և Անգլիկան տարբեր եկեղեցական կազմակերպություններ վերանայման են ենթարկում կանանց ձեռնադրությանը վերաբերող արգելքը: Նրանցից շատերը, նկատի ունենալով այսպես կոչված կանանց ազատագրման (emancipation) հարցը մեր ժամանակաշրջանում, երբ կանայք կյանքի բոլոր ասպարեզներում տղամարդկանց կողքին համահավասար դիրք են գրավել, երբ այլևս վերացել է տղամարդու և կնոջ միջև ամեն կարգի խտրականություն, հարց են տալիս, թե ինչո՞ւ կանայք եկեղեցում էլ չունենան ցարդ միայն տղամարդկանց վերապահված քահանայագործելու իրավունքը. չէ՞ որ Պողոս առաքյալն ասած է. «Խտրություն չկա ո՛չ հրեայի և ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի և ո՛չ ապատի, ո՛չ արուի և ո՛չ եգի. որովհետև դուք ամենքդ մեկ եք ի Քրիստոս Հիսուս» (Գաղատ. Գ 28):

1975 թվականին Քենթրբերիի արքեպիսկոպոս դկտ. Կոզանը հայտարարում էր. «Անգլիկան շրջանակում թեև դանդաղ, սակայն հետևողականորեն այն համոզումն է տարածվում, որ սկզբունքային տեսակետից կանանց քահանա ձեռնադրման համար գոյություն չունեն հիմնական դժվարություններ»¹: Իսկ բողոքական որոշ հատվածներ

արդեն վաղուց լուծել են վերոհիշյալ հարցը և կանանց անարգել շնորհում են քահանայական կարգ:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որ իր լայնախոհությամբ միշտ հայտնի է եղել և, որպես այդպիսին, ճանաչում գտել և գնահատվել է նույնիսկ Եվրոպայի ռեֆորմատորների կողմից, թեև կանանց հատկացրել է պատշաճ և բարձր դիրք եկեղեցական կյանքում, սակայն երբեք չի փորձել քահանայական ձեռնադրություն տալ նրանց: Դեռևս քրիստոնեության սկզբնական շրջանում ունեցել ենք կին սրբեր և նահատակներ, ինչպես օրինակ՝ Ս. Սաղոմիստ կույսը, Հռիփսիմյանք, Գայանյանք, Ս. Շուշանը և այլն: Ավելի ուշ շրջանում ու մինչև այսօր էլ ունեցել ենք և ունենք հայ կանայք, որոնք մեծ նպաստ են բերել հայ ժողովրդի կրոնական դաստիարակությանը: Այս մասին հանձնարարում ենք կարդալ «Էջմիածին» ամսագրում պարբերաբար հրատարակվող Վիկտոր Պետրոսյանցի հոդվածաշարը:

Այսօր Հայ Եկեղեցին, միացած պատմական քույր եկեղեցիների հետ, հակառակ իր ազատախոհ ոգուն, արգելում է կանանց քահանայագործել: Արգելքը ոչ այնքան ավանդական է, որքան աստվածաբանական հիմք ունի, և մենք այստեղ կփորձենք պարզել Հայ Եկեղեցու տեսակետը այս առնչությամբ:

Ա—Կինը Հին Կտակարանում

Հին Կտակարանում կնոջ ստեղծման մասին Ծննդոց գրքի Յափեթական պատումը խորհրդանշական կերպով հաղորդում է, որ նա տղամարդու կողոսկրից է ձևավորված²:

¹ L'Osservatore Romano, 21. օգոստոս 1976:

² Տե՛ս Ծննդոց Բ, 21—23:

Սրանով ցույց է տրվում տղամարդու և կնոջ մերձավորությունը միմյանց հետ, ինչպես նաև կնոջ անհրաժեշտությունը որպես հարմարագույն կենակից մարդուն: Նախամարդու անկումից հետո կինը տղամարդու կողմից կյանք³ է կոչվում, որովհետև, ինչպես Ս. Գիրքն է վկայում, «Նա մայր է ամենայն կենդանյաց»⁴:

Հարկ է նկատի ունենալ, որ կինը Հին Կտակարանում տղամարդուն համահավասար իրավունք չունի: Հենց սկզբից այս պարագան հայտնի է դառնում, երբ, որպես հետևանք պատվիրականության, կնոջ համար Աստծուց սահմանվում է դեկավարվել ամուսնու կողմից: Այստեղ ցույց է տրվում նաև ամուսնու և կնոջ անքակտելի միասնությունը որպես մի մարմին՝ գլուխ ունենալով տղամարդը: Հետագայում սակայն, հատկապես բավականության ժամանակաշրջանում, կինը դառնում է տղամարդու անձնական ունեցվածքը, սեփականությունը: Ամուսնու իրավունք է վերապահվում լքելու իր կնոջը: Այնուամենայնիվ շնորհալի, բարի և ժրջան կինը բարձրացվում և գովաբանվում է: Առակաց գրքում գեղեցկորեն արտահայտված է այս պարագան⁵:

Հին Կտակարանում կինը թեև բացառիկ դեպքերում, սակայն և այնպես կարողանում է տիրանալ բարձր դիրքի, ինչպես Դեբորան⁶: Կնոջ իրավունք է տրվում մասնակցելու լուծիքին⁷: Նա էլ Աստծու ուխտի մեջ է⁸, սակայն նա չի կարող քահանայագործել, մինչդեռ Պաղեստինի հարևան ազգերի մոտ հանդիպում ենք քրոնիկներին:

Սա նշանակում է, որ նախաքրիստոնեական շրջանը, ստորագնահատելով կանանց, դեռևս ծանոթ չի եղել աստվածային արդարության ու սիրո օրենքին, թեև երբեմն այդ մասին դրական ակնարկություններ են արվում, ինչպես օրինակ՝ Աստված մարգարեի միջոցով հայտնում է, որ մի կուսից է ծնվելու խոստացված Մեսիան⁹: Նույն ժամանակաշրջանում հանդիպում ենք նաև մարգարեներին հավասարապոր մարգարեուհիներին ինչպիսիք են Միրյամն ու Հուլյան:

Բ—Կինը Նոր Կտակարանում

Նոր Կտակարանում Քրիստոս խախտում է կանանց նկատմամբ հաստատված ավան-

դական սահմանափակումները: Նա ուղարկության է արժանացնում նրանց, այցելում է և ուսուցանում¹⁰, պրոպի է բռնվում նրանց հետ¹¹, բժշկում է և կատարում նրանց խնդրանքները¹²: Քրիստոս նույնիսկ հանդես է գալիս որպես կանանց պաշտպան և դրվատող. նա ձաղկում է, օրինակ, դպիրներին, որոնք «ուտում են այրիների տները»¹³. Գովում է այն այրի կնոջը, որը, հակառակ իր չքավորությանը, երկու լուծա է գցում տաճարի գանձանակի մեջ և, Քրիստոսի վկայությամբ, ավելի շատ տված է լինում, քան մեծահարուստները¹⁴, պաշտպանում է օրենքով դատապարտելի շնացող կնոջը¹⁵, ընդունում է ընկերությունից վտարված մեղավորին և գնահատում նրա հավատքը, երբ վերջինս Քրիստոսի նկատմամբ իր սերն ու մեծաբանքն արտահայտելու համար, ի վարման փարիսեցու, յուդով օծում է Տիրոջ ոտքերը¹⁶ և արժանանում նրա գնահատանքին, որ հետևյալ սեղմ ու սրտառու խոսքերով է արտահայտված.

«Դա, ինչ որ կարող էր, արեց. առաջուց խնկավետեց իմ մարմինը ի նշան պատանքվելու: Ճշմարիտ եմ ասում ձեզ, ուր էլ քաղովի այս Ավետարանը ամբողջ աշխարհով մեկ ինչ որ նա արեց, այդ ևս պիտի պատմվի նրա հիշատակի համար»¹⁷:

Հիսուս նաև վերանայման է ենթարկում անոթության վերաբերյալ Մովսիսական օրենքը և ի նպաստ կնոջ վերացում է տղամարդու ունեցած ապահարպան անելու իրավունքը¹⁸: Մյուս կողմից արհամարհում է նա այն օրենքը, ըստ որի կանանց արյունահոսությունը անմաքրություն էր համարվում, այդ հիվանդությամբ տառապող կնոջը նա ասում է. «Քաջալերվի՛ր, դուստր, քո հավատքը քեզ փրկեց»¹⁹:

Քրիստոսի հետ շրջում էին նաև բարեպաշտ կանայք, որոնցից ոմանց նա բժշկել էր չար ոգիներից և հիվանդություններից: Ղուկաս ավետարանիչը թվում է նաև մի քանի կանանց անուններ՝ Մարիամ, որ կոչվում էր Մագդաղենացի, Հովհաննա՝ Հերովդեսի վերակացուի՝ Քուլայի կինը, Հուլան ու «շատ ուրիշներ, որոնք իրենց ունեցվածքից

¹⁰ Ղուկաս Ժ 38—40:

¹¹ Հովհ. Դ 6—27:

¹² Մրկ. Ա 29:

¹³ Մրկ. ԺԲ 40:

¹⁴ Մրկ. ԺԲ 41—44:

¹⁵ Հովհ. Ը 3—11:

¹⁶ Ղուկաս Է 36—50:

¹⁷ Մրկ. ԺԴ 8—9:

¹⁸ Մրկ. Ժ 2—11: Մտք. ԺԹ 3—9:

¹⁹ Մտք. Թ 20—22:

³ Անդ. Գ, 20:

⁴ Անդ. Գ, 20:

⁵ Տե՛ս Առակք ԺԱ 16, ԺԲ 4, ԼԱ 10—31, ԺԸ 22:

⁶ Դատ. Դ 4:

⁷ Ա Թագ. Ա 4:

⁸ Բ Օրինաց ԻԹ 10:

⁹ Ես. Է 14:

մատակարարում էին նրանց»²²։ Նույնիսկ Տիրոջ խաչելության ժամանակ ներկա էին նրան հավատացող և օգնող կանայք։ Այս մասին Մարկոսի Ավետարանում կարդում ենք. «Կային և կանայք, ովքեր նայում էին հեռվից։ Նրանց մեջ էին Մարիամ Մագդաղենացին, կրտսեր Հակոբի և Հովսեփ մայրը՝ Մարիամ, ինչպես նաև Սողոմեն, ովքեր, երբ Հիսուսը Գալիլիայում էր, նրա ետևից էին շրջում և ծառայում էին նրան. կային նաև շատ այլ կանայք, ովքեր նրա հետ Երուսաղեմ էին ելել»²³։

Այս բոլոր մեջբերումները լավագույն փաստորեն են այն բանի, որ մեր Տերը Հիսուս Քրիստոս իր երկրավոր կյանքի ընթացքում երբեք չստորադասեց կանանց, այլ, ընդհակառակն, նրանց ևս չվազցավ իր ծառայությունը։ Հետագայում էլ, առաքյալների քաղաքական ժամանակ և եկեղեցու սկզբնական կյանքում, կանայք երբեք չանտեսվեցին, նրանք նույնպես իրենց կարևոր նրպաստը բերեցին կրոնի տարածման և ամրապնդման գործին։

Գ—Կինը առաքելական քարոզության և քրիստոնեության տարածման սկզբնական ժամանակաշրջանում

Գործք Առաքելոցում հանդիպում ենք Հիսուսի մորը՝ Մարիամին, և այլ կանանց, ովքեր «հարատև աղոթքի մեջ էին» առաքյալների հետ²⁴։ Նույնիսկ Մարկոսի մայրը՝ Մարիամը, իր տունը տրամադրում էր Երուսաղեմի նորակալի համայնքի հավաքությունների և պաշտամունքների համար²⁵։ Նորադարձ քրիստոնյաների մեջ կային բազմաթիվ կանայք, շատերը նույնիսկ՝ երեխաների դասակարգից²⁶։ Պողոս առաքյալը, որ թյուրիմացությամբ նկատվում է կանանց իրավունքները սահմանափակող անձ, հարց է տալիս՝ «Միթե իշխանություն չունենք մեզ հետ մանածելու քույր-կանանց, ինչպես որ մյուս առաքյալները և Կեփասը անում են»²⁷։ Քույր անվանումը ընդհանրացած էր այդ ժամանակ եկեղեցու մեջ. մի ուրիշ տեղ էլ²⁸ նույն առաքյալը օգտագործում է այդ բառը։ Թեև Պողոս առաքյալի նման նաև Պետրոս առաքյալը կանանց հնազանդություն է քարոզում

իրենց ամուսինների հանդեպ²⁹, սակայն թե՛ Պողոս և թե՛ Պետրոս առաքյալները այդ հնազանդությունը հարաբերում են եկեղեցու՝ Քրիստոսի հանդեպ ունեցած հնազանդության հետ, որովհետև, մյուս կողմից, տղամարդկանց վրա էլ պարտավորություն էր դրվում սիրելու իրենց կանանց, ինչպես Քրիստոս սիրում էր եկեղեցին։ Այս առթիվ Պետրոս առաքյալը ավելացնում է. «Նույնպես և տղամարդիկ թող իմաստությամբ ապրեն նրանց հետ, հարգեն կանանց, իբրև դյուրաբեկ, անոթի, իբրև կյանքի շնորհի ժառանգակիցներին»³⁰։

Կանայք բարեսիրական գործունեություն էին ծավալում, ինչպես Այծեմսիկը³¹, նրանք սպասարկում էին եկեղեցու մեջ, ինչպես Փիբեն³² որպես սարկավագուհի, մարգարեանում էին, ինչպես Փիլիպպոս սարկավագի չորս կույս աղջիկները³³։ Պողոս առաքյալը խոսում է նույնիսկ կանանց մարգարեանալու մասին³⁴։ Սակայն երբ մի քիչ հետո միևնույն թղթում³⁵ նա կանանց լուծություն է սահմանում, դա վերաբերում է ոչ մարգարեական խոսքեր կատարողներին և նրանց, ովքեր քրիստոնեական մեծ հավաքությունների ժամանակ ի պաշտոնե կոչված չէին քարոզելու և ուսուցանելու։ Իսկ հետագայում Տիմոթեոսին ուղղած թղթում³⁶, երբ Պողոս առաքյալը կին արարածին կտրականապես արգելում է ուսուցանելը և սրան իբրև պատճառ բերում է այն, որ սկզբում Ադամը ստեղծվեց և ապա՝ Եվան, և Ադամը չխաբվեց, այլ կինը խաբվեց և հանցանք գործեց, նա նկատի է ունենում Ադամ-Եվայի պատկերով Քրիստոս-եկեղեցի փոխհարաբերությունը։ Եվային մեղքի մղող չարը փորձեց Քրիստոսին էլ, սակայն նրան չկարողացավ հաղթել, ինչպես հաղթած էր Եվայի միջոցով Ադամին, որովհետև Քրիստոս խաչվեց, և այդպիսով «ողողացա թշնամին ընդ յայտնի սրբոյ խաչին» (Շարական)։ Այս մասին անորոշառնալու ենք քիչ հետո։

Քրիստոնեության սկզբնական շրջանում հանդիպում ենք բազմաթիվ սարկավագուհիների, որոնք այդ պաշտոնի համար եպիսկոպոսներից ձեռնադրություն ունեին։ Այս մասին Մոսկվայի Ռուսաց Պատրիարքարա-

²⁷ Ա. Կորնթ. ԺԱ 3, 10։ Կող. Գ. 18, Եփես. Ե 22, Ա. Պետր. Գ 1։

²⁸ Ա. Պետր. Գ 7։

²⁹ Գործք. Թ 36։

³⁰ Հռոմ. ԺԶ 1։

³¹ Գործք. ԻԱ 9։

³² Ա. Կորնթ. ԺԱ 5։

³³ Անդ. ԺԴ 34։

³⁴ Ա. Տիմ. Բ 11—15։

²⁰ Ղուկ. Ը 2—3։

²¹ Մրկա. ԺԵ 40—41։

²² Գործք. Ա 14։

²³ Անդ. ԺԲ 12։

²⁴ Անդ. ԺԵ 4, 12, 34։

²⁵ Ա. Կորնթ. Թ 5։

²⁶ Հռոմ. ԺԶ 6։

նի կողմից հրատարակվող հանդեսում հետևյալ վկայության ենք հանդիպում. «Սարկավագուհիների գլխավոր պարտականությունն էր քրիստոնեական հավատքի հիմնական սկզբունքները և քրիստոնեական բարոյագիտությունը ուսուցանել այն կանանց, ովքեր պատրաստվում էին իրենց մկրտությանը: Նրանց պարտականությունն էր նաև մկրտության ժամանակ քահանային օգնելը: Սարկավագուհիների նշանակումը կատարվում էր հատուկ ծիսակատարությամբ (Առաքելական կանոնք, Գիրք 8, գլ. 19—20): Դա մի ձեռնադրություն էր, որի ընթացքում աղոթք էր արվում, որպեսզի Սուրբ Հոգին իջնի թեկնածուների վրա. եպիսկոպոսը իր ձեռքերն էր դնում նրանց վրա, ինչպես նաև՝ եմփիորոնը: Այնուհետև ձեռնադրված սարկավագուհիների վրա ուրարն էր վետեղվում: Նրանք ձեռնադրությամբ դասվում էին կղերականների շարքը և նրանց նման, իբրև եկեղեցու սպասավորներ, իրենց ապրուստի համար ստանում պետք եղածը: Հատկանշական են սարկավագուհիների ձեռնադրության ընթացքում եպիսկոպոսի արտասանած աղոթքի հետևյալ խոսքերը. «Սուրբ և ամենավոր Աստված, Դու որ... ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց էլ Քո Սուրբ Հոգու շնորհն ու պարգևն են բաշխում, այժմ էլ, ով Տեր, Դու ինքդ ուղ դարձրու Քո այս աղայիսներին ու կոչիր նրանց Քո գործի ծառայությանը և առաքիր նրանց վրա Քո Սուրբ Հոգու առատաբերությամբ պարգևները»: Սուրբ հաղորդությունից հետո սարկավագուհին սկիհով իրավունք չունի խորանից դուրս գալու՝ ուրիշներին Ս. հաղորդություն տալու համար. ձեռնադրության աղոթքների մեջ երբեք չի հիշվում, որ նա «սուրբ և անարատ խորհուրդների սպասարկության» է կոչվել, մի բան, որ հիշվում է սարկավագի ձեռնադրության աղոթքների մեջ»³⁵:

Մինչև այժմ ցույց տրվեց, թե կանայք երբեք ստորադաս դիրք չեն ունեցել քրիստոնեական կրոնում: Մեկ դեպքում միայն նրանք անտեսվել են, այդ էլ քահանայագործության պարագայում: Այս առթիվ ոչ միայն Պողոս առաքյալի արգելքն է ցցվում մեր դեմ, այլև առաքելական կանոններն ու նվիրականացած ավանդությունները: Առաքելական կանոններում կարդում ենք. «Մեր վարդապետն ու Տերը՝ Հիսուս ինքն իսկ, երբ մեզ տասներկուսիս առաքեց ուսուցանելու ժողովուրդներին և հեթանոսներին, ոչ մեկ ժամանակ չփորձեց կանանց էլ ավետարանելու ուղարկել, հակառակ որ նրանք թվով բավական շատ էին... Եթե պետք լիներ, որ կանայք

էլ ուսուցանեին, Քրիստոս հենց ինքն առաջինը պիտի հրամայեր նրանց, որ մեկ հետ միասին ժողովուրդին դաստիարակեն» (Առաքելական կանոնք, Գիրք 4, գլուխ 6): «Երբ մենք վերև գրվածի համաձայն կանանց արգելել ենք ուսուցանել, այն ժամանակ մարդ ինչպես կարող է, բնությանը հակառակ, արտոնել նրանց, որ սրբական արարողությունները կատարեն» (Առաքելական կանոնք, Գիրք 4, գլուխ 9)³⁶: Այստեղ ուսուցանել ասելով պետք է հասկանալ հրապակային քարոզություն կատարել, «իշխանությամբ խոսել», որի պատճառով նույնիսկ Քրիստոս էլ բախվեց ժողովուրդի հետ, երբ նրան հարց էին տալիս. «Ասա՛ մեկ, ի՞նչ իշխանությամբ ես դու անում այդ, կամ ո՛վ է, որ տվեց քեզ այդ իշխանությունը»³⁷:

Դ—Կանանց քահանայագործման արգելքի հիմնական պատճառները

Վերևում շարադրված ներածականից հետո՝ կնոջ քահանայագործման արգելքները կարելի է հիմնավորել հետևյալ կարգով.

1. Քրիստոս իր 12 աշակերտներին ընտրելիս ոչ մի կնոջ նրանց կազմում չընդունեց: Նա ասաց. «Ես ձեզ ընտրեցի և ձեզ կարգեցի»³⁸: Այդ պատիվը, ինչպես առաքյալն է ասում, «ոչ թե որևէ մեկն ինքն իրենից է առնում, այլ՝ նա, ով Աստծուց է կանչված, ինչպես որ՝ Ահարոնը»³⁹: Այդ պատիվը կայանում է Քրիստոսից ստացված իշխանության մեջ՝ խորհուրդները կատարելու, պիղծ ոգիները հանելու, մեղքերը կապելու և արձակելու, Ավետարանը քարոզելու⁴⁰: Նրանք, ովքեր թույլատրում են կանանց քահանայությունը, հետևյալ կերպ են պատճառաբանում այդ. «Քրիստոս ապրեց իրեական չփռավայրում, որտեղ կինը այն ժամանակ ստորագնահատված էր. հետևաբար Քրիստոս էլ, հարմարվելով այդ միջավայրին, միայն տղամարդկանց ընտրեց: Մենք արդեն վերևում տեսանք, թե Քրիստոս խախտեց կնոջ նկատմամբ հրեաների դրած օրենքներն ու ավանդությունները: Մյուս կողմից, եթե ընդունում ենք, որ մեր Տերը հանուն ճշմարտության և արդարության նույնիսկ խաչ բարձրացավ, մի՞թե ճշմարտության և արդարության իշխանը պիտի վանար արդար լինել նաև կանանց նկատմամբ: Եթե հարմար լիներ կանանց քահանայագործությունը, Սուրբ Մա-

³⁵ Անդ. էջ 55—56:

³⁷ Դուկա. Ի 2:

³⁸ Հովհ. Ժե 16:

³⁹ Եբր. Ե 4:

⁴⁰ Մրկա. 2 7—12, Մտք. Ժ 8, ԻԸ 18—20, ԺԸ 18:

³⁵ Stimme der Orthodoxie, Mai 1981, էջ 50:

րիամ Աստվածածնից ավելի արժանավոր մեկը կարող էր գտնվել: Սակայն Հիսուս նրան էլ չտվեց այդ իշխանությունը, հետագայում նույնիսկ առաքյալներն էլ այդ բանը չարեցին, թեև պետք է ընդունենք, որ նրա իսկական Աստվածամայր լինելու պատիվը ավելի բարձր է խորհրդանշական քահանայությունից:

2. Առաքելական շրջանը նույնպես չի կարող մեզ մի նպաստավոր փաստ տալ կանանց քահանայագործության մասին: Այստեղ էլ ժամանակակից մտայնության կատարած դերը բացառվում է: Պողոս առաքյալն ասում է. «Խտրություն չկա ո՛չ հրեայի և ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի և ո՛չ ազատի, ո՛չ արուի և ո՛չ էգի. որովհետև դուք ամենքդ մեկ եք ի Բրիստոս Հիսուս»⁴¹: Այս հատվածը առնչվում է այն միության, հավասարության և ներդաշնակության հետ, որով օժտված են Բրիստոսով մեղքի դատապարտությունից փրկվածները: Այս հատվածը մեծագույն ապացույցն է նաև Պողոս առաքյալի ունեցած ըմբռնումների տղամարդու և կնոջ հավասարության վերաբերյալ, իսկ երբ նա կնոջը լծություն և հնազանդություն է պատվիրում, նկատի է առնում նրա քահանայագործության և Բրիստոս-եկեղեցիի հարաբերության հարցը:

Հոգեգալստյան ժամանակ Ս. Հոգին թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց վրա իշավ, սակայն բոլորի միջից միայն «Պետրոսը, տասնմեկի հետ վեր կենայով, բարձրացրեց իր ձայնը և խոսեց» նրանց»⁴²:

Մենք տեսանք, որ կանայք էլ շրջում էին առաքյալների հետ և իրենց մասնակցությունը բերում ավետարանական գործին: Այդ գործը կատարվում էր ոչ միայն Հրեաստանում, այլև այն քաղաքներում, որտեղ թափանցած էր հունա-հռոմեական քաղաքակրթությունը և որտեղ հետևաբար, եբրայական մտայնությանը տուրք չէր կարող տրվել: Այդ քաղաքներում և շրջաններում կային բավաթիվ հեթանոսական տաճարներ աստվածուհիներին նվիրված, որտեղ պաշտոնավարում էին քրոմոսիներ: Հեթանոսությունից դարձած քրիստոնյաներին բնավ խորթ պիտի չլիներ, եթե առաքյալներն իրենց համայնքների համար կին քահանաներ ձեռնադրեին: Սակայն այդ մեկը չարվեց, որպեսզի չաղարտվի Բրիստոսից ավանդված նոր քահանայության կարգը, թեև ուրիշ հարցեր, ինչպես թվատության հարցը, պարտադիր չնկատվեցին նորադարձ քրիստոնյաների համար:

3. Ուղղափառ եկեղեցում քահանան լոկ մի

ծիսակատար կամ պարզ պաշտոնակատար չէ, այլ նա, առաքելական հաջորդականությամբ և իշխանությամբ, հոգևոր մի կարգ ունի՝ ներկայացնել Բրիստոսին երկրի վրա, հատկապես սուրբ պատարագի խորհրդի ընթացքում: Այս իմաստով էլ նա աղաչում է Բրիստոսին. «Բաականացո՛ւ՝ պիս վորութեամբ Սուրբ Հոգւոյդ, որ պզցցեալ եմ պահանայական շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս և քահանայագործել, պքո անարատ մարմինդ և պայտուական արինդ»⁴³: Թեև խորհրդանշաբար քահանան է պոհաբերվողը, սակայն խորքում Բրիստոսն է, որ «մատուցանէ, մատչի, ընդունի և տալ»⁴⁴: Յուրաքանչյուր խորհրդանիշ ֆիզիկական կամ շոշափելի նմանություններով ներկայացնում է ինչ-որ աներևույթ խորհուրդ. քահանան պատարագելիս, որպես երեկի նրմանություն, հանդես է գալիս Բրիստոսի փոխարեն: Այդ նմանությունը ֆիզիկականորեն համապատասխանում է մարդայնալ Աստվածորդուն, որովհետև նա էլ իր հերթին խորհրդանշելով Աստված-ժողովուրդ հարաբերությունը, որպես փեսայի ու հարսի միջև եղած մտերմություն, բնականորեն ունի փեսայի կերպարանք:

4. Երրորդ կենդ ճիշտ ըմբռնելու համար պետք է խոսել նախ կնոջ և տղամարդու տարբերության մասին և ապա մատնանշել, թե ինչու մեր Տերը Հիսուս, որպես մարդացյալ Աստվածորդի, աշխարհին հայտնվեց տղամարդու կերպարանքով:

Կնոջ և տղամարդու տարբերությունը ավելի սեռական տարբերություն է: Կին լինել նշանակում է ունակություն ունենալ մայր լինելու, իր մարմնի մեջ կենդանի պտուղ կրելու, այն աճեցնելու և լույս աշխարհի բերելու: Կնոջ սույն դերը նման է հողի կամ երկրի կատարած դերին, դրա համար էլ հողը կոչվում է նաև «մայր»: Բացի դրանից, նախամարդը կոչվում է հողածին, քանի որ Սուրբ Գիրքը վկայում է, որ Աստված նրան հողից ձևավորեց⁴⁵: Սրան հակառակ, տղամարդ լինել նշանակում է գլուխ լինել, այսինքն որպես սկզբունք, կնոջը պտղաբերության մղել: Տղամարդ և կին. երկու համահավասար էակներ, որոնք տարբեր պարտականություններ ունեն, մեկը մյուսի դերը չի կարող կատարել: Եվ այս կարգավորությունը աստվածային ստեղծագործությամբ է պայմանավորված:

Ֆիզիկականորեն տղամարդու և կնոջ մի-

⁴¹ Գաղատ. Գ 28:

⁴² Գործք Բ 1—14:

⁴³ Պատարագամատույց, Վաղարշապատ 1880, էջ 11:

⁴⁴ Անդ, էջ 11:

⁴⁵ Ծննդ. Բ 7:

ացումով է պայմանավորված ծնունդը մարդկային մի նոր էակի: Երբայական մտածելակերպը այդ միացման համար օգտագործում է յաղա բառը, որ նշանակում է ճանաչել, օրինակ՝ Ադամը ճանաչեց իր կնոջը՝ Եվային...⁴⁶: Այդ բառը ոչ թե պարզ մի ճանաչում է արտահայտում, այլ՝ մարդկային լեզվով անբացատրելի մի ճանաչում, որով գոյանում է ներաշխարհային մի եզակի մտերմություն, այն աստիճան, որ «եղիցին երկուքանս ի մարմին մի»: Քրիստոնեական կրոնն էլ այդ ամուսնական միությունը հասկանում է որպես մի մարմին, որի գլուխը տղամարդն է, որովհետև կնոջ արգանդում ձևավորվում է մարմինը և մարմնական մասը կարելի է ասել, որ կնոջն է վերաբերում: Դրա համար էլ Պողոս առաքյալն ասում է. «Նույն ձևով և մարդիկ պարտավոր են սիրել իրենց կանանց, ինչպես իրենց մարմինները. ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում»⁴⁷:

Աստված կոչում է մարդկությունը միության մեջ իր հետ լինելու. դրա համար էլ նա ուխտ է կապում մարդկանց հետ, որպեսզի ուխտի պահպանությամբ նրանք ճանաչեն հավիտենական կյանքի աղբյուրը՝ Աստծուն: Միության այդ ուխտը խորհրդավորաբար մարգարեների կողմից ներկայացվում է որպես փեսայի և հարսի միջև գոյություն ունեցող մտերմ սեր: Հին Կտակարանում «Երգ երգոց» գիրքը դրա մեծագույն վկայությունն է: Այն հեղինակություն է վայելում նաև քրիստոնեական եկեղեցում, և նրանից ընթերցումներ են կատարվում արարողությունների ժամանակ: Հարսը, հակառակ իր հաճախակի անհավատարմությանը, նորից վայելում է Աստծու, այսինքն՝ փեսայի գթասրտությունը: Նմանապես Աստվածորդին ներկայացվում է որպես փեսա: Այդ բանը Քրիստոս ինքն էլ է վկայում: Երբ փարիսեցիները հարց են տալիս նրան, թե ինչո՞ւ իր աշակերտները պաս չեն պահում, նա պատասխանում է. «Միթե կարելի է, որ հարսանքավորները պաս պահեն, երբ փեսան նրանց հետ է»⁴⁸: Իսկ Հովհաննես Մկրտիչն ասում է. «Դուք ինքներդ եք վկայում ինձ, որ ձեզ ասացի՝ ես Քրիստոսը չեմ, այլ ուղարկված եմ նրա առաջից: Ով հարս ունի, նա՛ է փեսան. իսկ փեսայի բարեկամը, որ կանգնած լսում է նրան, մեծապես ուրախանում է փեսայի ձայնի համար. արդ, այս ուրախությունը, որ իմն է, կատարյալ է: Պետք է, որ նա աճի, իսկ

ես՝ նվազեմ»⁴⁹: Այս մասին կարդում ենք նաև Հայտնության գրքում. «Ալելուիա՛. քանզի թագավորեց մեր ամենակալ Աստվածը: Ուրախանանք և ցնծանք ու փառք տանք նրան քանի որ հասավ Գառան հարսանիքը, և կինը՝ նրա հարսը, պատրաստվեց, ու նրան տրվեց հագնելու սպիտակ, մաքուր և լուսափայլ բեհեզ. և այդ բեհեզը սրբերի արդարությունն է»⁵⁰: Պողոս առաքյալը գրում է. «Որովհետև ձեզ նշանեցի մի մարդու՝ որպես մի սուրբ կույս՝ Քրիստոսին ներկայացնելու համար»⁵¹: Ինչպես երևում է, նա էլ Քրիստոսին նկատի ունի որպես փեսայի:

Մարդու անկման հետևանքով լքված և մեղքերի մեջ ընկնված հարսը մաքրապարզվում է Քրիստոսի կողմից և դառնում «հարսնացյալ ս. եկեղեցի Քրիստոսի»: Այս մասին արևելա-սիրիական եկեղեցու ծիսական տեքստերում հանդիպում ենք հետևյալ պատկերին. «Նա (Քրիստոս) զգեստավորեց քեզ հրաշալի և անշեշ լույսի հանդերձով, և քո գլուխը պսակեց փառահեղ ու ճառագայթող թագով»: «Ո՛վ եկեղեցի, թագավորի սուրբ հարս, չկա գեղեցկություն, որ կարողանա չափվել քո գեղեցկության հետ»⁵²:

Ինչպես կինը գոյություն է առել Ադամի կողոսկրից և դրա համար էլ կոչվում է իր ամուսնու կողակիցը, այդպես էլ եկեղեցին հիմնված է Քրիստոսի կողից բխած վտակից, որի մասին մեր Շնորհալի հայրապետն ասում է. «Կրկնավտակ կողին աղբերքը վեկեղեցի իւր հաստատի»⁵³: Կողակից լինել նշանակում է մտերմության և միության մեջ լինել: Նախաստեղծ տղամարդու և կնոջ կողակցությունը միության մի խորհուրդ էր, որին անդրադառնալով առաքյալն ասում է. «Այս խորհուրդը մեծ է, բայց ես ասում եմ Քրիստոսի և եկեղեցու վերաբերյալ»⁵⁴: Ուրեմն Ադամն ու իր կողակիցը աստվածային տնօրինությամբ իրենց անմեղության մեջ միացան: Թեև նրանք կորցրին իրենց անարատությունը, սակայն շնորհով արժանի եղան ունենալու իրենց հաջորդները, բայց նրանց ժառանգ տվեցին մեղքը: Երկրորդ Ադամը հաստատեց և հաստատում է իր կողակցին՝ եկեղեցուն, անարատության մեջ, որովհետև նա «սիրեց եկեղեցին և իր անձը մատնեց նրա համար, որ այն սրբացնի ա-

⁴⁹ Հովհ. Գ 28—30:

⁵⁰ Հայտ. ԺԹ 7—8:

⁵¹ Բ Կորնթ. ԺԱ 2:

⁵² Jacob Vellian (Iohannes Madey-Die Kirche in der Sticht der Christenheit des Ostens und des Westens) էջ 99:

⁵³ Ժամագիրք:

⁵⁴ Եփես. Ե 32:

⁴⁶ Ծննդ. Դ 1. գրաբարն ունի այստեղ «ենմոս», այսինքն՝ մտածել բայը, մինչդեռ եբրայեցիներում «ճանաչել» է:

⁴⁷ Եփես. Ե 28:

⁴⁸ Մկլկ. Բ 19:

վազանի մաքրությամբ՝ խոսքով»⁵⁵: Այդ խոսքը ապականության չենթարկվող սերմն է՝ Աստծու կենդանի և մշտնջենական խոսքը⁵⁶:

Պողոս առաքյալը տղամարդու և կնոջ հարաբերությունները համեմատելով Քրիստոսի և եկեղեցու միջև եղածի հետ՝ արդարորեն հայտարարում է, թե դա մի մեծ խորհուրդ է (Mysterium magnum) և այդպիսով պետք է հասկանալ նաև մարդկանց անդամ լինելը Քրիստոսի մարմնի. «Քանզի անդամներ ենք նրա մարմնի՝ նրա մարմնից և ոսկորներից»⁵⁷, կամ «և դուք մարմին եք Քրիստո-

սի և անդամներ նրա անդամներից»⁵⁸: Քրիստոս, որպես փեսա, իր մարմինը պատարագեց՝ ասելով «Առեք, կերեք, այս է մարմին իմ»: Նա իր անարատ մարմնով, իր մարմնի անարատության մեջ հաստատեց իր կողակցին: Նմանապես և քահանան, որպես խորհրդանիշը երկնավոր սուրբ Փեսայի, «հարսնացյալ սուրբ եկեղեցին» զոհագործման խորհրդով միացնում է Փեսայի մարմնին: Դրա համար էլ անհրաժեշտ է, որ նա արտաքինապես փեսայի կերպարանքով հանդես գա: Եվ սա մի «մեծ խորհուրդ» է:


ՀԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԸԼԸՆՃՅԱՆ


⁵⁵ Եփես. Ե 26:

⁵⁶ Ա Պետրոս Ա 23:

⁵⁷ Եփես. Ե 30:

⁵⁸ Ա կորնթ. ԺԲ 27:





ՀԱՅՐԵՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԳԻՉԸ

(Գևորգ Բաշինջաղյանի ծննդյան 125-ամյակի առթիվ)

Գևորգ Բաշինջաղյանի կյանքը, ինչպես և յուրաքանչյուր իրական արվեստագետի կյանք, նրա ստեղծագործական տարիներից հյուսված մի ամբողջ շղթա է:

Գևորգ Բաշինջաղյանի ստեղծագործական կյանքը սկսվեց մանկության տարիներից: Ծննդավայրը Սղնախն էր, Վրաստանի արևելյան շրջաններից մեկում ծվարած գավառական մի քաղաք, որտեղ 1857 թ. սեպտեմբերի 14-ին ծնվեց ապագա նկարիչը: Բաշինջաղյանների տան կողքին գտնվող Ս. Գևորգ հայկական եկեղեցում մկրտեցին համեստ ապրուստի տեր ընտանիքի փավակին: Մանկության տարիներից նրա աչքը սովորեց բնության գեղեցկություններն ընկալելուն, քանի որ Սղնախից դեպի կովկասյան լեռնաշղթան էր ձգվում Ալպանի հովիտը՝ իր վանաչա-շագանակագույն այգիների, ոսկեգույն ցորենի արտերի, կանաչի երանգներից փայլող դաշտերի շրջուցից տարածքներով: Ողջ կյանքում Բաշինջաղյանն իր հոգում գեղեցիկ հուշեր պահեց այդ բնությունից՝ հետագայում մի շարք կտավների վրա վերարտադրելով իր հիշողության մեջ դեռևս մանկությունից դրոշմված այդ գեղեցկությունները: Սղնախի հետ են կապված առաջին ներկերի, առաջին նկարների հիշողությունները: Սղնախում էր, որ նկատեցին նրա նկարչական ընդունակություններն ու գնահատեցին: 1876 թ. Գևորգին բերում են Թիֆլիս: Նա ընդունվում է Արվեստները խրախուսող կովկասյան ընկերության նկարչական դպրոցը, իսկ 1879 թ. մեկնում Պետերբուրգ և ընդունվում տեղի Գեղարվեստից ակադեմիան: Այստեղ Գ. Բաշինջաղյանը սովորում է ռուս անվանի բնանկարիչ, առաջադեմ գաղափարների տեր արվեստագետ Միխայիլ Կլոդտի արվեստանոցում: Գեղարվեստից ա-

կադեմիան Գ. Բաշինջաղյանին տվեց նկարչական գիտելիքներ, մասնագիտական հրմտություն, որոնք, շաղկապվելով բնությունը գեղանկարչորեն ընկալելու նրա բնական ընդունակություններին, ձևավորեցին նկարչի տաղանդը: 1883 թ. Գ. Բաշինջաղյանի «Կեչիների պուրակ» նկարն արժանանում է Գեղարվեստի ակադեմիայի արծաթե մեդալի: Նկարիչն այնուհետև վերադառնում է Թիֆլիս ստեղծագործելու:

19-րդ դարի 80-ական թթ. Թիֆլիսի հայության մտավոր կյանքն արտակարգ վերելք էր ապրում: Ազդագրերը արվեստասեր հասարակությանը հրավիրում էին հայկական թատրոնի ներկայացումներին, հայ երաժիշտ կատարողների համերգներին, լույս էին տեսնում հայ գրողների բազմաթիվ գրքեր, հասարակությունը աշխույժ հետաքրքրությամբ հետևում էր հայ մամուլին, և միայն կերպարվեստն էր, որ սպասում էր իր տաղանդավոր ներկայացուցչին: Մինչ այդ Թիֆլիսը մեծաբեկ էր Հովնաթանյան տոհմի վերջին նկարչին՝ Հակոբ Հովնաթանյանին, որը մեկնել էր Պարսկաստան ու մահացել Թեհրանում (1881): Նրա գործը շարունակեց Ստեփանոս Ներսիսյանը, որին ձանաչում և բարձր էր գնահատում Գևորգ Բաշինջաղյանը: Ստ. Ներսիսյանը մահացավ 1884 թ. (Ի դեպ Ներսիսյանի կերտած Ս. Մեսրոպ Մաշտոցի ու Ս. Սահակ Պարթևի դիմանկարների վիմագրությունները ժողովրդի մեջ տարածելու գործին հովանավոր դարձավ Գ. Բաշինջաղյանը): Թիֆլիսի գեղարվեստական կյանքի որոշակի աշխուժությունը կապված էր Հովհաննես Ավագովսկու այցելության հետ, որը 1869 թ. այստեղ բացել էր իր ստեղծագործությունների ցուցահանդեսը:

Դարի վերջին քառորդում Թիֆլիսի հայ

հասարակությունն ապրում էր ազգային ինքնագիտակցության և զարթոնքի կարևոր մի շրջան: Այդ ժամանակաշրջանում էր ահա, որ Պետերբուրգից վերադարձած նկարիչ Գևորգ Բաշինջադյանը բացեց իր ստեղծագործությունների առաջին ցուցահանդեսը (1883 թ.): Դա երևում էր ոչ միայն հայկական, այլև Կովկասի մշակութային կյանքում: Մարդիկ առաջին անգամ էին տեսնում իրենց շրջապատող բնության գեղարվեստական մարմնավորումները: Նրանք մեծ սիրով և ոգևորությամբ էին ընկալում հայրենիքի գեղեցկությունները, նրա գունային հարստությունն ու վեհությունը: Արտահայտվելով Բաշինջադյանի առաջին նկարներից ստացած իր տպավորությունների մասին՝ 1885 թ. «Նոր Դար» թերթի խմբագրությանն ուղղված մի նամակում տաղանդավոր ողբերգակ Պետրոս Արամյանը մասնավորապես գրում էր. «Ես չեմ կարող երբեք մոռանալ այն քաղցր տպավորությունը, որ ներգործեց ինձ վրա, և ես հենց այդ տպավորություններս կցանկանամ հավատարմաբար նկարագրել և իբր քիչ-շատ գնահատողի՝ հայտնել իմ անկեղծ կարծիքն ու պագումը մի նշանավոր և նորատիպ տաղանդի մասին, որո վրձնույն յուրաքանչյուր հարվածները կրում են արդի իրականության և բանաստեղծության դրոշմը... Անկարելի է անտարբեր մնալ նրա նկարների առաջ, որք ճարտար ճշմարտությամբ պարզարված են հեռագիտական կանոնավոր գեղեցկությամբ և գույների ներդաշնակ իրականությամբ»: Ստեղծագործական իր առաջին քայլերից սկսած մինչև կյանքի վերջը Գ. Բաշինջադյանն իր ինքնատիպ արվեստով առաջացրել է իր ժամանակակիցների՝ Ղ. Աղայանի, Ալ. Ծատուրյանի, Կոմիտասի, Շիրվանզադեի և այլոց հիացմունքը: Սա շատ բնական է, եթե նկատի ունենանք, որ Գ. Բաշինջադյանը բնակարիչ էր հոգով և պզուկ էր իր վրա դրված մեծագույն պարտականությունը: Ողջ կյանքի ընթացքում նա պարբերաբար անհատական ցուցահանդեսներ էր կազմակերպում, մասնակցում Թիֆլիսի, Բաքվի, Մոսկվայի, Պետերբուրգի, Փարիզի, Իտալիայի, ինչպես նաև Ռուսաստանի բազմաթիվ քաղաքների գեղարվեստական ցուցահանդեսներին՝ այսօրինակ ակտիվ գործունեությունը համարելով արվեստագետ-քաղաքացու կարևորագույն պարտականություններից մեկը:

Տարիները բերում էին վարպետություն և բյուրեղացնում արվեստագետի հետաքրքրությունների ոլորտը:

Նա սիրում էր անտառ նկարել: Նկարում էր կովկասյան լեռների ֆոնի վրա կանաչին սովորականների բացատները, ծառերի


խիտ շագանակագույնը: Նրա կտավներում կարելի է տեսնել վաղ գարնան թույլ արևի ճառագայթներից շառագունած անտառի հատվածներ, որոնք նոր միայն վերածնվում են գարնան առաջին շնչից («Վաղ գարուն», «Անտառը ձմռանը» և այլն): Հյութեղ գույների և հստակ վրձնահարվածների միասնությամբ պատկերված տեսարանների վերհանման շնորհիվ դիտողի հոգում բազմախորհուրդ պզգմունքներ են առաջացնում նրա «Դարիալի կիրճը», «Դիլիջանի ճանապարհը», «Սանահնի ձորը», «Կեչիները», «Առավոտը նոճու անտառում», «Արահետը լեռներում» և այլ նկարներ: Նույնպիսի տրամադրություններ արտահայտող «Չորագետը գիշերով» նկարի ապոկալիպսի տակ Հովհ. Թումանյանը գրել է (բերում ենք միայն առաջին հատվածը):

Արտիստ քաջարի, այս ձորն ահարկու
Յուր բնակավայրից փոխադրել ես դու,
Մեծ է արդարև, մեծ է քո հոգին,
Որ ընդգրկել է ժայռերն ահագին,
Իրենց սեփական խոր մտածմունքով,
Փրփրուն գետը փայլուն ծիփանքով,
Լուսինն աստղերով, կամարը երկնի
Եվ համատարած խավարն ահռելի...
Լուռ հանգստության գիշեր է մթին,
Հանգստանում է նաև իմ հոգին:

Հիրավի, Գ. Բաշինջադյանին հատկապես հաջողվում էին գիշերային տեսարանների վերարտադրությունները, կտավի վրա գիշերային տեսարանները պատկերելը դժվար է և՛ գեղանկարչական, և՛ կատարողական առումով, սակայն Գ. Բաշինջադյանը դարձավ այդ բնագավառի վարպետը հայ իրականության մեջ: Հիշենք նրա «Քուռ գետը գիշերով», «Գիշերը Սև ծովում», «Գիշերն Օրթա-ճալայում» և այլն: 1891 թ. ցուցադրած «Լուսնյակ գիշերը Քուռ գետի վրա» նկարի տպավորության տակ Ա. Շիրվանզադեն գրել է. «Գ. Բաշինջադյանը հոգով բանաստեղծ է և ձգտումներով արտիստ, ահա թե ինչու նա կարողանում է ըմբռնել բնության հրաշալիքները»:

Առանձնակի տեղ են գրավում Գ. Բաշինջադյանի դաշտանկարները, որոնցում դեղին ցորենի անծայրածիր տարածքները արևի ջերմ ճառագայթներից տարբեր երանգներ են ստանում («Հասած արտը»), երածշտական ոլորտ են ձեռք բերում արևածաղիկների դեղիններից («Դաշտը արևածաղիկներով») կամ մեղմ անցումներով տարածվում դեպի հեռավոր լեռները («Ալպանի հովիտը»):

Բաշինջադյանը բնության սիրահար էր: Ճանապարհորդում էր, տեսնում, հիանում և





ՀՈՒԴԱՅԻ ԶՐԶՈՅԻՄԸ, ԳՈՂԳՈԹԱ (1913 թ.)

արվեստանոցում հիշողությամբ վերարտադրում տեսածը: Եղել էր Իտալիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Պարսկաստանում, Ռուսաստանի բազմաթիվ քաղաքներում, որտեղից բերված տպավորությունները դարձել էին բարձրարվեստ նկարչական մտահղացումներ:

Գ. Բաշինջադյանը ինտերնացիոնալ նկարիչ էր: Նա թեև ապրում էր Թիֆլիսում, մասնակցում Կովկասի մշակութային կյանքի կազմակերպմանը և նպաստում նրա վարձացմանը, սակայն նրան խորթ չէին Մոսկվայի շրջակայքը, Լեռնոնտովի, Տոլստոյի, վրաց գրողների ստեղծագործությունները («Բաշինջադյանը սղնախեցի հայ է, բայց վրաց հին գրականությունը այնպես լավ գիտի, որ շատ վրացիներ ուղղակի պետք է ընդօրինակեն նրան» — գրել է վրաց անվանի բանաստեղծ Իոսեփ Գրիջաշվիլին):

Գ. Բաշինջադյանի արվեստի համար բնորոշ է նրա անսահման հայրենասիրությունը: Նա Հայաստանը սիրող ու Հայաստանի բընությունով ապրող նկարիչ էր: Հայկական բնաշխարհը նրա տարերքն էր: Սկանը, Արագածն ու Արարատը նրա ստեղծագործական ողջ կյանքում հարատևած թեմաներն էին:

Արագածին նվիրված նրա կտավների առաջին պլանի հարթ տարածքներն ավարտվում են լեռան ձյունածածկ ուրվագծերով՝ դիտողին տոգորելով բանաստեղծական հանգրստությամբ ու քնարական մեղմ տրամադրություններով: Բաշինջադյանը շատ է նկարել Սևանի տեսարանները: Նկարել է Սևանը գիշերով, Սևանը արևածագին, արևամուտին, անձրևոտ ու մառախլապատ օրերին: Նա փնտրել է Հայաստանի գեղեցկուհու հավաքական կերպարը, ձգտել է գտնել նրա տրամադրությունների էությունը: Նրա նկարներում Սևանը փայլում է դեղնա-կարմիր ու կանաչա-կապույտ երանգներով: Նա վարպետությամբ է պատկերում ջրի նյութականությունը, նրա տատանումները, նրա ձևափոխություններն ու գունափոխությունները օրվա տարբեր ժամերին ու տարբեր եղանակներին: Սևանի գիշերային տեսարանները ըստեղծված են կատարյալ վարպետությամբ, որտեղ, անկասկած, պգալի է Հովհաննես Ալվալովսկու արվեստի անմիջական ազդեցությունը:

Քնարական տրամադրություններով է բընութագրվում 1916 թ. հեղինակի նկարած «Սևանը գիշերով» աշխատանքը, որը պահպանվում է Էջմիածնի վանքի Վեհարանում: Ընդհանուր սև տարածքի մեջ արծաթե մեղմ փայլով տատանվում են լճի հանդարտ ջրերը, որոնք լուսավորված են ամպերով պա-

րուրված լուսնի ճառագայթներով: Մի փոքր դեղին կետ, վանքում վառվող մոմի մի աննշմար ճառագայթ, և ողջ տեսարանը ձեռք է բերում մեծ կենսահաստատություն: Սևանը անվերջանալի թեմա է եղել նրա համար, իսկ լուսնի ծագելը նկարիչը համարում էր բնության հրաշալիք, ամենասիրելի վայրկյան, որը շատ անգամ փարատել է նրա սրտի թախիծը:

Արարատը նույնպես անվերջանալի ոգևորության թեմա է եղել Գևորգ Բաշինջադյանի համար:

Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիան ավարտելուց հետո, Գ. Բաշինջադյանն անմիջապես գալիս է Հայաստան՝ Սևանը, Արագածն ու Արարատը տեսնելու նպատակով: Նա միայն չի տեսնում: Նա իր ողջ էությունը, հոգու բոլոր մասնիկներով հաղորդվում է հայրենի բնության գեղեցկություններին ու ապրում նրանք հմայքը: Դրա վկայությունն են նրա ընտիր հուշագրությունները, որոնք լույս են տեսել մի քանի անգամ: Առաջին ճանապարհորդության ժամանակ, նա ութ օր հյուրընկալվում է Էջմիածնի վանքում, քնում Ղապարապատ հյուրանոցի կտուրին, հույս ունենալով «լուսադեմին, արշալույսի միջոցին, Արարատի գագաթը տեսնելու»: Բաշինջադյանը Արարատն առաջին անգամ տեսնում է Մոռնու վանգակատնից, արևածագի ժամանակ: Ընտիր արձակի գեղեցիկ օրինակ է այդ տեսարանի նրա նկարագրությունը, որն ընդգրկում է բնության պարթոնքի մի քանի վայրկյան, բայց շարադրված է վարպետ գրչով և դարձել է տաղանդավոր նկարչի ողջ կյանքի սիրած թեմաներից մեկը:

«Անդնդային հեռավորության մեջ հապիվ է նշմարվում ահարկու ուրվականը: Դա իր զուլիը հասցրել է երկնքին՝ պատառ-պատառ ու ցրիվ ու ցան անելով ամպերի գընդերը, որ իրեն չխանգարեն, իսկ թևերը տարածել է լայնատարած երկրի վրա, ուր թըվում է, թե երկյուղածությամբ հնապանդվում են նրան բնության բոլոր հրաշալիքները և նրա հրամանի ներքո ամենայն ինչ ննջում է... Ասես թե դա հսկում է ամբողջ տիեզերքի վրա... Այս կախարդական ուրվականը ծածկված է թափանցիկ գուրջուց հյուսված սավանով: Կաշկանդված ու լարված ողադրությամբ նայում են դեպի այն կողմը»: Յուրաքանչյուր նախադասություն գեղեցիկ մի պատկեր է, որը գեղանկարչական մարմնավորում է ստացել նրա հետագա կտավներում: «Արարատն արևամուտին», «Արարատը և Արաքս գետը», «Արարատ» նկարները մեկ գրավում են առաջին պլանում ներկայացված վարած հողի իրենց գորշ պանգված-

ներով, բիբլիական լեռան ստորոտի մեղմ կապույտ մշուշով, լեռան գագաթների վրայի կապտա-սպիտակագույն ձյան արծաթագույն փայլով: Բաշինջաղյանի բնակարաններում մարդիկ չեն պատկերված, սակայն նրա յուրաքանչյուր կտավը շնչում է մարդու աշխատանքով, մարդու ներկայությամբ: Նա առաջինն էր, որ առաջ քաշեց նկարում գեղարվեստական միջոցներով մարդու և բնության ներդաշնակ միասնությունը պատկերելու անհրաժեշտությունը: Նրա կտավներում պաշտպան է մարդկանց ապրելակերպը, մարդկանց հոգեբանական գոյությունը: Այդպիսիք են նաև նրա «Աբովյանի տունը Քանաքեռում», «Նալբանդյանի տունը Նոր Նախիջևանում» «Մաշտոցի գերեզմանը Օշականում» կտավները, որոնք արվեստագետի տուրքը լինելով հանդերձ հայ մշակույթի մեծերի հիշատակին, միաժամանակ ընտիր բնակարաններ են:


Առաջին ճանապարհորդության ժամանակ՝ 1883 թ. Գ. Բաշինջաղյանը լինում է նաև Աշտարակում, Օշականում, Հաղիձայ վանքում, Ալեքսանդրապոլում՝ նպատակ ունենալով տեսնել Անին: Բաշինջաղյանը մանրամասն նկարագրում է իր անցած ճանապարհը, հայ գյուղերի աղքատ վիճակը: Նրա վրա ծանր տպավորություն է թողնում Գևորգյան ձեմարանի սաների կատարմամբ իր լսած «Անի քաղաքը նստե կույա» երգը: Բոլորը հոգևած են, բոլորը քնում են վանակալի փոքր խրճիթում: Չի քնում միայն նկարիչը: Նա ուզում է տեսնել գիշերային Անին, որը «բնության այդպիսի խորհրդավոր ձգվածամիտ... ցույց է տալիս իր գոռով դեմքը, բոլորովին չքաշվելով մահկանացուներից արհամարհված իր թշվառ վիճակից: Այս կարճատև տեսարանը այնպիսի տպավորություն գործեց վրաս և այնպես թափանցեց ուղեղիս մեջ, որ անկարող եմ երբևիցե մոռանալ»—գրում է Բաշինջաղյանը: Հիրավի: Նա չմոռացավ Անին: Տարիների ընթացքում նա նկարեց «Անիի ճանապարհը» («Արևը կամաց-կամաց թեքվում է դեպի երկիրը և իր տակ գտնված լեռների վրա բոցավառ կայծեր է մաղում»), «Անիի պարիսպները» («...որքան արվեստ ու ճարտարապետություն են գործ դրած... այս կառուցելու համար»), «Անիի Մայր տաճարը» («որի անունը սերնդից-սերունդ անցնելով մնացել է անխախտ, կանգնած է վիրավոր ու քայքայված մարմնով և ցույց է տալիս գեղատեսիլ քանդակներ ու արձանագրություններ, իբրև միակ հետքեր անցած-գնացած անդառնալի պարծանքի») և այլ տեսարաններ: Դրանցից մեկը՝ Անիի Մայր տաճարը (տարբերակ) պահպանվում է Էջմիածնի Մայր տաճարի ցուցասրահում: Էջմիածնի վանքի սեփականությունն են


կապում նաև Գ. Բաշինջաղյանի մի շարք այլ նկարներ: Դրանց թվում են ջազանակագույն մուգ կոլորիտով արված «Շողակաթ եկեղեցու հին գերեզմանատունը», «Էջմիածնի լիճը Արարատի ֆոնի վրա»:

Բաշինջաղյանը բավիցս անդրադարձել է «Էջմիածնի» թեմային: Տարբեր տարիներին նկարել է «Արարատն ու Էջմիածնի լիճը», «Հոփսիմեի ու Շողակաթի վանքերը», «Էջմիածնի լիճը», «Էջմիածնում» նկարները, որոնք ցուցադրվել են պանսպան գեղարվեստական ցուցահանդեսներում: Նա միշտ աշխատում էր նույն թեմայի սահմաններում կատարել կոմպոզիցիոն տարբերակներ: Որպես հաստատունն այս մտքի, կարելի է բերել նրա նամակներից մի քանի տող: Մեկը հասցեագրված է Էջմիածնի միաբանության անդամ Սուքիաս արքեպիսկոպոս Պարպանին՝ գրված 1912 թ. ապրիլի 2-ին: «Մի մեծադիր պատկեր նկարելու համար անհրաժեշտ է ինձ իմանալ, թե «Ներսիսյան լճի շուրջը, Ներսես Ե կաթողիկոսի ժամանակ կային արդյոք ծառուղիներ թե ոչ: Եթե չկային, ապա ի՞նչ կար այժմյան ծառուղիների տեղը»: Բացի այդ, կցանկանայի իմանալ, թե «Ներսես կաթողիկոսը այդ լճի ափին պոստելու միջոցին միայնակ էր լինում թե ուղեկցում էին իրան եպիսկոպոսներ կամ վարդապետներ: Գուցե կա՞ր որևէ կանոն կամ սովորություն այդ բանի նկատմամբ»:

Եթե կբարեհաճեք բավարարություն տալ ինձ վերոհիշյալ հարցերիս վերաբերյալ, մեծապես կնպաստեք սկսած գործիս հաջողությանը և ինձ էլ առանձնապես չափազանց կը պարտավորեցնեք...» (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 238, վավ. 308: Նույն տեղում պահպանված է Ս. Պարպանի նամակ-պատասխանը): Նկարները բարձր են գնահատվում և առաջացնում են այցելուների հետաքրքրությունը: Ուշագրավ է, որ ընկերոջը՝ Գ. Գրիգորյանին գրած նամակում (27 հունվարի 1920 թ.) Գ. Բաշինջաղյանը խոստանում է նրա համար նկարել, որպես նվեր, Արարատի տեսարան, ըստ նրա ցանկության. «Դու ի՞նչ կասես, կցանկանայի առաջին պլանի վրա ցույց տալ Ներսես 5-րդի լիճը շրջապատված ծառուղիներով,—այս մեկ պրոեկտ, իսկ մյուս պրոեկտի համաձայն առաջին պլանի վրա աշ կողմից ցույց տալ Հոփսիմեի հրաշալի վանքը: Այս կողմից միամիտ կաց, դեռ աշխատում եմ երիտասարդի ոգևորությամբ, գուցե և թեթևամտությամբ...»: Այս տողերը գրում է 63-ամյա նկարիչը:

1911 թ. Պետերբուրգի նկարիչների միության 19-րդ ցուցահանդեսում ներկայացված





ՍԵՎԱՆԸ ԳԻՇԵՐՈՎ (1916 Թ.)

«Էջմիածնի լիճը» նկարն արժանանում է բարձր գնահատականի:

Գ. Բաշինջաղյանի ստեղծագործության մեջ առանձնակի տեղ են գրավում ավետարանական թեմաներով նկարները: «Գողգոթա», «Գեթսեմանի պարտեզում» սյուժեներով նկարներն ա ստեղծել է մի քանի անգամ: 1913 թ. կատարած «Հուդայի պղծումը. Գողգոթա» նկարը պահպանվում է Էջմիածնի վանքում: Ինչպես ասացինք, Բաշինջաղյանը չուտ բնության տեսարաններ էր նկարում: Այստեղ է, որ նա դուրս է գալիս իր նախասիրությունների շրջանակներից՝ գտնելով այդ նախասիրություններից թելադրված կոմպոզիցիոն մեկնաբանումներ: Այս պատկերում նա նկարում է. կապտա-կանաչագույն երկինք, ամպերով ծածկված լուսին, քարքարոտ տարածք, խաչերի ստվերներ, հեռվում՝ Երուսաղեմի կանաչ ուրվագիծ և այդ ամենի մեջտեղում «Հուդան» խեղճացած, կորացած մեջքով, լուսնի շողերից առավել լուսավոր: Հուդան պատկերված է մեջքից, բայց որքան խորը պացումներ է իր մեջ խտացնում նրա կորացած ֆիգուրը: Այս նկարը ցուցադրվել է 1915 թ. Թիֆլիսի գեղարվեստական ցուցահանդեսում և արժանացել մամուլի ուշադրությանը: Գ. Բաշինջաղյանի «Աշխարհի ստեղծում» մեծադիր նկարը կախված էր Թիֆլիսի Քամոյան եկեղեցում, այն Քամոյան եկեղեցում, որի ապագային ճարտարապետական կերպարի ու ներքին ձևավորման հարցերով մտահոգված էր Գ. Բաշինջաղյանը: Նա գտնում էր, որ «Օտարները ազգի մշակույթի հետ ծանոթանում են թանգարանների ու եկեղեցիների միջոցով, նշանակում է անպայման պետք է հաշվի առնել մասնագետների կարծիքը» («Քամոյան եկեղեցու առիթով», «Մշակ», 1909, № 230):


Գ. Բաշինջաղյանը նաև գրող էր: Նա գրել է ճանապարհորդական նոթեր, պատմվածքներ: Հոդվածներ է գրել Հովհ. Այվազյանի, Ալ. Օստրոյանի, Պետրոս Ադամյանի, մի շարք դերասանների մասին, պեղվել է Բաֆֆու հուշարձանի հարցերով: Գ. Բաշինջաղյանը նաև եռանդուն հասարակական գործիչ էր, պոու էր մտավորականի դերը հասարակության գաղափարա-գեղարվեստական դաստիարակության գործում, գտնում, որ նա մասնակից պետք է լինի նաև մշակույթի արժեքները պահպանելուն: Նա կոչ արեց, որպեսզի ժողովրդից հավաքված գումարներով ջիոմաքար դրվի Կովկասյան ե-

րեք ժողովուրդների լեզուներով երգեր գրած Սայաթ-Նովայի շիրմի վրա: Գ. Բաշինջաղյանը գործոն մասնակցություն ունեցավ նաև Էջմիածնի տաճարի վերանորոգման հարցերի քննարկմանը՝ մի քանի անգամ լուրջ առաջարկություններով հանդես գալով մամուլում: Լինելով Թիֆլիսում կազմված մասնաժողովի նախագահ՝ նա պարբերաբար հրապարակում էր տեղեկություններ կատարված աշխատանքի մասին: Այդ գործը նա համարում էր ապագային նշանակություն ունեցող գործ, խրախուսելի էր համարում հանձնաժողովի բազմամարդ լինելը (հայ, ռուս, վրացի, լեհ, գերմանացի, իտալացի), բայց, միաժամանակ, գտնում էր, որ լավ կլինեք օգտագործել Վ. Սուրենյանցի նման «հմուտ և հին ստիլին լավ տեղյակ» մի արվեստագետի: Էջմիածնի տաճարը Գ. Բաշինջաղյանի համար հայ, ճարտարապետության կարևորագույն հուշարձաններից էր: Նա գտնում էր, որ «Էջմիածնի տաճարը, այդ հնագույն հրուշակավոր ապագային հոգևոր հիմնարկությունը, որը գտնվում է հայության կենտրոնում, երեք պետությունների սահմանագլխի մոտ, վերանորոգվելու է քսաներորդ դարում» և հետևաբար նրա նկատմամբ պետք է ունենալ շատ պոույշ վերաբերմունք: «Քանի որ գեղեցկությունը չի կայանում ոսկու և մարմարի մեջ, այլ նպատակին հասնելու համար հարկավոր է տալ ձև, համաչափություն, ոճ, գույների և գծերի ներդաշնակություն» («Մի կարևոր հարց», «Մշակ», 1908, № 94):

Գևորգ Բաշինջաղյանը մահացավ 1925 թ. հոկտեմբերի 4-ին: Նրան թաղեցին Թիֆլիսի Ս. Գևորգ եկեղեցու բակում, Սայաթ-Նովայի ցերեկմանի կողքին, այն եկեղեցու բակում, որի պատերին նա ժամանակին նկարել էր մի շարք ավետարանական տեսարաններ:

Գևորգ Բաշինջաղյանը կովկասյան իրականության մեջ հաստատեց բնակարջության ժանրը, հաստատեց նրա մեծ դերը մարդկանց պացմունքների ձևավորման և գեղագիտական դաստիարակության գործում: Նրա բնակարների ամենակարևոր առանձնահատկությունը հայրենասիրությունն է: Բաշինջաղյանին հայկական բնաշխարհը գրավում էր ոչ միայն իր գեղեցկությամբ, այլև՝ հայրենիք կոչմամբ: Դրա վկայություն է նրա հարուստ ժառանգությունը, որը արժանի տեղ է գրավում հայ ժողովրդի հոգևոր մշակույթի գանձարանում:

ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ



ՀՈՒԴԱՅԻ ԶՂՋՈՒՄԸ

(Մենախոսություն)

Գ. ԲԱՇԽՆՁԱՂՅԱՆԻՆ

Բարձ ի մեղուցելոյս ըզհողմ մահու խռովութեանս,
Զի հանգկցե յիս ամենակալ Հոգիդ խաղաղութեան:

(Գ. ՆԱՐԵԿԱՑԻ)

Ների՛ր, ներում շնորհիր, խռովահույզ իմ հոգուն
Եվ արնածոր սրտիս մեջ խաղաղության քո լույսից
Մի վառ կաթիլ ցողիր, Տե՛ր, զի անկոր եմ ես տանել՝
Ով արդարն բարեգութ, չար կապանքներն իմ հոգու:

Ահա խաչեր երեք հատ, սակայն մեկն է ինձ կանչում.
Գիշերվա մեջ խավարչտին ամենօրինյալ քո հոգին
Իր բարության բարձունքից ինձ ներում է շնորհում.—
Բայց խոցոտված իմ հոգուն Տիեզերքն է ծանրանում:


Ես ուզում եմ հեկեկալ, խաչվել մահին քեզ պես, Տե՛ր.
Դառնալ զղջման նշավակ՝ անցորդների հայացքին,
Հետո թաղվել այրի մեջ—հոգիս տված խավարին
Եվ էլ չառնել հարություն քեզ պես, օրինյալ՝ Տեր իմ, Տե՛ր:

Ու մահանալ խավարում մռայլ, տարտամ ու անշող
Եվ չսպասել քեզանից մաղթանք, շնորհ ու զղջում,
Այլ պատկերը քո պայծառ անւերջ կրել իմ հոգում,
Հավատամքով միատարր ըմպել լույսը քո հոգու...

Ների՛ր, ներում շնորհիր խռովահույզ իմ հոգուն.—
Որ ես ապրեմ քո հոգու լուսավարար անդորրում:

ՍՄԲԱՏ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ





ՔԱՐՈՂ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
1982 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ

«Տեր, անսասան պահիր դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ»:

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.
ամէն»:

Հայրապետական մաղթանքի սույն խոսքերով, յորաքանչյոր կիրակի, հավարտ և պատարագի, հրաժեշտ ենք անում քրիստոսահիմն այս սուրբ տաճարից՝ աղոթելով, որ Աստված անսասան պահի Հայ Առաքելական Եկեղեցու սիրտը հանդիսացող Ս. Էջմիածինը և նրա լուսավորիչ ու շինարար Հայրապետին:

Այս նույն մաղթանքով, ես ևս, դեռ երիտասարդ սարկավագ, ավելի քան երկու տարի առաջ հրաժեշտ տվեցի Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ սկսելու համար իմ հոգևոր ծառայությունը սփյուռքահայ համայնքում: Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ձեռամբ ընդունելով կուսակրոնության առաջին աստիճանը՝ նշանակվեցի Ռումինիայի հյուսիսային շրջանի հայ համայնքի հոգևոր հովիվ:

Դարեր շարունակ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը եղել է հայ ոգեկանության անմար ջահը: Դժբախտ ճակատագրի բերմամբ, դեռևս հեռավոր անցյալում, մեր ժողովրդի ստվար պանգվածներ ստիպված են եղել գաղթել օտար երկրներ՝ իրենց հետ տանելով իրենց

նվիրական ավանդություններն ու հավատալիքները, սրտահույս երգերն ու հայրենական սովորությունները: Այդպես է եղել նաև Ռումինիայի հայկական գաղութի պարագան, որի մասին էլ այսօր ցանկանում եմ խոսել ձեզ:

Հայ ժողովրդի առաջին պանգվածային գաղթը դեպի Ռումինիայի հեռավոր ափերը կապված է Անի քաղաքի կործանման տխուր դեպքի հետ: Որոշ ժամանակ անց, նկատի ունենալով ռումինական հողում հայերի հետընկեստե մեծացող թիվը և նրանց բավարարչիսի արժանիքները, Ռումինիայի իշխան Ալեքսանդր Բարին 1401 թվականի իր հրովարտակով իրավունք տվեց Սուչավա քաղաքում հիմնել Հայ Եկեղեցու առաջնորդանիստ Աթոռ: Այդ թվականից հետո հայերը ոչ միայն որպես գաղթական հաստատվեցին Ռումինիայի տարբեր շրջաններում, այլև հիմնեցին քաղաքներ, եկեղեցիներ և վանքեր, որոնք կանգուն են մինչև այսօր և հանդիսանում են հայ ժողովրդի հավատքի, խաղաղասիրության և ստեղծագործ աշխատանքի խոսուն վկայությունները: Դրանցից են հռչակավոր Ս. Հաճկատար վանքը՝ կառուցված 1521 թվականին, Չամկա (Ս. Օգսենթես) վանքը, Ս. Խաչ և Ս. Միմոն եկեղեցիները՝

կառուցված նույնպես 15—16-րդ դարերում:

Ռումինիայի հայկական հնագույն եկեղեցիներն են Բոտոշան քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցին՝ կառուցված 1364 թվականին, և Յաշ քաղաքի հայկական եկեղեցին՝ կառուցված 1395 թվականին: Կան նաև այլ հայկական եկեղեցիներ Ռուման, Ֆոկշան, Թրգու-օկնա, Կոնստանցա, Պրեդիա, Թուլչեա, Կալաշի և Բուխարճատ քաղաքներում: Հայերը Ռումինիայում հիմնել են Կեռլա, Բոտոշան և այլ քաղաքներ՝ նպաստելով երկրի տնտեսական և մշակութային կյանքի ընդհանուր վերելքին: Ռումինահայ գաղութի ժառանգությունն են կապում նաև հայկական գերեզմանատները, մատուռները, կալվածքները և բնակելի բազում շենքերը:

Արևմտյան Հայաստանում 1915 թվականին կազմակերպված ցեղասպանությունից հետո վերապրող հայերից մի նոր գաղթականություն ապաստան է գտնում Ռումինիայի հյուրընկալ հողում՝ ավելացնելով տեղի հայերի թիվը: Այդպիսով շատանում են եկեղեցական, մշակութային կազմակերպությունները և նոր վարկ են տալիս գաղութի ապագային կյանքին:

Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո մեծ թվով հայեր վերադառնում են մայր հայրենիք կամ գաղթում այլ վայրեր, և այդպիսով Վրացիներն նվազում է ռումինական հողի վրա հաստատված հայերի թիվը: Այսօր ռումինահայ փոքրաթիվ համայնքը շարունակում է իր կազմակերպված հավաքական կյանքը՝ հավատարմորեն պահպանելով իր ազգային, եկեղեցական ավանդություններն ու մշակութային ժառանգությունները: Մշակույթի այդ կոթողները գաղութի անցյալի արմատներն են, որոնք ուժ և ոգեշնչում են տալիս մեզ՝ ապրողներին, կենդանի և հաստատուն պահելու այն ամենը, ինչ

փոխանցվել է մեզ մեր նախնիներից իբրև սրբազան ավանդ: Ահա այս նվիրական գաղափարով ոգևորված՝ ձեռնամուխ են եղել իմ հոգևոր, կրթական ու մշակութային գործունեությանը՝ հավատալով, որ բարին Աստված կօգնի ինձ այս դժվարին ճանապարհին:

Այսօր ունեմ արդեն վստահությունը բարի արդյունքի, որովհետև, Աստուծո օգնականությամբ, կարողացանք վերանորոգել, վերակազմավորել և բարեկարգել մեր բազմադարյան վանքերն ու եկեղեցիները:


Մեր բոլոր նախաձեռնությունների և աշխատանքների մեջ մենք մշտապես ոգեշնչվում և հոգևոր սնունդ ենք ստանում մեր մայր հայրենիքից և Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, որոնք ապրող ու շնչող, մեր հոգին ու սիրտը լցնող կենդանի, բաբախուն իրականություններ են:

Ահա թե ինչու, բոլորս մեկ սիրտ և մեկ հոգի դարձած՝ աղոթենք. «Տեր, անասան պահիր դու միշտ Քո իսկ հիմնած Մայր Աթոռ» ու նաև՝ մայր հայրենիք:

Ես իմ ուխտը վերանորոգելու համար եկել եմ հեռավոր Ռումինիայից և իմ անդրանիկ պատարագն եմ մատուցում այսօր աստվածակառույց այս տաճարի սուրբ խորանից: Ցանկանում եմ այս առթիվ իմ երախտագիտության խոսքն ուղղել ազգիս Վեհափառ Հայրապետին՝ Ս. Ս. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսին, Որն Իր իմաստուն խորհուրդներով և հայրական հոգատարությամբ միշտ ճշմարիտ ուղեցույց է եղել մեզ մեր դժվարին ճանապարհին:

Որախոությունը ունեմ այսօր նաև, սիրելի հավատացյալներ, ձեզ փոխանցելու ռումինահայ ձեր եղբայրների և քույրերի սրտազին ողջույններն ու բարի ցանկությունները: Ողջ երուր:

ԱՐԱՄԱՅԻՍ ԱԲԵՂԱ ՇԼՈՒԿՅԱՆ





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՎԵՒԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՉԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Նոյեմբերի 14-ին, կիրակի օրը, Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետը քարոզում է նորոգ հանգուցյալ Սովետական Միության նախագահ Լեոնիդ Բրեժնևի անձի և նրա երկար տարիների հայրենասիրական և խաղաղասիրական ծավալուն գործունեության մասին:

Վերջում, Հայոց Հայրապետի գլխավորությամբ, կատարվում է հոգեհանգըստյան կարգ՝ նվիրված Լեոնիդ Բրեժնևի հիշատակին:

Նոյեմբերի 3-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Նոյեմբերի 4-ին, հինգշաբթի.—Այսօր, առավոտյան, հոգևոր ճեմարանի սաները, տեսչության կապմի գլխավորությամբ, միօրյա արշավի են մեկնում դեպի Գառնի-Գեղարդ:

Նոյեմբերի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Ստեփանոս վարդապետ Չաքալյանը:

Հավարտ ս. պատարագի քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Ուղիղ եղիցին աղօթք իմ որպես խունկ առաջի քո Տէր» (Սաղմոս) բնաբանով:

Վեհափառ Հայրապետը իր քարոզում խոսում է Ռումինիայի հայոց թեմի նախկին առաջնորդ Ս. Հուսիկ արքեպ. Չոհրաբյանի եկեղեցական ու կրթական գործունեության մասին: Որից հետո Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ կատարվում է հոգեհանգըստյան կարգ՝ նվիրված երջանակահիշատակ Ս. Հուսիկ արքեպ. Չոհրաբյանի հիշատակին:

Նոյեմբերի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Նոյեմբերի 14-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Չատիկ աբեղա Ավետիքյանը:

Նոյեմբերի 15-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը:

Նոյեմբերի 17-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում, Միացյալ Նահանգներ մեկնելու համար, Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը:

Նույն օրը, առավոտյան, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, Ֆրանսիայի Լիոն քաղաք է մեկնում Մայր Աթոռի երիտասարդ միաբան Տ. Չատիկ աբեղ. Ավետիքյանը՝ տեղի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում սովորելու և հայ համայնքին ծառայելու համար:

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Վարդան արկ. Բաղդասարյանը բանախոսում է «Քրիստոնեության հետքերը Սյունիքում Ա—Գ դդ.» վերնագրով իր ուսումնասիրությունը:

Նոյեմբերի 21-ին կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քին. Մատարյանը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայ-

րապետը քարոզում է «Յիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի» բնաբանով: Վեհափառ Հայրապետը իր քարոզում խոսում է նորոգ հանգուցյալ, հայ ժողովրդի վաստակաշատ գիտնական Ալեքսանդր Սահիկյանի անձի, նրա մեծ վաստակի ու հայրենասիր գործունեության մասին:

Նոյեմբերի 24-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Նոյեմբերի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ներսես եպս. Պոպպայանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Մի երկնչիր, հօտ փոքրիկ, քի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ վարքայութիւն» (Ղուկ. ԺԲ 32) բնաբանով:

Ս. պատարագի ավարտին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է Հանրապետական մաղթանք՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 62-րդ տարեդարձի առթիվ:

Դեկտեմբերի 1-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը խոսում է Հայաստանում 1920 թ. նոյեմբերի 29-ին սովետական կարգերի հաստատման նշանակության մասին:

Դեկտեմբերի 3-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, հոգևոր ճեմարանում «Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները» թեմայով ղեկուցում է կարդում կրտսեր գիտաշխատող Ռաֆայել Աբգարյանը: Դասախոսությունն ուղեկցվում էր գունավոր լուսապատկերների ցուցադրումով:

Դասախոսությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 4-ին, շաբաթ.—Տօն Սրբոց Առաքելոցն և առաջին լուսաորջացն մերոց Թադևոսի և Բարթողիմէոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Եղիշե քին. Բաղրամյանը:

*
*

Դեկտեմբերի 5-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Նարեկ քին. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ է խոսում Ս. Հայկապոն արք. Նաշարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
*

Դեկտեմբերի 6-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

*
*

Դեկտեմբերի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
*

Դեկտեմբերի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, հոգևոր ձեռնարանում Միքայել Փեշումալյանը դասախոսում է ՍՍՀՄ-ի տարածքում հայկական հոգևոր և աշխարհիկ ճարտարապետական հուշարձանների մասին: Դասախոսությունն ուղեկցվում է գունավոր լուսապատկերների ցուցադրումով:

*
*

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Ս. Եղիշե ավագ քին. Սարգսյանը համառոտակի խոսում է Երևան քաղաքի մասին՝ ներկայացնելով նրա պատմությունը սկզբից մինչև մեր օրերը:

*
*

Դեկտեմբերի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի հայոց հոգևոր հովիվ Ս. Արամայիս արք. Շլուկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Տեր, անսասան պահիր Դու միշտ Քո իսկ հիմնած Մայր Աթոռ» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
*

Դեկտեմբերի 20-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

*
*

Դեկտեմբերի 22-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
*

Դեկտեմբերի 25-ին, շաբաթ.—Տոն Սրբոյն Ստեփաննոսի նախավայրի և առաջին մարտիրոսի:

Այսօր, առավոտյան, տեղի է ունենում հանդիսավոր ժամերգություն:

Ժամերգության ավարտին Մայր տաճարի լուսարարապետ Ս. Հուսիկ արքեպ. Սանթրոյանը, սարկավագական ուրախ տոնի առթիվ, շնորհավորում է Մայր Աթոռի սարկավագներին:

Ժամը 11-ին Մայր տաճարի Ս. Ստեփանոսի խորանի վրա ս. պատարագ է մատուցում Ս. Ստեփանոս վրդ. Չաքայանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսում:

Հավարտ ս. պատարագի, Ս. Հուսիկ արքեպ. Սանթրոյանի գլխավորությամբ, սարկավագների խումբը այցելում է Վեհարան և ստանում Վեհափառ Հայրապետի հայրական օրհնություններն ու մաղթանքները:

*
*

Դեկտեմբերի 26-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Ղևոնդ քին. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ Ս. Հակոբ վրդ. Գըլլենձյանը՝ «Բնեռեա՛ ի հոգի իմ գտնակալի օր մահուն» (Ընորհալի) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
*

Դեկտեմբերի 29-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:



ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ

Սույն թվականի դեկտեմբերի 5-ին, կիրակի օրը, Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը ս. պատարագ մատուցեց և քահանայական ձեռնադրություն կատարեց ի պայծառություն Հայ Առաքելական Եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի: Արարատյան թեմի շրջանների եկեղեցիների համար քահանա ձեռնադրվեցին Պետրոս սարկավազ Քեսաբյանը, Մեսրոպ սարկավազ Ալոյանը և Հովսեփ սարկավազ Հարությունյանը՝ վերանվանվելով համապատասխանաբար Տեր Մամբրե, Տեր Մեսրոպ և Տեր Մաղաքիա քահանա: Խարտավիլակն էր Տ. Գարեգին վարդապետ Ներսիսյանը:

Ս. պատարագին և ձեռնադրության արարողությանը ներկա էին Արարատյան թեմի թեմական և եկեղեցական խորհրդի անդամներ և հոգևորականներ այլ եկեղեցիներից:

Ձեռնադրությունից և հանդիսավոր օծումից հետո Տ. Արսեն եպիսկոպոսը նորընծա քահանա հայրերի ապագա կյանքին և հոգևոր ծառայությանը նվիրված մի խրատական խոսեց:

Ձեռնադրության և օծման սրբազան արարողությանը երկյուղածությամբ և հոգեկան խոր ապրումներով հետևում էին բազմաթիվ հավատացյալներ, որոնք պատարագի ավարտին, մոտենալով նորած քահանաներին, իրենց շնորհավորանքներն ու բարեմաղթություններն էին ուղղում նրանց:

Դեկտեմբերի 6-ին, երկուշաբթի օրը, նորընծա քահանա հայրերը Վեհարանում ներկայացան Ամենայն Հայոց Հայրապետին և ստացան նրա օրհնությունը: Նորին Սրբությունը, շնորհավորելով նրանց, Իր ուրախությամբ հայտնեց և տվեց հայրական Իր թելադրությունները՝ մաղթելով, որ նրանք լինեն հավատարիմ և ավինիլ ծառայողները մեր Մայր Եկեղեցու և հավատացյալ ժողովրդի:

Նորընծա քահանա հայրերը իրենց քառասնօրյա առանձնացման և պատրաստության շրջանը անց են կացնելու Մայր Աթոռում և ապա սկսելու են իրենց հոգևոր ծառայությունը նախատեսված վայրերում:

Տ. Մամբրե քահանա Քեսաբյան. ծնվել է 1953 թվականի սեպտեմբերի 3-ին Էջմիածնի շրջանի Մոսալեռ ավանում: Նախնական և միջնակարգ կրթությունն ստացել է Էջմիածին քաղաքի Միկոյանի անվան № 1 դպրոցում: 1968 թ. ընդունվել է հոգևոր ձեմարան և սովորել մինչև 1971 թվականը:

1980 թ. վերադարձել է հոգևոր ձեմարան և շարունակել իր ուսումը քահանայից լսարանում: 1981 թ. դեկտեմբերի 26-ին ձեռնադրվել է սարկավագ Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցում:

սարանում, որի երկամյա ջրջանն ավարտել է 1981 թվականին հաջողությամբ: Նույն տարին նշանակվել է հոգևոր ծառայության Արարատյան թեմում և դեկտեմբերի 26-ին ձեռնադրվել սարկավագ:



Մի պահ ձեռնադրությունից

Տ. Մեսրոպ քահանա Ալոյան. ծնվել է 1955 թվականի օգոստոսի 20-ին Էջմիածնի ջրջանի Այգեջատ գյուղում: 1970 թվականին, ութամյա կրթություն ստանալուց հետո, ընդունվել է հոգևոր ձեմարան և սովորել մինչև 1973 թվականը: 1979 թվականին վերադառնալով հոգևոր ձեմարան՝ երկու տարի հետևել է քահանայական լսարանի դասընթացներին: 1981 թ. ձեռնադրվել է սարկավագ և ծառայել Երևանի Ս. Գևորգ եկեղեցում:

Տ. Մաղաքիա քահանա Հարությունյան. ծնվել է 1949 թվականի հոկտեմբերի 18-ին Աշտարակի ջրջանի Ուշան գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել է Էջմիածնի № 1 միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1967 թվականին: 1979 թվականին ընդունվել է հոգևոր ձեմարան և սովորել քահանայից ԼՍ-

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն ջնորհավորում է նորապսակ Տ. Մամբրե, Տ. Մեսրոպ և Տ. Մաղաքիա քահանա հայրերին՝ մաղթելով, որ նրանք իննեն «քաջ հովիվներ» մեր Մայր Եկեղեցու և իրենց ուժերն ու կարողությունները ի սպաս դնեն մեր հավատացյալ ժողովրդի կրոնական, ազգային և հայրենասիրական ծառայության նվիրական գործին՝ ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԹԵՄՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 7-ին, Գաբրիել և Միքայել հրեշտակապետաց տոնի առթիվ, Բուխարեստի հայոց եկեղեցում հանդիսավոր

սուրբ պատարագ է մատուցել Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը: Պատարագի արարողությանը ներկա են եղել բազմաթիվ հայ հավատացյալներ և օտար հյուրեր:

Հավարտ սուրբ պատարագի Ս. Տիրայր արքեպիսկոպոսի նախագահությամբ կատարվել է հատուկ հոգեհանգստյան պաշտոն՝ նվիրված Ռումինիայի հանգուցյալ առաջնորդ Ս. Հուսիկ արքեպիսկոպոս Չոհրաբյանի մահվան 40-րդ տարելիցին:

Պատարագից սրբական հայրը հուպիչ խոսքերով ոգեկոչել է պայծառ հիշատակը ռումինահայ թեմի նախկին առաջնորդի՝ սեղմ գծերի մեջ ներկայացնելով նրա կյանքն ու եկեղեցանվեր գործունեությունը և ընդգծելով այն կարևոր նպաստը, որ հանգուցյալ առաջնորդը բերել է ռումինահայ գաղութին համաշխարհային երկրորդ պատերազմի դժվարին տարիներին:

Այս առթիվ Ս. Չարեն ծայրագույն վարդապետ Պարոնյանը եկեղեցում, ի ներկայության հավատացյալ ժողովրդի, ընթերցել է Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Ս. Վազգեն Ա-ի 29 հոկտեմբեր 1982 թվակիր հետևյալ հեռագիրը՝ ուղղված Ս. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանին.

«Խոր գոհունակությամբ տեղեկացանք Ձեր հեռագրեն, թե Սուրբ Հրեշտակապետաց ձեր եկեղեցվո մեջ նոյեմբերի 7-ին հանդիսավոր պատարագով և հոգեհանգստյան պաշտոնով պիտի աղոթեք Ռումանիո լուսաբնակ առաջնորդ Ս. Հուսիկ արքեպիսկոպոսի մահվան տարեդարձին առթիվ:

Հուսիկ արքեպիսկոպոս, հավատավոր և ուխտապահ բարձրաստիճան հոգևորական, մոտ քսան տարիներ արժանավորապես ղեկավարած է ռումանահայ թեմը ի հոգևոր մխիթարություն հավատացյալ ժողովրդյան, վայելելով նաև հարգանքը ռումեն պետական և կրոնական իշխանությունց:

Անձնապես ճանչցած ըլլալով Հուսիկ սրբազանը, միշտ գնահատած ենք իր նվիրումը Սուրբ Էջմիածնին, որու հարապատ գավակն էր մնացեր մինչև իր կյանքին վերջը՝ միշտ նախանձախնդիր Հայ Առաքելական Եկեղեցվո հեղինակության անարատ պահպանման և պանծացման:

Սուրբ Էջմիածենն Աստուծո օրհնությունը Հուսիկ արքեպիսկոպոս Չոհրաբյանի հիշատակին:

Լո՛ւյս և խաղաղություն՝ իր արդար հոգվույն:

Կիրակի, 7 նոյեմբերին ս. պատարագ և հոգեհանգիստ Մայր տաճարի մեջ Մեր նախագահությամբ:

Չերդ Սրբազնության, հոգևոր դասուղ և համայն հավատացյալ Մեր գավակներուն սիրո ողջույն և հայրապետական օրհնություն»:

Ս. պատարագից հետո առաջնորդարանի սրահում հանգուցյալ առաջնորդի հիշատակին տրվել է սիրո ճաշ, որին ներկա են եղել եկեղեցու հոգևոր հայրեր, թեմական խորհրդի պատվարժան անդամներ և բազմաթիվ հյուրեր:

Հուսիկ արքեպիսկոպոս Չոհրաբյանը ծնվել է 1874 թվականին Մեծ Սալայում: 1896 թվականին ավարտելով Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, մեկնում է Գերմանիա՝ շա-



րունակելու իր ուսումը: Այստեղ՝ Բեռլինի, Հելցի, Լայպցիգի համալսարաններում նա հետևում է բարձրագույն ուսմանը դասընթացներին և ավարտում համալսարանական իր կրթությունը պատմական և փիլիսոփայական գիտությունների գծով: 1916 թվականին հեռակա կարգով ավարտում է նաև Մոսկվայի համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

1905—1912 թվականներին, որպես դա-

սախոս, նա դասավանդել է Գևորգյան ճեմարանում:

1918—1920 թվականներին եղել է Նախիջևանի թեմի առաջնորդ և միաժամանակ վարել տեղի թեմական դպրոցի տեսչի պաշտոնը:

1920 թվականին Հուսիկ արքեպիսկոպոսը նշանակվում է ռումինահայ թեմի առաջնորդ, և այդ պաշտոնը նա ձեռնհասորեն և մեծ նվիրումով վարում է մինչև իր մահը՝ 1942 թվականը:

Իր եկեղեցական և վարչական աշխատանքներին պուգընթաց Հուսիկ արքեպիսկոպոսը պահպանել է նաև մտավորական աշխատանքով: Նա կանոնավոր կերպով աշխատակցել է ռումինահայ մամուլին: 1934 թվականին ավարտել և հրատարակության է տվել իր գլխավոր աշխատությունը՝ «Հայ եկեղեցու պատմությունը քրիստոնեության մուտքից մինչև մեր օրերը» վերնագրով: Այս աշխատությունը թարգմանվել է նաև ռումիներեն լեզվով:

Հուսիկ արքեպիսկոպոսը վախճանվել է Բուխարեստում: Նրա աճյունը ամփոփված է Բուխարեստի հայոց գերեզմանատան մատնան մեջ:

Հուսիկ արքեպիսկոպոսի դասընկերներն ու հոգևոր եղբայրներն են եղել Ամենայն Հայոց հանգուցյալ կաթողիկոսներ խորեն Ա Մուրադբեկյանը, Գևորգ Զ Զորեքչյանը և Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանը:

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄՈՒՄ

1982 թվականի նոյեմբերի 9-ին Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը հովվական այցելությամբ Բուխարեստից մեկնել է Սոֆիա:

Նոյեմբերի 14-ին, կիրակի օրը, Սոֆիայի հայոց հոգևոր հովիվ Ս. Մեսրոպ ավագ քահանա Պենյանը տեղի հայոց եկեղեցում մատուցել է ս. պատարագ, որին ներկա է եղել Ս. Տիրայր արքեպիսկոպոսը: Պատարագի ընթացքում, ի լուր հավատացյալ ժողովրդի,

ընթերցվել է Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակը՝ ուղղված բուլղարահայ թեմի թեմական խորհրդի պնդամ, Սոֆիայի հայոց եկեղեցական վարչության բազմամյա ատենապետ Օնիկ Բյուրդյանին՝ նրա ծննդյան 80-ամյակի առթիվ:

Կոնդակի ընթերցումից հետո առաջնորդ սրբապանը արտասանել է հոգեշունչ մի քարոզ: Իր քարոզի վերջում, արտահայտվելով օրվա հոբելյարի անձի մասին, նա գնահատանքով նշել է Հայ Առաքելական եկեղեցուն և բուլղարահայ համայնքին նրա մատուցած երկարամյա անձնվեր ծառայությունը՝ բարեմաղթելով նրան քաջառողջություն և արդյունավետ աշխատանքի երկար տարիներ:

Հավարտ ս. պատարագի Սոֆիայի «Բալկան» հյուրանոցի սրահում, ի պատիվ հոբելյարի, տրվել է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա են եղել առաջնորդ սրբապան հայրը, քահանա հայրեր, թեմական խորհրդի և եկեղեցական վարչության անդամներ, ինչպես նաև գավառներից ժամանած եկեղեցական վարչությանց ներկայացուցիչներ:


Ճաշկերույթի ընթացքում բաժակաճառեր են արտասանվել և մաղթանքներ արվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, Հայոց Հայրապետի քաջառողջության ու արևշատության և մայր հայրենիքի հարաճուն բարգավաճման համար:

*
* *

Նոյեմբերի 11-ին, կարճատև հիվանդությունից հետո, վախճանվել է Սոֆիայի հայոց եկեղեցու բարերարուհի, բուլղարահայ համայնքի սիրված և հարգված անդամներից օրիորդ Թագուհի Գրիգորյանը: Հուղարկավորության և թաղման արարողությանը նախագահել է առանցքորդ սրբապանը և արտասանել մի դամբանական հանգուցյալ բարերարուհու հիշատակին՝ աղոթելով նրա բարի հոգու խաղաղության համար:

Նոյեմբերի 19-ին Ս. Տիրայր արքեպիսկոպոսը օդային ճանապարհով վերադարձել է Բուխարեստ՝ իր աթոռանիստը:





«ՅԱՅՄԱՐԱԻՈՒՐՔ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ»

ՀՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի կողմից վերջերս լույս տեսավ կարևոր մի ուսումնասիրություն, որը վերնագրված է «Յայսմաւորք ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը»: Աշխատության հեղինակն է Մ. Թ. Ավդալբեկյանը: Հրատարակությունը շատ կարևոր ներդրում է միջնադարյան հայ գեղարվեստական արձակի սկզբնավորման, նրա անցած ուղու և առանձին ժանրերի ուսումնասիրության հետ կապված հարցերի պարզաբանման համար: Գիրքը բաղկացած է երեք բաժիններից և հավելվածից: Հեղինակի նպատակն է եղել լուծել «Յայսմաւորք» ժողովածուների ծագման և վարձագման հետ կապված խնդիրները, ցույց տալ, որ նրանց հետ առնչվող չորս խմբագրությունները տարբեր են ոչ միայն տարբեր դարերում խմբագրական փոփոխությունների հետևանքով, այլև այն պատճառով, որ ուղղակի կապ ունեն հայ հասարակական կյանքի տարբեր շրջանների քաղաքական կողմնորոշման հետ: Հակառակ ձեռնարկված գործի հետ կապված առարկայական դժվարություններին, ուսումնասիրողը կարողացել է լուծել իր առջև դրված խնդիրները: Լինելով հայ միջնադարյան գրականության մասնագետ, հարգարժան ուսումնասիրողը հատկապես ուշադրություն է դարձրել «Յայսմաւորք» ժողովածուների գրական-գեղարվեստական առանձնահատկություններին: Թեև ուսումնասիրության մեջ հատուկ տեղ չէ հատկացված «Յայսմաւորք» մատյանների կրոնական արժեքին, սակայն հրատարակությունը շատ կարևոր ելրահանգումներ ունի

և ճանաչողական ու ուսուցողական տեսակետից շատ օգտակար է նաև մեզ՝ եկեղեցականներիս համար:

Գրքի առաջին բաժինը վերնագրված է «Հայ գեղարվեստական արձակը արարողական գրականության շերտերում»: Այս վերնագրի տակ համառոտակի խոսվում է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցում ամենօրյա ժամերգությունների ընթացքում օգտագործվող ծիսական մատյանների մասին, որոնք անբաժան մասը կապվելով մեր Եկեղեցու ծեսին՝ մեծապես նպաստել են նաև Հայ Եկեղեցու ազգային դիմագծի և ինքնության պահպանմանը: Բացի մեզ ծանոթ ծիսական մատյաններից, վաղ միջնադարից սկսած, մեր եկեղեցիներում կամ կրոնական հանդիսությունների ժամանակ, ինչպես ասվում է ուսումնասիրության մեջ, օգտագործվել են նաև «Յայսմաւորք», «Վկայագիրք», «Գանձարան», «Քարոզգիրք» և այլ մատյաններ, որոնք իրենց բովանդակությամբ բացառապես կրոնական լինելով հանդերձ «ունեցել են մարդկանց գիտակցության ու զգացումների վրա ներգործելու, բարոյակրթելու և այլ հատկանիշներ, որով դուրս են եկել նեղ արարողական սահմաններից ու ծավալվել մինչև գեղարվեստական գրականության ոլորտները, արարողական լինելով հանդերձ նրանք օժտված են գրական-գեղարվեստական արժեքով»:

Հեղինակը կոտ տրամաբանությամբ ընթերցողին է հասցնում այն միտքը, թե միջնադարյան մեր գրական ու պատմական աղբյուրները որոշակի խմբագրման են ենթարկվել դարաշրջանի պահանջների հա-

մեմատ: «Յայսմատութիւն» ժողովածուները նույնպէս, ինչպէս միջնադարյան կրօնական, գրական ու պատմական աղբյուր, անխուսափելիորեն ենթարկվել են խմբագրման՝ «սեբոնդներին թողնելով դարաշրջանը ներկայացնող մնայունը՝ ժամանակի ընդհանրացված, կերպավորված վերարտադրումը, մարդու միջոցով ընկալված միջավայրի գնահատականը՝ համամարդկայինն ու ազգայինը, համաժողովրդականն ու պատմականորեն առաջիմականը»: «Յայսմատութիւն», «Տոնական», «Ճառքնտիր» և այլ ժողովածուներ խմբագրել և նրանցում որոշակի փոփոխություններ ու ազգային սրբերի տոներ են մտցրել հիմնականում Գրիգոր Բ Պահլավունի Վկայասեր (1066—1105 թթ.) և Գրիգոր Անավարպեցի (1293—1307 թթ.) կաթողիկոսները, ինչպէս նաև Վանական վարդապետի աշակերտներ՝ Խաչենի եպիսկոպոս Տեր Իսրայելը, Կիրակոս վրդ. Արևելցին և Գրիգոր Ծերենց Խլաթեցի նահատակը: Հեղինակը խոսելով «Յայսմատութիւն» ժողովածուների խմբագրական փոփոխությունների մասին, եկել է այն եզրակացության, որ նրանք («Յայսմատութիւնները») չունեն ոչ միայն որոշակի ու ճշգրտված բովանդակություն, այլև դրանցից մի մասի վրա որոշակիորեն զգացվում է հունական «Յայսմատութիւններ» ազդեցությունը, ուրիշ մի մեծ խումբ ձեռագիր «Յայսմատութիւններ» վրա՝ լատինական և եբրայա-ասորական համալսն ժողովածուների ազդեցությունը: Մեկ հասած «Յայսմատութիւն» մատյանների մի մասն էլ անվիճելիորեն իր վրա ունի հայկական կնիք:

Հայոց եկեղեցիներում մինչև Ժ դարը փաստորեն գոյություն չունեին «Յայսմատութիւն» լրիվ թարգմանությունը: Այն մեզանում առաջին անգամ թարգմանվել է Հովսեփ Կոստանդնուպոլսեցու կողմից 991—992 թթ. վականներին: Մինչ այդ մեր եկեղեցին օգտագործում էր առանձին թարգմանված սղորքոց վարքերը: Ուսումնասիրողը համեմատելով «Տոնական» և «Ճառքնտիր» ժողովածուների բովանդակությունը, ցույց տալով նրանց տարբերությունները և արժեքավորելով դրանք որպէս գրական ժողովածուներ, եկել է այն եզրակացության, որ «Յայսմատութիւն» ժողովածուների հիմքում ընկած են գլխավորապէս ճառքնտիրները, ինչ-որ չափով նաև՝ «Տոնականները», թեև դրանցից և ոչ մեկը հատկապէս չի հանդիսացել հայ «Յայսմատութիւն» նախահիմքն ու նախօրինակը: Կարևոր իրողություն է նաև այն փաստը, որ թե՛ «Ճառքնտիրները» և թե՛ «Տոնական» ժողովածուները թեև սկիզբ են առել համաքրիստոնեական նույնանուն ժողովածուներից,

սակայն մեր եկեղեցու երանելի հայրերը, թարգմանելով դրանք, նախապէս տվել են դրանց ազգային դիմագիծ, հարմարեցրել են մեր եկեղեցու և ազգի շահերին և դրանից հետո միայն դարձրել մեզ համար ծիսական սրբական մատյան:

Գրքի այն էջերում, որտեղ խոսվում է «Ճառքնտիրների» և «Տոնականների» խմբագրությունների մասին, իր ամբողջ տիտանական մեծությամբ, ազգի և Ս. Եկեղեցու շահերի նկատմամբ իր ունեցած մտահոգություններով մեր առջև է կանգնում Գրիգոր Բ Վկայասեր Պահլավունի Հայրապետը, որը սերում էր Պահլավունիներից: Նշանավոր այս Հայրապետն էր, որ հեռավոր Կիլիկիայում, բազմելով Հայոց Հայրապետական Գահին, մարգարեական հեռատեսությամբ գուշակում էր գալիք ժամանակների անմխիթար ու դժբախտ այն վիճակը, որին պիտի ենթարկվեր Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը Կիլիկիայում: Գուցե այդ է պատճառը, որ բազմերախտ Հայրապետը, ականատես լինելով իր ժողովրդի, եկեղեցու և օտար նվաճողների ողորմածությանը հանձնված Մայր Հայրենիքի անմխիթար ու դժբախտ վիճակին, ելք էր որոնում Հայրապետական Աթոռի հետ միասին հայրենադարձվելու հավերժական Արարատի հովանու ներքո գրտնըվող քրիստոսահաստատ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Միայն քաղաքական դժբախտ պարգաները խանգարեցին մեծ Հայրապետին այդ օրերին իրականացնելու հայրենադարձությունը: Նշանավոր այս անձի հետ է առնչվում մեր «Ճառք» գրքի մեջ փոփոխություններ մտցնելու ճանապարհով մի նոր «Ճառք» գիրք ստեղծելու ջնդհակալ գործը, որն ինչ-որ չափով նման էր օտարածին «Յայսմատութիւն» իր կայուն օրերով, բայց նաև ներառում էր իր մեջ հայկական սրբերի հիշատակին նվիրված տոները: Փաստորեն մինչև Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի ժամանակները (ԺԱ—ԺԲ դդ.) Հայաստանյայց եկեղեցում չկար սրբոց տոնակատարության տոմարական միօրինակություն: Այդ հանգամանքը հսկայական դժվարություններ էր ստեղծում եկեղեցականների համար: Բազմերախտ Հայրապետը, կայունացնելով «Ճառք» գրքում եղած տոնակարգը, հաստատեց նաև ազգային սրբոց տոներ՝ համապատասխան սաղմոսներով և ընթերցվածներով: Ուսումնասիրողը հենց այս փոփոխություններն էլ համարում է «Ճառքից», «Յայսմատութիւն» տանող ճանապարհի առաջին քայլը: «Յայսմատութիւն» և «Ճառք» մատյանների ստեղծման ակունքները բոլոր եկեղեցիների համար բնականաբար նույնն են, բայց Հայաստանյայց եկեղեցու և մեր ժողովրդի հա-

մար դրանք կրկնակի կարևորություն և արժեք են ստանում, քանի որ այդօրինակ սըրբազան մատյաններ ստեղծելու, օրինականացնելու և ամրապնդելու գործի հետ մեկտեղ մեր Եկեղեցու սրբազան հայրերը մտահոգված են եղել նաև դրանց ազգային շունչ ու հոգի տալու շատ կարևոր խնդրով: Այսպիսի ազգային ու եկեղեցական մեծ հոգսերով ապրող գործիչ էր Գրիգոր Բ Պահլավունի Վկայասեր կաթողիկոսը, որի կատարած տիտանական աշխատանքը «Ճաշոց» գրքի հայկականացման գործում, մեծապես գնահատելի է, հատկապես, երբ նկատի ունենանք ԺԱ դարի Հայ Եկեղեցու և հայ հայրենիքի ծանր վիճակը, մանավանդ որ «Չայս ևս մտածեալ, եթէ վերկու պսակն փառաց յոյնք առ ինքեան տարան ի հայոց մեծաց՝ զկաթողիկոսութիւն եւ պթագաորութիւն» (էջ 39): Վկայասեր Հայրապետի ստեղծած «Ճաշոց» գիրքը իր տոմարական ամսաթվային կայուն տոնակարգով, ազգային սրբոց շարքով և մասնավորաբար իր ազգային շնչով ու ոգով սահմանապատելու էր գալիս հույների կողմից վտանգի ենթարկված Հայաստանյայց Եկեղեցին ու հայ ժողովուրդը՝ սատարելով նրանց ինքնուրույնության պահպանմանը:

Հայ «Յայսմատուրքների» ծագումը փաստորեն սկսվում է Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի կողմից «Ճաշոց» գրքի դասավորումով, որը հետագայում Խաչենի եպիսկոպոս Տեր Իսրայելի և Կիրակոս Արևելցու ջանքերով հարմարեցվում է Հովսեփ Կոստանդնուպոլսեցու կողմից թարգմանված 991—992 թթ. հունական «Յայսմատուրքի» տոնակարգին՝ առավել ճոխացնելով այն հայ ազգային սրբոց շարքով:

Բավական բարդ և դժվար ճանապարհ է անցել հայ «Յայսմատուրքը», որն իր ազգային շնչով ու ոգով եղել է «հայ միջնադարյան մարդու հոգեկան աշխարհը ձևավորող կարևոր մի հուշարձան»: Աշխատասիրողը գիտական մեծ բարեխղճությամբ և պրոֆեսիոնալ բարձր մակարդակով բանասիրական քննության է ենթարկել Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և մյուս ձեռագիր հավաքածուներում պահվող բազմաթիվ «Յայսմատուրքներ»՝ ձեռագրական համեմատական աշխատանք կատարելով դրանց վրա: Համեմատական շատ ծանր ու բծախնդիր այդ աշխատանքից հետո միայն ուսումնասիրողին հաջողվել է ի հայտ բերել մեզ հայտնի չորս խմբագրությունների բովանդակության և տոմարական դասավորության տարբերությունները: Այդ բոլոր խմբագրությունների հիմքում ընկած է Տ. Իսրայել եպիսկոպոսի կողմից խմբագրված հայաշունչ

«Յայսմատուրքը», որի «Դիմագիծն ու դեմքը լրիվ հայկականացրեց, ազգայնացրեց, հարուստացնելով այն հայ իրականության արտացոլումով, հայ կյանքի դրվագներով և հայ գործիչների սրբացման պատմություններով»: Տ. Իսրայել եպիսկոպոսը այդ աշխատանքը կատարեց մոնղոլական տիրապետության ծանր պայմաններում, երբ մեր բազմաչափ հայրենիքը դժոխք էր դարձել, որտեղ միայն հոգով ու ժողովրդով մարդիկ կարող էին դիմանալ, և իրենց դժբախտ հայրենիքի սիրտ համար հանձն առնել սովը, աղքատությունը, հարապատների կորուստը, մարդկային արժանապատվության նվաստացումը: Անսահմանորեն դաժան ու անորոշ այդ ժամանակներում Խաչենի Տ. Իսրայել եպիսկոպոսը, ելակետ ունենալով մեր Եկեղեցու և ազգի շահերը, «ստեղծել է ազգային կյանքն արտացոլող կրոնական ու պատմա-քաղաքական նպատակներ հետապնդող մի «Յայսմատուրք», որը ամեն օր գործածության մեջ լինելով՝ սատարելու էր ազգապահպանման և եկեղեցապահպանման վսեմ գործին»: Եկեղեցապաշտպան ու հայրենապաշտպան այս մտահոգությունն էր միացնում Գրիգոր Վկայասեր կաթողիկոսին, Տ. Իսրայել եպիսկոպոսին, Կիրակոս Արևելցուն և Գրիգոր Ծերենց Խլաթեցուն, որոնք դարձան հայ «Յայսմատուրքի» խմբագրողներն ու սրբազան այդ Մատենին հայկական դիմագիծ, ոգի ու շունչ տվողները: Մեր Եկեղեցու և մշակույթի պատմության մեջ երախտագիտությամբ պիտի հիշվի հայաշունչ խմբագրությամբ «Յայսմատուրքը»՝ խոր հարգանքի արժանացնելով նրա հեղինակներին, որոնց ջանադիր աշխատանքի շնորհիվ մեր Եկեղեցին ԺԳ դարի կեսերից սկսեց գործածել համաքրիստոնեական, բայց նրա հայկական խմբագրության շնորհիվ ազգային կերպարանք ստացած «Յայսմատուրքը»:

Ներկայացվող գրքի երրորդ բաժինը վերնագրված է «Յայսմատուրք ժողովածուների պատմագրական արժեքը»: Այս գլխում հարգելի ուսումնասիրողը «Յայսմատուրքները» ներկայացրել է որպես գրական ու պատմական արժեք ունեցող գործեր: Մասնագիտական վերլուծության եթևարկելով գրքում ընդգրկված ողջ նյութը, հեղինակը ընթերցողին ամենաառնչվող փաստերով պարզաբանում է, որ «Յայսմատուրքում» տեղ գտած սրբերի, մանավանդ ազգային սրբերի վարքերում ըստ էության արտացոլվել են որոշակի պատմական ժամանակահատվածի երևույթներ, որոնք ավելի են հարստացնում ու գրավիչ դարձնում այն: Այս իմաստով, «Յայսմատուրքը» մեծապես օգտակար կարող է լինել նաև հայ միջնադարյան պատմության հար-

ցերով պաշտօնը պատմաբանի, աշխարհագրագետի և մեր հարևան ժողովուրդների պատմությունը ուսումնասիրող գիտնականների համար, քանի որ սրբի կյանքը նկարագրող ամենահավաստի լրացուցիչ տեղեկություններ էր հաղորդում նաև ժամանակակից դեպքերի, քաղաքական ու կրոնական կարևոր անձանց մասին:

«Յայսմատուրքը» միջնադարյան Հայաստանի բնակիչների համար եղել է ամենասիրելի և շատ կարդացված մատյաններից մեկը: Միջնադարում այն փաստորեն հանրագիտարանի դեր է կատարել, քանի որ սրբական այդ մատյանի միջոցով հայ մարդը ոչ միայն ճանաչել է ընդհանուր Եկեղեցու աչքի ընկնող սրբացած դեմքերին, այլև իրապես է դարձել հայ ժողովրդի պատմական ճակատագրի մեջ բախտորոշ դեր կատարած այնպիսի իրադարձությունների, ինչպիսիք էին քրիստոնեության մուտքը Հայաստան (Ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված տոներ), Հայ գրի՝ և գրականության սկզբնավորումը (Ս. Մեսրոպ Մաշտոց, Ս. Սահակ Պարթև և Թարգմանչաց տոներ), ապատագրության պայքարի էջերից՝ Վարդանանց և Ղևոնդյանց հերոսամարտը, արաբական տիրապետության շրջանից՝ Վահագն Գեղթեցու և Նախիջևանի նահատակությունները, սելջուկ-մոնղոլական ջրջանից՝ Խոսրով Գանձակեցու և Հովսեփ Դվնեցու նահատակության պատմությունները և այլն: Նույնքան ունանելի ու կարևոր են նաև անհատ կրոնական ու ազգային սրբացած մեծ գործիչների՝ Ստեփանոս Սյունեցու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Վկայասերի, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տաթևացու և այլոց վարքերը, որոնց շնորհիվ սերունդների հիշողության մեջ ամրապնդ-

վում էին մեր ժողովրդի և Հայաստանյայց Եկեղեցու անցյալի պատմության հերոսական ու փառավոր էջերը: Ազգի, հայրենիքի և Հայոց Առաքելական Եկեղեցու անկախության և հարատևման համար մարտնչած, տառապած, պատերազմի դաշտում նահատակվածները դառնում էին սրբացած կերպարներ և Եկեղեցու միջոցով խոսում սերունդների հետ, արթուն պահելով նրանց հայրենասիրության և եկեղեցասիրության ոգին:


Ավարտելով սույն գրքի ուշադիր ընթերցումը՝ կինոժապավենի նման գիտակցությանը միջից անցնում են «Յայսմատուրքում» տեղ գտած ազգային և ընդհանուր Եկեղեցու սրբացած դեմքերը, որոնք մարտիրոսացան և իրենց թափած արյամբ ամրացրին Քրիստոսի Եկեղեցին: «Յայսմատուրքը» դարերի բովից անցած սրբական այն մատյանն է, որի բյուրեղյա բովանդակությունը, խստապահանջ ժամանակի ընկալմանը դիմանալով, մշտապես օգնել է մարդկանց լինելու ապնիվ, հոգով մաքուր, բարեպաշտ, եկեղեցասեր:

Մ. Թ. Ավդալբեկյանի հեղինակությամբ հրատարակված սույն ուսումնասիրությունը մեծ ավանդ է հապարամյա դպրություն ունեցող մեր ժողովրդի միջնադարյան գրականության և նրա առանձին ժանրերի ուսումնասիրման հետ կապված կնձռոտ ու դժվարին հարցերի լուսաբանման գործում:

Հրատարակությունը մեծապես կօգնի ոչ միայն միջնադարյան հայ մշակույթի հարցերով պաշտօնը մասնագետներին, այլև բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են նաև հայ միջնադարյան հոգևոր մշակույթի հարցերով:

ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ԲԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ





ՄՈՒՆՐԵՆԻՄԻ «ՕԽՏԸ ԴՌՆԻ» ՎԱՆՔԸ

Տողաձորն ընդգրկում է Լեռնային Ղարաբաղի Հանրության շրջանի Վեդատեսիլ անկյուններից սեկը՝ Իշխանագետի շրջաժանի լանջերը: Կուսական լայնասողարթ խիտ անտառներով ու մրգաշատ այգիներով պատած լեռներն ու ձորակները, թավշյա մարգագետիններն ու մշուշով պարուրված ժայռածերպերը, արծաթափայլ գետակներն ու սառնորակ աղբյուրները մի առանձին հմայք են տալիս անպուգական հովտին:

Եվ, արդյոք, կա՞ այլ հովիտ, որ ավելի գեղեցիկ ու առատաբեր լինի, քան Իշխանագետի հովիտն է իր 18 հայկական գյուղերով, 12 վանքային համալիրներով, 72 եկեղեցիներով, 45 բնակատեղիներով, 68 հին գերեզմանատներով, 11 միջնադարյան կամուրջներով, 7 խոշոր ամրոցներով, 2 բերդաքաղաքներով, 13 իջևանատներով, 6 քարեդարյան կացարաններով, 137 աղբյուր-հուշարձաններով, 350-ից ավելի խաչքարերով ու բազմաթիվ այլ բնույթի հուշարձաններով հանդերձ: Անցյալի կառույցների քանի հարյուրերորդ մասն են կապում այս կոթողները, որոնք արձանագրվել են մի հովտում, որի երկարությունը 25—30, իսկ լայնությունը 7—10 կիլոմետր է: Բոլոր այս հուշարձանների համագումարը, թագն ու պսակը, անցյալի ճարտարավեսի պերճախոս վկան Գտչավանքն է: Նրանից դեպի հարավ-արևմուտք «Օխտը դռնի» վանքն է, էլ ավելի բարձր՝ Կատարովանքը, ապա՝ Գոռով բերդը, ցածում՝ Կարմիր եկեղեցին, անտառի մեջ՝ ձոխտ Պրորվա ծառի վանքը, դեպի արևելք՝ Մարխաթուն, Կախան, Սոնեգա անուններով վանքերը, Գրիգոր Նարեկացի եկեղեցին: Իշխանագետի աջ ափին Կավաքավանքն է, Վնեսա ամրոցից հյուսիս՝ Ծաղկավանքը: Թաղոտ գետակի վրա կախված լեռան ուստին՝ ձվավանքը, Յոթ խաչ վանքային համալիրները, դիմացը՝ Քթիշ բերդը, Իշխանագետի վրա Իգյակոց, Տողի, Հիլիվորի, Հաթամի կամուրջ-

ները, ափերին՝ Հայկապն, Տախես Կարմրաքար բնակատեղիները:

• • •

Գտչավանքից ոչ այնքան հեռու, Մոխրենիս գյուղից 3,5 կիլոմետր հյուսիս-արևմուտք, Յուդուսեն լեռան ուստին է գտնվում «Օխտը դռնի» վանքը¹: Տեղի չքնաղ բնությունն իր վարմանալի հարստությամբ մի առանձին հրմայք ու ներդաշնակություն է տալիս վանական համալիրին: Լեռնաշղթան, առավել ևս նրա լանջերը ծածկված են թանձրախիտ անտառով: Եվ հանկարծ այդ ամենի մեջ այցելուի առաջ հանում է մի շատ հին ու ինքնատիպ վանք: Թերևս այն հայտնի է և համարվում է երկրամասի հնագույն ու լավագույն հուշարձաններից մեկը, այնուամենայնիվ վաղուց ի վեր աննկատ է մնացել ու չի գրավել հետապոստոսների ուշադրությունը:

Գրականության մեջ «Օխտը դռնի» վանքին ընդամենը մի քանի տող է հատկացված²: Նշված է վանքի տեղը և մեկ էլ եկեղեցու խորանների (աբսիդների) քանակը: Այսքանը միայն: Մինչդեռ եկեղեցին հետաքրքիր է թեկույ այն առումով, որ այն իր հատակագծով առ այսօր միակը լինելով պատմական Արցախ նահանգում, պատկանում է գիտական գրականության մեջ անվանված «Ավան-Հոփսիմե» տիպի սակավաթիվ հուշարձանների ընտանիքին և անշուշտ պետք է դի-


¹ «Օխտը դռնի» անունով մեկ այլ հուշարձան էլ (ավերակ վիճակում) գտնվում է այստեղից մի քանի կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք, Տումի գյուղի տարածքում:

² Մակար Եպիս. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 78: Ը. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, էջ 83:

Մեկ Եպիս Եպիս, VIII հրդ
59 26.27

տարկվի հենց այդ կառույցների հետ բաղդատելով³:

«Օխտը դռնի» վանքի եկեղեցու կառուցման ստույգ թվականը հայտնի չէ, սակայն ճարտարապետական ձևերի, վարդաքանդակների և տարածա-ծավալային մանրամասն դիտարկումը թույլ է տալիս ենթադրելու, որ այն կառուցվել է 5-րդ դարում:




Նկ. 1. Ուղեցույց քարտեզ

Վանական համալիրը բաղկացած է եղել մի քանի շենքերից, որոնցից համեմատաբար լավ պահպանվածը եկեղեցին է: Մյուս օժանդակ շինությունների ավերակները գրտնըվում են եկեղեցուն կից, նրա հյուսիս-արևմտյան մասում: Գետնի երեսին, պեկերի մեջ աճած ծառերի արանքում չեն պահպանվել բավարար քանակությամբ նյութեր, և դժվար է դրանց մասին հստակ որևէ բան ասելը:

Եկեղեցու ամբողջ կառուցվածքից երևում է, որ հետագա դարերում վերանորոգումներ չեն եղել, դրա համար էլ հատակագիծը և ծավալային հորինվածքը մնացել են անփոփոխ:

Եկեղեցին միջին մեծության շինություն է. հանդիպակաց մեծ խորանների հեռավորությունը ներսից 8-ական մետր է: Նման հատակաձևը ներկայացնում է այն տիպը, որը որոշ տարբերակներով օգտագործվում էր Հայաստանում 5—7-րդ դարերում և հետա-

գայում: «Այն, որ այս տիպի տարբեր տաճարներում, երբեմն այս կամ այն չափով տարբեր են ներքին մասերի, այսինքն երկար ու կարճ առանցքների թվային հարաբերությունները, կամ ինչ-որ ձևով տարբեր են արտաքին պարագծերը, նույնիսկ տարբեր են անկյունային սենյակների քանակն ու ձևերը, միևնույն է դրանք մի ստեղծագործություն են: Այդ բոլորի մեջ նույնն է ներքին հատակաձևը և որ գլխավորն է՝ տվյալ տիպի ամենաբնորոշ և պարտադիր առանձնահատկությունը՝ անկյունային մասերի լուծման եղանակը 3/4 խորջերի ձևով⁴: Այդ տիպի հուշարձանները ճարտարապետության պատմության մեջ նշված են մեկ ընդհանուր անունով՝ «երեք քառորդ խորջերով քառակոնիս» (տետրանկոնիս) տաճարներ⁵:



Նկ. 2. «Օխտը դռնի» եկեղեցու (V դ.) հատակագիծը


«Օխտը դռնի» եկեղեցու զմբեթատակ տարածությունը ներառված է երկու մետր բացվածքով և մոտավորապես հավասար խորությամբ չորս պայտաձև, խաչաձև դասավորված առանցքային խորաններով և բացվածքով դեպի կենտրոն ուղղված չորս փոքր 3/4 անկյունագծային որմնախորջերով, որոնք հենախորջերի դեր են կատարում՝ ապահովելով զմբեթի անկյունային փոխանցումների կայունությունը⁶:

⁴ Տիրան Մարության, Ավանի տաճարը, Երևան, 1976, էջ 4:

⁵ Նույն տեղում:

³ Ինչպես հայտնի է, այս տիպի հուշարձաններից մինչև այժմ արձանագրվել են 20 եկեղեցիներ, որոնցից 13-ը գտնվում են Հայաստանում (այդ թվում 6-ը՝ Արևմտյան Հայաստանում), 7-ը՝ Վրաստանում: Նույնատիպ 21-րդ հուշարձանը «Օխտը դռնին» է՝ Արցախի նահանգում, 4-րդ դարում կառուցված Ամարաս և Կատարովանք քրիստոնեական առաջին տաճարների հարևանությամբ:

Եկեղեցու արտաքին ձևը, որն արտահայտում է նրա ներքին կառուցվածքը, ներկայացնում է մի վարդյակ՝ կապված չորս մեծ և չորս փոքր կիսաբոլորակ թերթերով: Խորանների և որմնախորշերի միջև կան կիսաբոլորակ տեսքով որմնապույուններ, որպիսիք չեն հանդիսւում այդ տիպի հայկական մյուս հուշարձաններում: Գմբեթակիր կամարների արանքում, որմնախորշերի վերևում պահպանված քարե շարվածքը թույլ է տալիս ա-



Նկ. 3. «Օխտը դոնի» վանքի եկեղեցու կտրվածքը արևելք-արևմուտք առանցքով

սելու, որ գմբեթատակ բազմանկյունը ութանկյուն է: Առանցքային խորանների և 3/4 խորշերի եզրակամարները հենվում են որմնամույթերի խոյակների վրա: Խոյակները ութն են, որոնցից արևելյան խորանի որմնապույունների երկու խոյակները քանդակազարդ են, մյուսը ոչ մի տեղ չհանդիպող հևառձ, ատամնազնդիկաշար պարզագույնով պսակված:


Տաճարը, բնցառությամբ խոյակների, ամբողջապես կառուցված է անտաշ և կոպտատաշ քարերով: Կառույցի շինարարական արվեստում տիրապետում է հետևյալ սկզբունքը՝ յուրաքանչյուր շարք խոշոր քարերից հետո, հաջորդ շարքը իրականացված է մանր քարերով: Պատերը հաստ են՝ 105—135 սմ: Հեռաքրքրական են որմնապույունները, որոնք չեն պատվում և նրանց շարվածքը համաձուլված է խորանների շարվածքի հետ՝ կապմեով նրանց շարունակությունը: Եկեղեցու միակ մուտքը բացվում է արևմտյան խորանից: Այն իր բացվածքով ուղղված է արևելք-արևմուտք առանցքից 30 աստիճանով դեպի հարավ: Դռան (պնությունը 105 սմ) բարավորի միակտոր քարից վերև ոչինչ չի պահպանվել: Մասամբ բարվոք վիճակում են հարավային և հյուսիսային պատերը: Հյուսիսային խորանի մասում շենքը կանգնած է

մինչև թմբուկի տակը: Միակ պահպանված լուսամուտը բացվում է հյուսիսային խորանից, որը արտաքին մասում քանդված է: Տաճարը ծեփված է եղել կրաշաղախով, որից տեղ-տեղ հետքեր են նկատվում:

Եկեղեցու երկրորդ հարկաբաժինը գմբեթն էր, որի ծանրությունը բաշխվել էր առանցքային պայտաձև կամարների և անկյունագծային հենախորշերի վրա: Դժբախտաբար գմբեթը լրիվ փլվել է և թափվել աղոթասրահի ներսը:

Թե ինչպիսին էին գմբեթի ներքին և արտաքին հորինվածքը, լուսամուտների երեսակները, դժվար է առանց պեղումների հավաստի տեղեկություններ հայտնել:

Հեռաքրքիր է, որ նույնատիպ մի այլ հուշարձան էլ նկարագրել է Թորոս Թորամանյանը: Այն գտնվում է Արթիկի շրջանում՝ Հոռոմ գյուղի հյուսիս-արևելյան բարձունքի վրա: Նա գրում է. «Շենքը ունի միջակ մեծություն և հատակագիծը վարդաձևի նման է: Առաջին և վերջին օրինակն է, որ տեսնում եմ այսօրինակ շինության նախաքրքիստոնեական ավերակների մեջ: Անհավասար մեծությամբ կիսաբոլորակ աբսիդներով շրջապատված էր այս շենքը՝ ներսից և դրսից




Նկ. 4. «Օխտը դոնի» եկեղեցու աքսոնոմետրիկ կտրվածքը

միանգամայն որոշ: Սև բազալտի անձև քարերով կապված է այս շենքը և շատ աննշան չափով, մուրճի հարվածների տակ պոչերը հազիվ կանոնավորված են»⁷: Մեջքերված նկարագրությունից պարզ երևում է, որ նա լիովին նման է դիտարկվող եկեղեցուն:

⁶ Սո. Մազականյան, Երևանը և նրա շրջակայքը, Երևան, 1971, էջ 33:

⁷ Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, 1942, էջ 18:

«Օխտը դռնի» եկեղեցին 5—7-րդ դարերում կառուցված քառակոնի տիպի հուշարձաններին նման լինելով հանդերձ, ինքնատիպ է և իր մեջ ներառելով քրիստոնեական առաջին պաշտամունքային կառույցների



Նկ. 5. «Օխտը դռնի» եկեղեցու հյուսիսային հատվածի ներքին տեսքը

բնորոշ ճարտարապետական տարրեր (խորանների հավասար մեծություն, կամարների ընդգծված պայտաձևություն, պատերի զգալի հաստություն, որմնամույթերի խիստ հնաճ խոյակներ, և այլն), ունենալով ավելի նախնական հորինվածք, քան մինչև օրս հայտնի բոլոր նույնատիպ հուշարձանները, հանդիսանում է նրանց համար նախօրինակ ու պետք է ենթադրել, որ այն կառուցվել է 5-րդ դարում:

7-րդ դարի մատենագիր Մովսես Կաղանկատվացու պատմությունից գիտենք, որ 5-րդ դարում Արցախ-Ուտիքյան հայաշխարհի փոքրիկ թագավորության հիմնադիր Վաչագան Բարեպաշտը կառուցել է տվել տարվա օրերի թվով վանքեր ու եկեղեցիներ⁸, հետևապես բացառված չէ, որ հայոց Արևելից կողմանց գավառներում, որտեղ հուշարձանները ոչ միայն չեն ուսումնասիրված, այլև հաշվառված չեն, հանդես գան նույնատիպ տաճարներ ևս:


Վանքի տարածքում չեն պահպանվել վիճակներ, բացի ավելի ուշ շրջանի պատկանող երկու խաչքարերի արձանագրություններից: Խաչքարերից մեկը ընկած է եկեղեցու արևելյան խորանի խորքում, իսկ մյուսը՝ նրանից դեպի հարավ-արևմուտք, 150մ. հեռու գտնվող մի ավերակ մատուռում: Առաջին խաչքարը 10—12-րդ դարերի ոճով կերտված կոթողներին հատուկ առանձնահատկություն-

ներով պարզ խաչի տեսք ունի: Միջինից փոքր՝ 45×60 չափերի խաչքարը երկված է եռանկյուններով: Վերին մասում, խաչի թևերի կողերից՝ ուսեր են, ծայրերից կախված խաղողի ողկույկներով: Ներքևի մասում խաչքարն ունի անթվագիր հետևյալ արձանագրությունը՝

ՅԻՇԵԱՅ ՔՍ ԱԾ
ԶԱՇՈՏ ԵՒ ՈՂՈՐՄԵԱՅ

Երկրորդ խաչքարը թվագրված է և ունի հետևյալ արձանագրությունը՝ Հ. թվ: ՆՂԳ: ԶԿԱՆԴԻԼԻՆ ՄԻ(ԱԲ)ԱՆ ՈՎ ՍՈՒՐԲ ՏԵՐՈՒՆԻ ԲԱՐԵՆԱԽՍԵ ԱՌ ՔՍ:

Այս խաչքարը Լեռնային Ղարաբաղի տարածքում մինչև այսօր հայտնի ամենահին թվագրվածն է և կերտվել է Ամարասի հովտում պահպանված Ղազարի խաչքարից 47 տարի շուտ՝ 1044 թվականին:





Նկ. 6. «Օխտը դռնի» եկեղեցու հյուսիս-արևելյան որմնամույթի խոյակը

«Օխտը դռնի» վանքը, գտնվելով Դիզակի վարչական կենտրոն Դոդի և եպիսկոպոսանիստ Գտչավանքի մոտերքում, բնականաբար եղել է Դիզակի իշխանների հովանավորության տակ: Վանքից մի քանի կիլոմետր

⁸ Մովսեսի Կաղանկատուացու, Պատմություն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 387: Բազում Ուրբարյան, Գանձասար, Երևան 1981, էջ 4:

հեռու են գտնվում նշանավոր Քթիշ և Գոռու բերդերը, որոնք հիշվում են Թովմա Արծրունու պատմության մեջ, արաբական նվաճող-



Նկ. 7. «Օխտը դռնի» վանքի մոտի մատուռում
դրված խաչքարը (1044 թ.)

ների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի առնչությամբ⁹: Վանքի մոտերքում է գտնվում վանական աղբյուրը, «քրոջ» անունով գերեզմանը¹⁰, իսկ ընդարձակ բնակատեղին իր փլված շենքերի հետքերով, հին տապանաքարերով, խաչքարերով հանդերձ, սփռված է անտառով մեկ և Չկռատափ տարածքում: Տեղացիների կողմից հնավայրը կոչվում է Շինատեղ:

«Օխտը դռնի» վանքը դեռ իր գաղտնիքները լրիվ չի բացել: Տեղում հնագիտական և այլ կարգի ուսումնասիրությունները անկասկած երևան կբերեն նոր նյութեր, որոնք լույս կափռեն վանքի պատմության վրա՝ թույլ տալով որոշելու նրա տեղն ու դերը հայ բազմադարյան ճարտարապետության պատմության մեջ^{*}:

ՇԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՌԱՖԻԿ ԱԲԳԱՐՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

⁹ Թովմայի Արծրունու, պատմությունն տանն արծրունեաց: Թիֆլիս, 1917, էջ 304:

¹⁰ Ավանդության համաձայն «Օխտը դռնի» եկեղեցին կառուցել է հայրենի երկրամասի պաշտպանության համար պոռված յոթ եղբայրների միակ քույրը, որի գերեզմանը կոչվում է «Քրոջ գերեզման» և նույնպես համարվում է սրբավայր: Ի պատիվ քաջամարտ եղբայրների, այստեղ եկող ուխտավորը վառում է յոթ մում: Ի դեպ, վանքի անվան ստուգաբանությունը կապվում է յոթ եղբոր և նրանց անվամբ կառուցված եկեղեցու յոթ խորանների հետ (չհաջված արևմտյան խորանը, որտեղից բացվում է դուռը):

^{*} Չափագրությունները կատարել են Ռ. Աբգարյանը և Գ. Դարբինյանը:





ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԶՈՒՅԳ ՀԱՏՈՐՆԵՐ

Վերջերս, գրեթե միաժամանակ, Երևանի պետական համալսարանի և «Սովետական գրող» հրատարակչություններն ընթերցողների սեղանին դրին միջնադարյան հայ մատենագրության երկու ականավոր գործիչների՝ Ղազար Փարպեցու և Ղևոնդ Պատմիչի հատորները¹: Առաջինը ներկայացնում է Փարպեցու «Պատմություն Հայոց» և «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկերի գրաբար-աշխարհաբար համադրական հրատարակությունը՝ ծանոթ գրող Բագրատ Ուլուբաբյանի թարգմանությամբ, ծանոթագրություններով, իսկ երկրորդը՝ Ղևոնդի «Պատմութեան» (կամ «Ժամանակագրութեան») միայն աշխարհաբար թարգմանությունը, այլև ներածություն, ծանոթագրություններ՝ հեղինակավոր բանասեր-պատմաբան Արամ Տեր-Ղևոնդյանի աշխատասիրությամբ:

Այսպիսով «Սովետական գրող» հրատարակչությունը շարունակում է «Հայաստան» հրատարակչության հիմնադրած «Հայ մատենագիրներ» մատենաշարի բարի ավանդույթները, իսկ Երևանի համալսարանի հրատարակչությունը, հայագիտական կենտրոնի եռանդուն աջակցությամբ, ձեռնամուխ է ե-

ղած լինում «Ուսանողի մատենաշարի» ծավալման շահեկան գործին:

Անգնահատելի է հայ մատենագրական (և ոչ միայն մատենագրական) կոթողները թարգմանաբար մերօրյա ընթերցողի սեփականությունը դարձնելու գործի մշակութային-պատմական, այլև դաստիարակչական նշանակությունը: Ավելին. մեր հայ մատենագիրների երկերի նաև ռուսերեն թարգմանությունը, որին նվիրվեցին հանգուցյալ ակադեմիկոսներ Հովսեփ Օրբելին, Կարո Մելիք-Օհանջանյանը և այժմ իր բեղմնավոր գործունեությունը շարունակող, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը, — մեր դպրության երանելի մեծերի համար ճանապարհ է հարթում դեպի համաշխարհային մշակույթի գանձարանը:

• •

Ղազար Փարպեցու թարգմանիչ Բագրատ Ուլուբաբյանը բավական ծանոթ է մեր նախնյաց լեզու գրաբարին, ինչպես նաև իր թարգմանած հեղինակի հետ առնչվող բանասիրական գրականությանը: Այս վերջինը պարզ երևում է գրքի ծանոթագրություններում, հակառակ որ այստեղ գերակշռում են ավելի տեղանունների, անձնանունների ընդարձակ բացատրությունները, քան թե բնագրագիտական դիտողություններն ու մեկնությունները:

Ուլուբաբյանը հիմնականում ճիշտ է հասկանում գրաբար բնագիրը, և նրա թարգ-

¹ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, 1982. Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982 (Խմբ.):

մանության մեջ գրեթե բացառվում են պատմական իրողությունների թյուր ըմբռնումները: Այս թարգմանության միջոցով մեզ է ներկայանում Ե դարի վերջերի և 2-ի սկզբի հայ խոջոր մատենագիրը՝ Ագաթանգեղոսի և Բուպանդի գործերի արժանավոր ժառանգորդն ու շարունակողը, որի՝ հատկապես իր ապրած տարիներին վերաբերող պատմական նկարագրությունները անգնահատելի աղբյուր են մեր պատմագրության համար:

Առանձնապես հաջողված կտորներ են Արարատյան դաշտին ու նրա բնակչության կենցաղին և սովորույթներին (գլ. Է), Մեսրոպ Մաշտոցի առաքելությանը (գլ. ԺԱ), Սահակ Պարթևի տեսիլքին ու նրա մեկնությանը (գլ. ԺԵ), Վաղարշ թագավորի ու ըսպարապետ Վահան Մամիկոնյանի պրոպյան (գլ. ՂԴ) նվիրված էջերը:

Սահակ Պարթևի տեսիլքը, համեմատությունները պահելով և բովանդակության տարբերությունն արձանագրելով, իր ձևի մեջ հիշեցնում է Եսայի մարգարեի տեսիլքը «Հին Կտակարանից»:

Վահան Մամիկոնյանին ձևված էջերը սուկ տուրք չեն մեկենաս նախարարի մեծությանը, այլ ավելի շուտ գովք՝ պարսից լծի դեմ դրոշ ու սուր բարձրացրած և ի վերջո հաղթանակած հայ ապստամբների մարտիկին, որ արժարժ է պահում Վասակ, Մուշեղ, Վարդան Մամիկոնյանների ժողովրդանվեր ոգին:

Եվ իսկուր չէ, որ Փարպեցու (ինչպես առհասարակ մեր պատմագիրների) երկերը, գրաբար բնագրով, դիտվում են իբրև մի-մի գեղարվեստական ստեղծագործություն: Դրանք, աշխարհաբար թարգմանությամբ, դեռևս շատ ու շատ են պիշում բնագրերի գեղարվեստական արժեքին: Սա վերաբերում է ոչ միայն ներկայացվող հատորներին, այլև մինչև այսօր լույս տեսած գրքերի մեծ մասին: Անկալելի էր, որ շնորհալի արձակագիր Ուրբաբյանը գոնե այս տեսակետով առաջ անցած լիներ իր նախորդների փորձից:

Այս առումով համեմատաբար ավելի լավ է կարդացվում «Թուղթը», որն աշխարհաբարի վերածելիս Ուրբաբյանի օգտագործել է Միքայել Նալբանդյանի գեղեցիկ թարգմանությունը՝ մեկնություններով: «Թուղթը» մեր օրերի եկեղեցական (և ինչո՞ւ միայն եկեղեցական) գործիչներին ուսանելի դասեր է տալիս առաջադեմ դատողությունների, արդարամտության, հասարակաց գործին իսկական նվիրվածության:

Գրքում բավական թիվ են կապում թարգմանական վրիպումները, որոնց մեծ մասը կապված է մի երևույթի հետ, որ բանասիրության մեջ անվանում են «թարգմանչի կեղծ բարեկամներ»: Խոսքը վերաբերում է

այն դեպքերին, երբ թարգմանիչն անտեսում է բառերի՝ տվյալ պարագային գրաբարյան իմաստները և դրանք (բառերը) նույնությամբ թողնելով իր խոսքի մեջ՝ խանգարում է բնագրի ճիշտ ընկալման:

Այսպես, գրաբարի բանառը հօտը նույնությամբ թողվել է աշխարհաբարի մեջ (էջ 9). մոռացության է տրվել, որ բանառը գրաբարում նշանակում է «բանական, մտածող», աշխարհաբարում՝ «բերանացի»: Ուստի աշխարհաբար կարդացողի ընկալմամբ բանավոր հօտը բոլորովին չի կարող բնագրի գաղափարը պարթեցնել:

Այդպես նաև պաշտօնը (գրաբարում՝ «պաշտամունք») ամենուրեք թողվել է նույնությամբ: Դժվար է պատկերացնել, թե ի՞նչ պիտի հասկանա ընթերցողը, երբ կարդա, ասենք, հետևյալ հատվածը. «... և որոնցն են և՛ որդեգրությունը, և՛ փառքը, և՛ կրակարանները, և՛ օրենքները, և՛ պաշտոնը, և՛ ավետիքը» (էջ 121): Կամ պաշտոն կատարել արտահայտությունը (էջք 301, 307): Կամ որ ավելի պարմանալի է, պաշտամունք ժամին կապակցությունը (էջ 481), ուր, չգիտես ինչու, նույնությամբ թողված է մեր օրերում բոլորովին անծանոթ հոլովածը՝ պաշտաման (=պաշտամունքի):

Երբեմն համանուն մի բանի բառեր մեկտեղվում են և բոլորովին անմատչելի դարձնում հատվածը. «...իրենց իսկ պարանոցներից արյուն հեղելը Քրիստոսի ընտրյալ բանավոր հոտի վրա ('): Նախարարների ընկերակիցներից և այլ ազատ (=ազնվական) մարդկանցից ոմանց հրաժարվելը սուրբ ուխտից և լուցկի (=մարխ) դառնալը հավիտենական այն անջեջ հրին...» (էջ 9): Ավելացնենք, որ ազատը ամենուրեք ազատ է մուսցել, լուցկի-ն՝ լուցկի:

Հետո, ի՞նչ է նշանակում արյուն հեղող հոտի վրա: Գրաբարում հեղում պարուն ի վերայ ուրուք դարձվածք էր և, ինչպես դենձ պանձն ի վերայ ուրուքը (էջ 122-123), նըշանակում էր «արյուն թափել կամ անձը պոհել մեկի համար (և ոչ թե մեկի վրա)»:

Կամ համեմատենք այս հատվածները. «... միաբանեալ ի խնդիր բարի ցանկութեան, ընդ որս հաւանեալ եւ այլ արք ճշմարտութեան նուիրիչք՝ գնային խառնել ի գունդն պօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնեանի» (էջ 308) — «...միաբանելով բարի ցանկության գործին ('), նրանց հետ էլ ուրիշ մարդիկ, որ ճշմարտությանն էին նվիրված, գնում էին խառնվելու Հայոց պորավար Վահան Մամիկոնյանի պորքին» (էջ 309):

Գրաբարում ի խնդիր, որ բառացի նշանակում է «փնտրելու համար», իբրև նախադրություն օգտագործվում էր «հանուն» իմաս-

տով (միաբանեալ ի խնդիր բարի ցանկութեան—միաբանելով հանուն բարի ցանկության) :

Վահանայ Մամիկոնեից տեառն-ը դարձել է Վահան տեր Մամիկոնյանի (էջ 9) կամ Մամիկոնեից տեր Վահան Մամիկոնյանը (էջ 427, մի քանի անգամ), փոխանակ Մամիկոնյանների կամ Մամիկոնեից տեր Վահանի և այլն, ինչ որ ճիշտ ձևով կա մեկ ուրիշ Մամիկոնյանի՝ Վարդանի տիտղոսի մեջ (էջք 123, 167) :

Անձնացեաց-ը դարձել է Անձնաց (էջք 177, 307, նաև տեղանունների ցանկում էջ 526), Գարշոյ-ը (=Գարշոյ)՝ Գարշոյ (էջք 295, 301—303, նաև անձնանունների ցանկում էջ 522: Հմմտ. Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. Ա, Ե., 1942, էջ 450): Աթանագինես-ն էլ դարձել է Աթանագինե (էջ 490: Դարձյալ հմմտ. Հ. Աճառյանի նույն հատորը, էջ 67): Չգիտես ինչու Աստված հատուկ անունը, հակառակ լեզվական ավանդույթի, գործ է ածվել նաև որոշյալ առումով (օրինակ՝ էջ 479-ում)...

Վստահ ենք, որ քննարկվող գիրքը նրա վերջին հրատարակությունը չի լինելու, և որ Բագրատ Ուլուբաբյանը դեռ ձեռնամուխ կլինի այլ գրքերի էլ թարգմանության, որոնց մեջ նման վրիպումներ տեղ չեն ունենա:

*
*
*

Ղևոնդի թարգմանիչ Արամ Տեր-Ղևոնդյանն այս գործին ձեռք է վարկել իր ետին ունենալով ժամանակի (է—Ը դարերի) պատմություններ վերաբերող շահեկան աշխատություններ (որոնցից մեկը թարգմանված է ռուսերեն և անգլերեն), ծանոթանալով ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լատիներեն, արաբերեն աղբյուրներին, Կ. Շահնապարյանցի, Ն. Ալիկյանի, Ք. Պատկանյանի, Լեոյի, Հ. Մանանդյանի բանասիրական ու պատմագիտական դիտողություններին, համեմատելով Սեբեոսի, Շիրակացու, Կաղանկատվացու, Դրասխանակերտցու, Արծրունու, Ուտհայեցու, Ասողիկի, Գանձակեցու, Վարդան Պատմիչի վկայությունները:

Նա գիտական հասարակայնությանն էր ներկայացրել Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոց»-ի արաբերեն թարգմանության ձեռագիրը, ինչպես նաև աշխարհաբար թարգմանությամբ լույս էր ընծայել նույն այդ գիրքը (Ե., 1977): Այս բոլորը նրան բնականաբար օժտել էին այնպիսի հմտությամբ, որ կարողանար հարապատրոն հասկանալ ու վերարտադրել Ղևոնդի երկի ոչ միայն տողերը, այլև, ինչպես ասում են, դրանց արանքում եղածը: Այդ են վկայում, մասնավորապես,

անկյունավոր փակագծերում [] Վետեղված այն անհրաժեշտ հավելումները, որոնք կոչված են ոչ միայն ամբողջացնելու աշխարհաբարի վերածվող նախադասությունները, այլև բացահայտելու, ըմբռնելի դարձնելու պարբերության իմաստը, գաղափարը: Սիւս մի հատված 54-րդ էջից. «Իսկ որ ասում են, թե «մանկային իմաստությամբ գրված գրքեր են», գիտեմ, որ կամենում ես բամբասել Եւրի երկրորդ [սմբագրման հարցը]: ...Եվ երբ ամբողջ [իրեա] ժողովուրդը այն երկրներին, ուր սփռված էր, վերադարձավ Երուսաղեմ, իր հետ բերելով գրքերը, այնտեղ երևացին Աստուծո հրաշալի գործերը, քանի [համեմատելով] հին գրքերը Եւրի [սմբագրած] պատմության հետ՝ ոչ մի պակաս չգտնվեց»:

Ընդգծված թարգմանչական հավելումները կարող էր կատարել այն մարդը միայն, որ քաջատեղյակ է շարադրված նյութի խորքերին:

Արամ Տեր-Ղևոնդյանը գերի չէ գրաբար բնագրին. նա հետամուտ է ամենակարևորին՝ Ղևոնդի խոսքերը ճշտորեն վերարտադրելու ճիշտ աշխարհաբարով: Այս նպատակով երբեմն ընտրում է նույնիսկ բնագրի բառերից արտաքուստ հեռու հոմանիշներ՝ չմոռանալով, սակայն, գիտական բարեխղճության պահանջը և տողատակ ծանոթագրություններում հիշելով բնագրի այն բառը կամ արտահայտությունը, որոնց իմաստի վերարտադրման ժամանակ ինքն ապատ է վարվել (հմմտ. էջք 90, 95, 108, 112...):

Գրքի ընդարձակ ներածությունը (էջ 3—17) վեր է հանում այն նորը, որ մոժում է հայ պատմագրության մեջ Ղևոնդի իր մեծարժեք երկով: Ը դարի հեղինակը հատկապես ուժեղ է ժամանակով իրեն մոտ պատմական իրադարձությունների հարապատ վերարտադրումով, արաբական խալիֆաների (ամիրապետների) առաջին ժամանակագրությամբ, հայկական թվականության առաջին օգտագործմամբ, Բյուզանդիո Լևոն Գ Իսավրացի կայսեր (717—741) և արաբ խալիֆ Օմարի (717—720) դավանաբանական նամակագրության միջոցով. քրիստոնյա—մահմեդական առաջին հակաձառակական գրվածքը ներկայացնելով: Այս կետերից ոմանք որոշակի արժեք են ներկայացնում նաև համաշխարհային պատմագրության համար:

Ղևոնդն իր երկում ընդգրկում է արաբական արշավանքների շրջանը, պատմությունը հասցնում մինչև 788: Նրա հիշած ժամանակագրական տվյալները հաստատվում են այլ, նաև օտար աղբյուրներով: Այս հանգամանքը ևս մեծացնում է գրքի արժեքը:

Ղևոնդը հայրենաշունչ տողերով ցույց է

տալիս, որ արաբական գերիշխանության առաջին իսկ տարիներից մեր նախնիներն ընդվզել են օտար լծի դեմ, անգամ երբ գիտակցել են, որ իրենց դիմադրությունը հաջողության հույս գրեթե չունի (համեմատեցե՛ք մեջբերվող հատվածը): Այս առումով նա հույսից տողեր է նվիրել Գրիգոր Մամիկոնյանին, Սմբատ Բագրատունուն:

Իսկ Առնի ու Օմարի դավանաբանական վիճաբանությունը, որ բռնում է գրքի մոտ

1/3-ը, թարգմանական առումով էլ ամենահաջողված կտորներից մեկն է:

Գրքին կցված հարուստ ծանոթագրությունները պարունակում են մեծ թվով վիճելի մեկնությունների ճշգրտումներ և բանասիրական աշխատանքի ուսանելի նմուշներ են:

Ստորև ներկայացնում ենք մի քանի հատվածներ գրախոսվող գրքերից:

ՊԵՏՐՈՍ ԲԵԴԻՐՅԱՆ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (թարգմ. Բագրատ Ուլուբաբյանի)

ԳԻ. Է. Եվ այս ամենի մասին ինքն իրեն խորհելով, Արշակ թագավորը լքեց, թողեց իր նախնայաց բարի ու բնիկ ժառանգությունը՝ հողակապ, հոջակավոր, երևելի գավառն Այրարատյան, որն ամեն ինչ բուսցնող է, ամեն ինչ տվող, ամեն ինչով լի, մարդկային կյանքին, վայելքին ու երջանկությանն անհրաժեշտ օգտի ու դեղի համար ամեն ինչ ունեցող՝ դաշտեր լայնատարած ու որսալից, շուրջ բոլորը լեռներ գեղեցկանիստ ու փարթամ արտներով ծածկված, կճղակաբաշխ ու որոճող անասուններով և նրանց հետ էլի ուրիշ բազմատեսակ կենդանիներով լեցուն: Լեռանց բարձր կատարներից ջրեր են հոսում լիովի ոռոգմամբ արբեցնելով դաշտերը, որոնք անթիվ կին ու տղամարդ բնակչությամբ փարթամացած ուտանն են մատակարարում առատ հացով և գինով, անուշաբույր ու մեղրահամ բանջարեղենով և յուղատու պանապան սեբմերով: Իսկ թե հայացքդ առաջին անգամ ես դարձնում դեպի լեռնափեղերը կամ սարահարթերը, ապա նրանց վրա սփռվածը հանդերձներ կկարծես և ո՛չ թե ծաղկաբույս երանգներ՝ տարածված փարթամորեն, անուշահամ ու պարարտ արոտներ, որոնց թանձրախիտ աճած խոտերն արոտական ընտանի անթիվ էշերին ու վայրի կատաղի կենդանիների խմբերին հագեցնելով՝ նրանց գիրացնում են, գավակները պարարտացնում, ճարպակալած մարմինները տոպեցնում: Իսկ անուշահոտ ծաղկանց բույրերը, որ քաջ նետածի՞գ ու որսասեր տղամարդկանց և բացօթյա ապրող հովիվներին պարգևում են առողջություն, պորացնում են մտքի պայությունը և թարմացնում: Այնտեղ կան նաև տեսակ-տեսակ բույսերի արմատներ՝ դեղերի համար պիտանի ու օգտակար, որոնք ըստ ճարտարագետ ու հմուտ բժիշկների երկասիրությունների ճարտարագետ ճանաչողության՝ ախտերն արագորեն բուժում են իբրև սպեղանի և ցավերի մեջ

երկար տառապածներին պարգևում առողջություն:

Իսկ ամեն ինչով լի դաշտերն աշխատավորներին, ասես հմայիչ խոսքով, դեպի իրենց են քաշում և նրանց լիացնում ինչ-որ բարիքով, առավել փութացնում վերջնական դարձը դեպի իրենց: Նրանք ո՛չ միայն տեսանելիքով (տեսքով—Պ.Բ.) են ցույց տալիս իրենց շահավետությունն ու օգտակարությունը մարդկանց, այլև հմտորեն խուսարկող աշխատավորներին ցույց են տալիս երկրի տակ ծածկված գանձերը, որպեսպի նրանք հավաքեն ի շահ իրենց, ի վայելումն այս աշխարհի թագավորական մեծությունների և ի հաստատություն հարկահանների: Եվ այդ գանձերն են ոսկին ու պղինձը, երկաթն ու պատվական քարերը, որոնք ընկնելով արհեստավորների ձեռքը, թագավորներիս պուգում են գեղեցկատեսիլ պարդերով ու բանվածքներով, ինչպիսին են խոյրերի, թագերի ու հանդերձների վրա ընդելուպված ոսկեհոտ պաճուճանքները: Այլև լուծելով ջրերի մեջ, բնական մի առանձին անուշություն են հաղորդում ամեն տեսակ խորտիկներին: Բայց ամենաբաղձալի դաշտն Այրարատյան իր վրա (ծոցում—Պ. Բ.) պուր տեղը չի սնում եղեգնաձև բույսերի արմատները: Չէ՞ որ նրանցից ծնված որդերն էլ կարմրափայլ պարդերի գույներ են տալիս՝ օգտասերներին ընծայելով շահ ու շքեղություն: Իսկ գետերի ընթացքը՝ բազմատեսակ մեծամեծ ու մանր, տարբեր համի ու տեսքի ձկներով: Ուրախացնելով լցնում է հարստության շնորհները և հագուրդ է տալիս ժրջան ու անդանդաղ աշխատողների որովայններին:

Երկիրը, հուրախություն և ի վվարձություն որսատենչ ապատների, իր մեջ անապական ջրերով սնում է բազմատեսակ թռչուններ՝ կաղկաղող ու քաղցրաձայն, առապարասեր, վիմասույզ ու ծակամուտ կաքավների ու սալամբների երամներ, և կամ եղեգնաբնակ,

թփերում ու մացառներում թաք կացող պարտամարմին, անուշահամ վայրի տեսակն աքարների, այլև ջրասուպակ, մամռասներ, խոզակներ (խոզակակեր*—Պ. Բ.) մեծամարմին թռչուններ, փորը (կարապը—Պ. Բ.), թանձր ու սագը և այլապես, անթիվ-անհամար ցամաքային ու ջրային թռչունների բազմություններ: Իսկ նախարարների գունդը, ապատների որդիների հետ, թակարդների շրջափակությամբ, երագապինք (երագապ—Պ. Բ.)—ուռկաններով, հատուկ կողովներով որսի էին ելնում: Ոմանք ցիռների ու այծամների ետևից արջավելով՝ իրենց աղեղների մասին էին հորդորալից բարբառում: Ուրիշները, եղջերուների ու եղնիկների հոտերի ետևից ձիարձակ սլանալով, կորովաձիգ տղամարդկանց արիությունն էին ցույց տալիս: Մնացածներն էլ սուսերով, մենամարտիկների պես, վարապների երամակն էին գետին տապալում, կոտորում: Եվ նախարարապուն շատ վանուկներն էլ, դաստիարակների ու ծառաների հետ, բազեններով տարատեսակ թռչուններ որսած, դարձյալ բերում էին, ճոխացնում ուրախության ընթրիքները: Եվ այս-

*խոզակակեր այսինքն՝ խոզակ (վայրի պտուղ) ուտող:

պես, յուրաքանչյուրը, որսով լիացած, գնում էր երջանիկ:

Ջրասուպակ ձկնորսների մանուկներն էլ, ըստ իրենց հանապազօրյա սովորության, քայլելով նախարարագունդ խմբի առջևից, բերում, իջխաններին ընծա էին մատուցում որսած ձկներից, գետի կղզյակներից բռնած վայրի թռչունների ձագեր կամ հավաքած ձվեր էին տալիս: Իսկ նախարարները, ընծայածների մասն ընդունելով հոծարությամբ, իրենք էլ նրանց էին առավել շատ պարգևում իրենց ունեցածներից: Եվ ամենայն բարիքներով լի՝ հասնելով իրենց ապարանքները, տանը մնացած աշխատավորներին, խռավել և՛ օտարներին, պարգևում էին կենդանի բերած, անբիծ որսերը: Տեսնելով նա (Էր—Պ. Բ.) այս բոլորի ընթրիքների սեղանները, իրար վրա շեղջակույտ արած բալում էրենները, նրանց առջև դարսված գլուխները: Դրանցով ուրախացած խնդում էին ձրկակեր ու մսակեր մարդիկ, բայց անուշ խորտիկներից առավել ուրախանում էին հոգևոր կերակուրներով, սաղմոսներով ու նարգարեական երգերով օրհնում էին պարգևատու, ամեն բարիքներով աշխարհը լցնող Քրիստոսին: (Էջ 21—25)

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, «ԹՈՒՂԹ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ» (թարգ. Բագրատ Ուլուբաբյանի)

...Ամսիսթար կերպով ես վշտացած եմ մինչև մահ, որ գայլերի պես հարձակվեցին ունեցվածքիս վրա և անխնա գիշատեցին, երբ տեսան, որ ես ընկած եմ քո աչքից: Այժմ շրջում են իմ ունեցվածքով պնդված և ինձ էլ ծաղրի են ենթարկում: Բայց ինչ որ այդ վանքում է մնացել ինձանից, ուրախ եմ ու երջանիկ, քանի որ սուրբ ու հոգևոր վայրում է մնացել:

Ուրիշ բանասարկություններով ևս ջանացին քեզ վայրացնել իմ դեմ, տե՛ր. իբր, «մի մանուկ չի կարող հոգաբարձու լինել վանքին»: Եվ ինձ պաշտպանելու համար ո՛չ մի հրեշտակ մարմին չառավ, որպեսզի թերևս նա՝ հոգեղեն բնությամբ տեսներ թշնամիների լարած թաքուն որոգայթը, կարողանար պաշտպանել և հանձն առներ լինելու ինձ օգնական: Ո՛ւմ էլ վերցնում էի, իսկույն նրա մոտ

էին հասնում դավաճանության նենգիչները և անմաքուր խրատներ տալով՝ ասում էին. «Ո՛վ անմիտ մարդիկ, անօգուտ ինչո՞ւ եք աշխատում, այդ խորշակահար վանքում ինչո՞ւ պուր տեղը լալիս և խենթությամբ անձնամահ եք լինում: Չ՛է որ Մամիկոնյան տան ավագ ծառաներից ոմանք և մի ավագ քահանա, որ տանն է, երդումով մեզ խոսք են տվել, թե երբ էլ որ լինի, Ղապարին թույլ չենք տա նույնիսկ այդտեղ հանգստանալու, ո՛ր մնաց թե նրա մերձավորներից մեկին»: Եվ լսողներն էլ, այսպիսի խոսքերից թուլացած՝ այնուհետև ջանում էին ո՛չ թե վանքի, այլ իրենց ջալակի համար: Սակայն ես, մեղվի նման ամեն կողմից բերելով, թե՛ վատնողներին պահում և թե՛ վանքի պետքերն էի հոգում... (Էջ 471—473)

ՂԵՎՈՆԴ, «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (թարգ. Արամ Տեր-Ղևոնդյանի)

Գլ. ԼԴ. ... Այն ժամանակ մեր Հայոց աշխարհը մեծ տառապանքների մեջ էր, իսկ անհավատ թշնամիները ցնծություն և հրճ-

վանք էին ապրում: Նրանք շունչ քաշելուց հետո դարձյալ հարձակվեցին, Ապահունիքի միջով ուղղվեցին դեպի արքունի՝ պողոտան:

Հասան Բագրևանդ գավառի Արձնի գյուղը և այնտեղ բանակ դրեցին գետի եզերքում, որը նրա միջով է անցնում: Նրանց հետ կային պինագործներ՝ ամեն տեսակ պենքերի արհեստավորներ, որոնք պատրաստում էին պատերազմի պենքեր ու սարքեր (անոթներ):

Իսկ այն գործը, որ Կարնո քաղաքն էր պաշարել, [բնակիչներին] հուսահատության էր հասցրել, քանզի սաստկացել էր քաղաքի սովը, և նրանք ստիպված պատրաստվում էին քաղաքը հանձնել: Սակայն երբ [հայկական] զնդի պարտության լուրը հասավ Կարնո քաղաք, այն ժամանակ հայոց պատերազմող զորքերը հուսալքվեցին և քաղաքի պաշարումը վերացրին: Նրանք թեպետև կարող էին հունաց կողմերը մեկնել և իրենց անձերը փրկել կեղեքիչների չարասեր ապիրատությունից, սակայն լավ համարեցին իրենց անձերի մահը, քան մեր երկրի կորուստը և Քրիստոսի եկեղեցիների անպատվությունը տեսնել: Այսպես մտածելով, թեկուզև սակավաթիվ էին, քան թշնամիները, ինքնակամ հոժարությամբ դեպի տառապանք դիմեցին և, հավաքելով իրենց զենքերը, որոնք 5000 հոգուց էին բաղկացած, հեռացան Կարնո քաղաքից, անցան Բասենի սահմանը դեպի Բագրևանդ գավառը: Հենց որ անցան Արածանի գետը, սրտի արիությամբ թշնամու վրա հարձակվեցին, [նախապես] իրենց աղխը (ունեցվածքը) և երիվարները երկու ասպարեզ հեռու թողնելով և իրենք հետիոտն, պայրագին պատրաստվեցին թըշնամու հետ պատերազմի: Թշնամիների զենքերը նույնպես ելան նրանց դեմ բազում պատրաստությամբ:

Արեգակը ծագելուն պես պատերազմն ըսկսվեց: Երբ իրար բախվեցին, նախ հայոց գունդը ուժգին բազում հարվածներ տվեց և, թշնամիներին փախուստի մատնելով, շատերին սատակեցրեց: [Սակայն] կրկին ուժ առնելով՝ նրաք փախուստից ետ դարձան և պայրագին ցասմամբ դիմադրելով՝ արհավիրքով լցրին ռամիկ ժողովրդի բազմությունը, փախուստի մատնեցին նախարարներից ու հեծյալներից ունանց և նրանց հետ եղած ռամիկներին, քանզի նրանցից շատերին ըսպանելով՝ դաշտերի վրա փռեցին:

Իսկ քաջահաղթ նահատակները, թեպետև սակավաթիվ էին չարաշուք որսողների մեջ, սակայն դառնաշունչ օրհասական թուփերն անի չմատնվեցին, այլ բոլորը միահամուռ հավաքվելով՝ իրար քաջալերում էին հետևյալ խոսքերով՝ «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար և թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների և մեր Աստուծո փառավորման վայրերի ոտից կոխան լինելն ու պղծվելը, այլ թշնամիների

սուրը թող նախ և առաջ մեր դեմ ուղղվի, ապա թող անեն, ինչ կկամենան: Մեր անձերը պոհենք ճշմարիտ հավատի փոխարեն և ոչ թե երկրավոր կյանքի սիրուն, քանզի այս ժամանակավոր անհիվան դիմաց կա հավիտենական կյանք»:

Այսպես իրար քաջալերելով իրենց աչքերն ի բարձունս կարկառեցին, Բարձրալից օգնություն էին հայցում, ասելով՝ «Աստված, քո հայացքը մեզ ուղղիր և փութա մեզ օգնության: Թո՛ղ մեծապես ամաչեն նրանք, որ մեր անձերն են ուզում [պոհել], իսկ մենք, Տեր, քո անունն ենք արտասանում մեր նե, դուրյան մեջ և քո անունն ենք փառավորում մեզ պաշարող անձկության մեջ, քանզի ահա մեզ շրջապատված են պահում չարերը, որոնց թիվ չկա, և մահվան երկունքն է մոտենում մեզ»:

Այս և դեռ ավելի աղեյսական խնդրանքներ ու փափագելի մաղթանքներ էին մատուցում Բարձրալիին: Սրանից հետո դարձյալ պորանալով Վերնայինի օգնությամբ, ետ չկանգնեցին նախապես ընդունված որոշումից, թեև հապար հոգուց ավելի չէին երեսուն հապարի դիմաց: Եվ ինչպես հենց թշնամուց իմացանք, նրանք (հայերը), ասում են, իրենց հետ մարտակից ունեին հըրեշտակների բազմությունը, որոնք մարդկային կերպարանքով երևացել էին թշնամիներին: Նրանք հավաստում էին նաև, որ տեսնում էին երեցների ու քահանաների*, որոնք ավետարաններով, մոմերով ու խնկով առջևից երթալով՝ քաջալերում էին նրանց:

[Հայերը], անխնա կոտորելով, վրեժխնդիր էին լիտում թշնամուց, մինչև որ նրանց ձեռքերը միանգամայն հոգնեցին պենքերի ծանրությունից: Ունանք առանց պենքի մընալով՝ ընկան նրանց ձեռքը և իսկույն հրաժեշտ տալով մեղանչական կյանքին՝ դիմեցին հանդերձյալ հույսի ակնկալությանը: Այդ երանելի և քաջ նահատակները հետևյալ պորագլուխներն էին՝ Բագրատունյաց տնից Սմբատ սպարապետը և նրա բարձակից ու նիպակակից Սահակը: Մամիկոնյան տնից Մուշեղ պորավարը և Մամիկոնեից տեր Սամուելը, մատաղահասակ և գեղեցկությամբ առույգ, որը մեծ սպարապետի աներձագն** էր, Գնունյաց տնից Դաշույն Վահանը և բազում նախարարներ և ռամիկներ, որոնց մեկ առ մեկ անունով հիշել չեմ կարող: Մոտ 3000 հոգի ընկան, որոնց մահը սրտաճմիկ էր ու վախճանը՝ անագորույն, և հողը նույնիսկ բավական չէր պատերազմի թշվառ կոհերի դիակները թաղելու, այլ ընկած էին

* Բագրում՝ պապաս:


** Բագրում՝ աներ:


բացօթյա վայրում արևի ու փոշու, անձրևի և հողմերի մորիկի դիմաց:

Այն ժամանակ սաստկացավ հաճախակի ողբն ու կոծը Հայոց աշխարհում, քանզի մեծ առաջնորդները և պատվական զորագլուխները մի վայրկյանում վերացան, և ամբողջ երկիրը, խոր տխրությամբ վարակված, մեծապես կոծում էր և ողբում հզոր և քաջ նախամարտիկների վախճանը, որոնք օգնականությունից զուրկ մնալով՝ մատնվեցին գազանաբարո և անողորմ թշնամու ձեռքը: [Մարդիկ] իրենց նեղության մեջ հիշում էին նաև պաշտպան Աստծուն, որի ողորմությունը սկզբից էլ պահել է մարդկային ազգը և մանավանդ իր անունը փառաբանողներին: Հայցում էին նրա հոգատար ներողամտությունը,

որպեսզի այս աշխարհի կյանքում տարակուսյալներին և հուսակտուր եղածներին զորավիգ լինի, քանզի Արճեշ ավանում պատահած աղետից հետո ահա վրա հասավ այս չարիքը նույն Հրոտից ամսի 14-ին¹, երկուշաբթի օրը: Առավել ևս դժնդակ էր նեղությունը նաև այն պատճառով, որ ննջեցյալներին նույնիսկ համարձակորեն լալու և ողբալու հնարավորություն չկար, ոչ էլ իրավունք՝ իրենց տներում սգո հաց կտրելու կամ վախճանյալներին գերեզման դնելու: (Էջ 118—121)

¹ 775 թվականի Հրոտից ամսի 14-ը համապատասխանում է ապրիլի 25-ին:





ԷԿՈՒՄԵՆԻԿ

ԿՅԱՆՔ

ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԸ

Սույն թվականի հոկտեմբերի 17-ին Ավստրիայի Սենտ-Պյոլտեն քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի երիտասարդ քրիստոնյաների էկումենիկ խորհրդի տարեկան հաշվետու ժողովը: Ժողովին մասնակցում էին 19 երկրներից ժամանած շուրջ 100 երիտասարդ քրիստոնյաներ, որոնցից ոմանք միաժամանակ անդամներ են միջազգային այլ քրիստոնեական կազմակերպությունների և երիտասարդական շարժումների, ինչպես օրինակ՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը, Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսը, Ռոդափառների՝ երիտասարդական կազմակերպությունը, Քրիստոնյա ռասնողների համաշխարհային կազմակերպությունը, Մերձավոր Արևելքի քրիստոնյաների խորհուրդը, Երիտասարդ դեմոկրատների միջազգային խորհուրդը և այլն:

Սովետական Միությունում գործող քրիստոնեական տարբեր դավանությանց պատկանող Եկեղեցիներից ժողովին մասնակցում էին յոթ ներկայացուցիչներ:

Հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, սույն հաշվետու ժողովին իր մասնակցությունը բերեց նաև Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Ս. Տիրան վարդապետ Կյուրեղյանը:

Ժողովը բաց արեց Ս. Յանգ արքեպիսկո-

պոսը, որը ժողովականներին փոխանցեց Վիեննայի Արքեպիսկոպոս կարդինալ Քրոնիգի ողջույնի և բարիգալստյան խոսքը: Բարիգալստյան և ողջույնի խոսք ասաց նաև Սենտ-Պյոլտենի եպիսկոպոս Ֆրանց Չակին:

Ապա հանդիսավորությամբ և ընդհանուր խանդավառության մթնոլորտում տեղի ունեցավ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու անդամակցությունը Եվրոպայի երիտասարդ քրիստոնյաների էկումենիկ խորհրդին:

Հոկտեմբերի 18-ին ժողովի մասնակիցները լսեցին Եվրոպայի քրիստոնյա երիտասարդների էկումենիկ խորհրդի գլխավոր քարտուղար Գիլբերտ-Հիկելի (ԳԴՀ), ինչպես նաև խորհրդի նախագահ Քրիստիան Հոլենդերի (Շվեդիա) պեկուցումները:

Այնուհետև ժողովը շարունակեց իր աշխատանքները աշխատանքային վեց խմբերում: Ժողովականների կողմից տարբեր նիստերի ընթացքում քննության առնվեցին լատինա-ամերիկյան քրիստոնեական երիտասարդական կազմակերպության գործունեությունը, ինչպես նաև Մերձավոր Արևելքի քրիստոնյաների խորհրդի գործունեությունը Լիբանանում տեղի ունեցած ծանր իրադարձությունների ժամանակ, աշխարհի զանազան երիտասարդական շարժումների և վերոհիշյալ խորհրդի միջև համագործակցու-

թյուն հաստատելու և այն ընդլայնելու հարցը և հարակից այլ հարցեր:


Երեք օրվա խմբակային աշխատանքներից հետո ժողովը իր վերջին լիազումար նիստում հրապարակեց կատարված աշխատանքներն ամփոփող մի փաստաթուղթ, որը որոշ փոփոխություններով և լրացումներով հաստատվեց ժողովականների կողմից:

Հոկտեմբերի 21-ի երեկոյան տեղի ունեցան ընդհանուր ընտրություններ: Նոր գլխավոր քարտուղար ընտրվեց Լաս Լոպան (Հունգարիա): Ընտրվեցին նաև նոր նախա-

գահ, գործադիր կոմիտեի անդամներ և գանձապահ:

Հոկտեմբերի 24-ին, կիրակի օրը, ժողովականները բաժանվեցին տեղական եկեղեցիների վրա՝ իրենց մասնակցությունը բերելու կիրակնօրյա հոգևոր արարողության: Այդ օրը Վիեննայի հայոց Ս. Հռիփսիմե եկեղեցում սուրբ պատարագ մատուցեց ժողովի աշխատանքներին մասնակցած Մայր Աթոռի միաբան Տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը:





ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՏՈՆ

Թարգմանության պատմությունն սկսվում է քաղաքակրթության պատմությամբ:

Հենց սկզբից տարբեր բարբառներն ու լեզուները ուղեկցում էին մարդկությանը: Բաբելոնյան աշտարակաշինության պատմությունը ցույց է տալիս, որ հին աշխարհում մարդիկ ինչքան սուր էին զգում տարբեր լեզուներով խոսող մարդկանց միջև հաղորդակցություն հաստատելու անհրաժեշտությունը: Թեև մարդկության պատմությանը պոզընթաց վարձանում էր թարգմանության արվեստը, բայց այն իր բուն վարձագումն ապրեց հատկապես քրիստոնեական կրոնի տարածման շրջանում: Տարբեր ժողովուրդների և ազգերի կողմից նոր կրոնի ընդունումը անհրաժեշտորեն ուղեկցվում էր այդ նույն կրոնի հիմնական աղբյուրի՝ Աստվածաշնչի թարգմանությամբ:

Հայ թարգմանական արվեստը սկիզբ է առնում Ե դարից, երբ 406 թ. Ս. Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայկական այբուբենը: Սեփական գրերի ստեղծումը դարակապմկի իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: Ս. Մեսրոպ Մաշտոցը հայ ժողովրդի ձեռքը տվեց անփոխարինելի մի զենք՝ պաշտպանելու համար իր ազգային ինքնությունը և ավատությունը:

Բայց այբուբենի ստեղծումը միայն սկիզբն էր: Անհրաժեշտ էր ունենալ հայալեզու գրականություն: Եվ այդ գրականությունն սկսվեց Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի ու նրանց աշակերտների կողմից կատարված Աստվածաշնչի թարգմանությամբ, որով նաև հիմք դրվեց հայ թարգմանական արվեստի:

Ե դարից սկսած թարգմանական գրականությունը հայ մշակույթի վարձագման գործում և առհասարակ մեր ժողովրդի եկե-

ղեցական, հասարակական, քաղաքական կյանքում առանձնահատուկ դեր կատարեց:

Առաջին խորհրդանշական խոսքը, որ թարգմանվեց հայերեն ու հնչեց իբրև կոչ՝ ուղղված հայ ժողովրդին, եղավ Աստվածաշնչի Սողոմոնի առակների առաջին նախադասությունը. «Ճանաչել զիմաստությունն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Իրապես իմաստությունն ու հանճարի խոսքը պետք է առաջնորդեր հայ ժողովրդին նրա գոյապայքարում: Աստվածաշնչի թարգմանությամբ և այդ թարգմանության ոգուն հարակատ ստեղծվեցին Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Կորյունի, Եղիշեի, Փավստոս Բյուզանդի, Ղապար Փարպեցու, Եսնիկ Կողբացու դասական առաջին գործերը, որոնք դարձան հայ գրականության փառապատկը: Մանուկ Աբեղյանը Աստվածաշնչի թարգմանության մասին գրել է. «Աստվածաշնչի լեզուն հենց սկզբից մեր հին գրականության համար դարձել է կլասիկական իր քերականությամբ, իր բառերով ու դարձվածքներով, պատկերավոր ասացվածքներով ու բանաձևերով.... ոչ միայն կրոնական, այլև պատմական ու բանաստեղծական երկերի համար»:

Հայերեն Աստվածաշնչի թարգմանությունը ոչ միայն բարձր են գնահատել հայ գիտնականները, այլ նաև օտար հեղինակները, որոնք այն կոչել են «թարգմանությունների թագուհի»:

Մեծ և անգնահատելի է եղել հինգերորդ դարի թարգմանիչների կատարած աշխատանքը ինչպես հայ մշակույթի և գրականության վարձագման, այնպես էլ համաշխարհային գրականության որոշ նմուշների պահպանման համար: Գրական աշխարհին հայտ-

նի է, որ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը», Փիլոն Ալեքսանդրացու յոթ աշխատությունները, Արիստիդես Աթենացու և այլ հեղինակների գործեր մինչև այժմ պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ: Այստեղ տեղին է նշել ԺԸ դարի բանասեր, հայագետ Վիլֆրուայի խոսքերը՝ «Այն սերը, զոր ունեցեր են Հայք ի գիտություն և հուսումն հռչակավոր լեզվաց զոր հիշեցինք, պատմական և մեծապես սիրելի պետք է ընեն մեզ այդ ազգը: Վասն զի այն միջոցով՝ իրենց մեջ երևացած իմաստունք՝ նույն լեզուներով գտնված ընտրելագույն երկասիրությունները թարգմանելով, ամենն ավելի իմաստուն գրող ավանդապահ ըրին զՀայաստան աշխարհ»:

Հայ ժողովուրդը և Հայ Առաքելական Եկեղեցին, բարձր գնահատելով մեր սուրբ թարգմանիչների վաստակը, անմահացրել են նրանց հիշատակը և դարեր շարունակ, ամեն տարվա հոկտեմբեր ամսին, նշել են թարգմանչաց տոնը, որ անվանվում է՝ «Սրբոց թարգմանչաց վարդապետաց մերոց՝ Մեսրոպայ, Եղիշեի, Մովսիսի քերթողին, Դաթիկի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացուն և Ներսիսի Կլայեցուն»: Սա աննախադեպ երևույթ է ամբողջ աշխարհում:

Ամուր պահելով մեր ժողովրդի մշակութային արժեքները՝ անցյալի հայրենի գրականության մշակները հաջորդաբար նոր սերնդին փոխանցեցին թարգմանական արվեստի այդ գեղեցիկ ավանդությունը, որը հասավ մինչև մեր օրերը:

Ի հավարժացումն մեր անմահ թարգմանիչների կատարած գործի, Հայաստանի կառավարությունը սիրով ընդառաջեց գրողների միության առաջարկին, թարգմանական արվեստի տոնը պետականորեն նշելու մասին: Այդ տոնը պետք է անցկացվի երեք տարին մեկ՝ հանրագումարի բերելով թարգմանչական նոր գործերի արդյունքները և առաջադրված խնդիրները:

Ինչպես 1979 թվականին, այնպես էլ սույն թվականի հոկտեմբերի 31-ին թարգմանական արվեստի տոնը հանդիսավորապես բացվեց Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Բավմադարյան ու բավմահարուստ թարգմանչական արվեստ ունեցող հայ ժողովուրդը նորից հյուրընկալեց տարբեր ազգերի գրական մշակներին: Թարգմանչաց արվեստի տոնին իրենց մասնակցությունը բերեցին միութենական հանրապետությունների հայտնի թարգմանիչներ, թարգմանության տեսաբաններ և հեղինակավոր ջատ գրողներ:

Տոնի կապակցությամբ հաստատվել են հատուկ մրցանակներ:

Թարգմանական արվեստը եղել և մնում է ժողովուրդների բարեկամության (հաստատման և ամրապնդման ձևերից մեկը: Այն սերտացնում և ամրապնդում է ազգային գրականության կապերը, մեծացնում գեղարվեստական թարգմանության նշանակությունը, որի շնորհիվ ազգային գրականությունները մոտք են գործում համաշխարհային ասպարեզ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը հաճույքով և սիրով ներկայացնում է թարգմանչաց տոնի առթիվ գրված երկու ստեղծագործություն՝ թարգմանված սովետահայ բանաստեղծներ Սիլվա Կապուտիկյանի և Վահագն Դավթյանի կողմից:

Ներկայացնում ենք նաև մի հատված Վ. Դավթյանի «Լույս առավոտի» շարքից:

ՄԱՐԿ ՌԻՇԿՈՎ

(Ռուսաստան)

ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՑԻՆ

Ապրում եմ ես հեռվում, Ուրալ լեռնաստանում, Խոհուն Եվրոպայի և Ասիայի ափին
Եվ իմ հեռու-հեռվից Արարատն եմ տեսնում, Ու տեսնում եմ նրան՝ Սուրբ Մեսրոպին:

Հաճախ անկարող եմ տարածություն ու դար, Երբ որ սիրտն է ձգտում հասնել ուրիշ սրտի... Ոչ-հայկական մի ձեռք՝ հայերենով անվարժ «Մեսրոպ» գծագրում է ձերմակ թղթին...

Նա ճառագեց, երբ դեռ չկար լույսի երիզ, Նա առաքեց երկրին արև, գիր ու ոգի. Անցան դարեր, և արդ, ինձ էլ, հեռավորիս, Լույս է տալիս ջահը Սուրբ Մաշտոցի:

Ժամանակի հողմը փշրեց նավը հայոց, Պատռեց առագաստը փոթորկակոծ ճամփին, Կտրատվել է հողը սահմանների սրով, Սահման չկա, սակայն, Սուրբ Մեսրոպին:

Տողը ամրոց է մի, որ չեն կարող առնել, Տողը՝ մոխրից անգամ կենի, կտրուփի. Մոխիրների միջից հազար անգամ հառնել Եվ ապրում է գիրը Սուրբ Մեսրոպի:

Նա գրերը ցանեց ճիշտ սերմերի նման, Բարձրացել է բերքը ու դեռ ծփա պիտի, Ոչ-հայկական մի սիրտ՝ ռուս հասարակ
մի մարդ

Օրհներգում է լույսը Սուրբ Մեսրոպին...

Թարգմանությունը՝ Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ

ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ
(Լիտվա)

ՍՊԻՏԱԿ ԵՐԱԶ

Եվս մեկ անգամ եղա Գեղարդում
Ու նորից տեսա սուրբ վեհությունը...
Յոթ հրաշքի հետ միևնույն կարգում
Պիտի գրանցել նրա անունը:

Ժայռ է: Վերից են մխրձվել անահ,
Քարի մեջ վառել այս հրաշքը ջինջ...
Ասես մի կարասս հին գինի է նա,
Որից պորավոր չեմ խմել ոչինչ:

Կամար ու խոյակ, խորան ու խաչեր՝
Եվ այդ ամենը միևնույն քարից,
Չորեղ սյուները՝ հեքիաթի քաջեր՝
Խլված են լեռան կարծր մկանից:

Գինու կարասս է ու հաց է լավաշ,
Դեղնած թերթեր են Ավետարանի,
Եվ գրաբարյան բարբառ, որ, ավաղ,
Լոկ արձագանքն է բերում իր ձայնի:

Աղոթքն՝ աղավաղ սպիտակ մի թև,
Տաղը՝ երկնքից ժամանած մի հյուր,
Սև է ճգնավորն, ագռավի պես սև,
Սակայն հոգու մեջ լույսեր են ու հուր:

Ես ինքս էլ պիտի հոգով բաղձայի
Նման լուսավոր ճգնակեցություն...
Ելնում է ահա ձայնն իմ թախծալի,
Բարձրանում է վեր, իբրև լույս մի սյուն...

Եվ առաստաղի կտր անցքի մեջ
Չատվում է ինձնից սեփական ձայնս
Ու հավերժության արձագանքի պես
Գնում, հենվում է հավերժությանը...

Թարգմանությունը՝ Վ. ԴԱՎԹՅԱՆԻ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ԼՈՒՅՍ ԱՌԱՎՈՏԻ

(Հատված)

Լո՛ւյս առավոտի,
'Էու, որ նման ես մի մեծ հայտնության,
Իսկ ավելի ճիշտ՝ միակ հայտնությունն հենց ինքդ ես, որ կաս,
Ե՛կ, բռնիր նորից ճանապարհները քո արդարության,
Նորից արյունդ գինի դարձրու և մարմինդ՝ հաց:

Եվ ինձ էլ քեզ հետ տար ճամփաներով որպես առաքյալ,
Ու հավատա ինձ, արժանի եմ ես այդ մեծ ջնորհին,
Նայի՛ր իմ դեմքին, ցոլում է այնտեղ լույս մի տառապյալ,
Աչքերիս նայի՛ր, այնտեղ դարերի թախիծն է խորին:

Ես շա՛տ եմ ապրել... Այն ջրհեղեղի վերջին հառաչից
Ես իմ առաջին աղոթքանման բառերն եմ հանել,
Ես եմ երևի, աշխարհում քամել գինին առաջին,
Առաջին հասկը ես եմ սերմանել:

Եվ արտույտներս՝ թևավոր քուրմեր, բարձրացել երկինք.
Քեզ օրհնաբանող ասք ու տաղով են իմ օրը բացել...
Սակայն հողմեր են եղել աշխարհում, եղել է մրրիկ,
Եվ իմ հասկերն են ասուպների պես տխուր մահացել:

Տե՛ս, այնտեղ հեռվում մենավոր վանքս է կանգնել քարափին,
Կանգնել բարայիկ, տխուր ու փխրուն միանձնուհու պես,
Եվ չե՛ս վարմանում, թե ինչպես ապրեց հողմերի մեջ բիրտ,
Նենգ ու վավաշոտ հայացքների տակ նա ինչպես ապրեց:


Հավատա դու ինձ, աշխարհում միայն ես ունեմ խաչքար,
Թե Գողգոթայի ճամփորդը փայտե խաչ է լոկ տարել,
Իմը քարակոփ, իմը կարակոռ, իմը քարածալ,
Իմը քարի հետ դարեդար ձգվող հառաչ էր քալե:

Բայց ես ապրեցի,
Ես որոնեցի ավերը հուսո,
Ես իմ արյունը գինի դարձրի ու մարմինը՝ հաց,
Քանզի դու էիր իմ շրթունքներին, «Առավոտ Լուսո»,
Քանզի դու էիր, «Ճառագայթ փառաց»...

Լո՛ւյս առավոտի,
Փոթորկված է դարն ու դարը՝ ահեղ,
Իմ տազնապները վարթնում գիշերով ու տնքում են խուլ,
Եվ սակայն քեզ եմ իմ շրթունքներին ես նորից պահել,
Հավատում եմ քեզ ու նորից քեզ եմ ես ապավինում...

Դու իջիր նորից,
Անձրևիր նորից քարափներն ի վար,
Դու մտիր նորից քարանձավներին խավարը անհուն,
Երբ տառապանքն ու լուսն արեգական ձուլվում են իրար,
Հասկը, հրաշքը և երազներն են կյանքում հարսնանում...





ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՀԻՆՅԱՆ

Կյանքից հեռացավ հայ ճարտարապետության երախտավորներից մեկը, երբ տակավին լի էր ստեղծագործելու բուռն եռանդով ու բազում ծրագրերով: Նրա մահվամբ սովետահայ ճարտարապետների ընտանիքը և Մայր Աթոռի ճարտարապետական հանձնաժողովը կորցրեց իր նվիրյալ գործիչներից մեկին, որն իր գիտական վաստակով, ինչպես նաև մարդկային բարձր արժանիքներով և մեղմանուշ բնավորությամբ համընդհանուր սիրո ու հարգանքի էր արժանացել:

Ալեքսանդր Արամի Սահինյանը ծնվել է 1910 թվականին Ստեփանավանի շրջանի Վարդաբլուր գյուղում: Թբիլիսիի 76-րդ հայկական միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, նա 1926—1930 թվականներին որպես ուսուցիչ աշխատել է Թումանյանի շրջանի ձոճկան գյուղում: Այդ տարիներին էլ սկզբնավորվեց մեր ընկերությունը (ես ուսուցիչ էի նույն շրջանի Շնող գյուղի դպրոցում) և շարունակվեց մեր ամբողջ կյանքում:

1930 թվականին Ալեքսանդր Սահինյանն ընդունվում է Երևանի նորաբաց շինարարական (հետագայում՝ պոլիտեխնիկական) ինստիտուտի ճարտարապետության բաժինը:

Ինստիտուտը 1937 թվականին ավարտելուց հետո, Ա. Սահինյանն անցնում է աշխատանքի «Հայպետնախագիծ» ինստիտուտում, որոշ տարիներ զբաղվելով պրակտիկ նախագծմամբ: Նրա կողմից մշակված նախագծերով են կառուցվել սանիտարական-



բակտերիոլոգիական ինստիտուտի շենքը Երևանում, մի քանի դպրոցներ Հայաստանի տարբեր շրջաններում:

Հայրենական մեծ պատերազմի սկզբին Ա. Սահիկյանը Կորակոչվում է սովետական բանակ և 1942—1943 թթ. մասնակից դառնում հայրենիքի պաշտպանության համար մղված ծանր մարտերին ու, վիրավորվելով, Կորագրվում և վերադառնում ստեղծագործական աշխատանքի: Պատերազմի վերջին տարիներին նրա մշակած նախագծերով են կառուցվել ակումբը Էջմիածնի ջրջանի Աղավնատուն գյուղում, մի քանի աղբյուր-հուշարձաններ մեր հանրապետության տարբեր բնակավայրերում:

Սակայն կյանքի այլ ուղի էր սպասվում Սահիկյանին: Նա նպատակադրվել էր Կինվորագրվել Թորոս Թորամանյանի գործին: Որպես շարքային Կինվոր մտնելով հայկական ճարտարապետությունը՝ հետապնդողների այն տարիների փոքրաթիվ ջոկատը, հետագայում դառնում է նրա բազմաբեղուն հրամանատարներից մեկին: 1943—1946 թթ. լինելով Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտ, նա հարստացնում է իր գիտելիքները ճարտարապետության պատմության ու հնագիտության գծով և շարադրում դիսերտացիոն մի աշխատություն՝ նվիրված վաղ քրիստոնեական Հայաստանի կարևորագույն հուշարձաններից մեկին՝ Քասաղի տաճարին: Նա իր այդ գիտական աշխատությունը հաջողությամբ պաշտպանում է 1952 թվականին՝ հայցելով ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան:

1946 թվականին Ա. Սահիկյանն աշխատանքի է անցնում Հայկական ՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, իսկ 1953 թվականին նշանակվում է արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի (1958 թվականից) վարիչ, ավագ գիտական աշխատակից (1963 թ.): Այդ պաշտոնն էլ նա շարունակում է վարել մինչև իր անժամանակ մահը:

Շուրջ 35 տարվա իր գիտահետազոտական գործունեության ընթացքում Սահիկյանը հրատարակել է 50-ից ավելի աշխատություններ՝ մեծ ավանդ մոծելով հարապատ ժողովրդի հարուստ ճարտարապետական ժառանգության ուսումնասիրման և պրոպագանդման գործում: Խոր և ծանրակշիռ են նրա հետազոտությունները, խիստ արժեքավոր: Մշտապես պրպտող մտքի տեր ու գիտական հարցերի մեջ խորամուխ լինելու ընդունակ գիտնականի աշխատությունների գերակշռող մասը նվիրված է հայկական ճարտարապետության կազմավորման, նրա ազգային ավանդույթների ստեղծման կարևոր հարցերին: Դրանց են նվիրված նրա «Քասաղի տաճարի ճարտարապետությունը» մենագրու-

թյունը (Երևան, 1955 թ.), «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» (Երևան, 1964 թ.) ծավալուն աշխատության համապատասխան գլուխները, Էջմիածնի Մայր տաճարի, Երեմյայի բազիլիկի, Ջովուհիի եկեղեցու և վաղ քրիստոնեական ջրջանի հայկական պաշտամունքային այլ հուշարձանների մասին նրա հետազոտությունները՝ շարադրված հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված կարևոր նյութերի հիման վրա:

Առանձնապես հետաքրքրական են Սահիկյանի ղեկավարությամբ 1954—1955 և 1959 թթ. Էջմիածնի Մայր տաճարում կատարված պեղումները, որոնց ժամանակ բացվել են տաճարի հին մասեր, արևելյան աբսիդի տակին ավելի հին աբսիդի մնացորդներ՝ կենտրոնում կրակարանով, ուրարտական մի կոթող և վեմ-քար, որմնակարի և խճանկարի բեկորներ և այլն: Այդ հայտնագործությունների մասին հրապարակված իր հաղորդումներում Սահիկյանը սկզբունքային նշանակություն ունեցող եզրահանգումներ է արել Էջմիածնի Մայր տաճարի նախնական հորինվածքի վերաբերյալ:

Հետաքրքրական են նաև Սահիկյանի ղեկավարությամբ Ս. Հոփսիմե տաճարում կատարված պեղումների արդյունքները: Պարզվեց, որ տաճարի կառուցման ժամանակ նրա հիմքերում տեղադրվել են հին Վաղարշապատի անտիկ շենքերին պատկանող մեծաչափ ու քանդակազարդ բեկորներ:

Գիտական մեծ բարեխղճությամբ շարադրված իր աշխատությունների մեջ Սահիկյանն ընթացավ հայ ճարտարապետության կազմավորման ու զարգացման տեղական ավանդույթները հետևողականորեն լուսաբանելու ուղիով, դրանով իսկ ամրապնդելով և ավելի ևս հիմնավորելով իր մեծ ուսուցչի՝ Թ. Թորամանյանի դրույթներն այդ հարցում և միևնույն ժամանակ իր հայտնագործությունների անհերքելի տվյալներով դրանցում արժեքավոր ճշտումներ կատարելով:

Հայ ճարտարապետության զարգացման տեղական ավանդույթները նա իրավացիորեն տեսնում էր նախաքրիստոնեական ջրջանի հայ ճարտարապետության մեջ: Ա. Սահիկյանը մասնակցեց Գառնիի ամրոցի հնագիտական ճարտարապետական հետազոտությանը՝ դրան նվիրելով բազմաթիվ հոդված-

¹ Պեղումների արդյունքների մասին տես Ա. Սահիկյանի հաղորդումները «Էջմիածին» ամսագրում (1956 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 60—69, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 56—67, 1960 թ. հունվար, էջ 43—63):

² «Էջմիածին», 1959 թ., էջ 20—21:

ներ ու մի մենագրություն, որը, ավա՞ղ, նրան չվիճակվեց հրատարակված տեսնել:

Գառնիի ամրոցի ուսումնասիրությունը պսակվեց իր իսկ նախագծով և գիտական ղեկավարությամբ իրականացված հեթանոսական տաճարի ամբողջական վերականգնմամբ, որին նա ջանադիր նվիրեց իր կյանքի շուրջ տասը տարիները: Իր նախկին փառահեղ տեսքով հառնած այդ հեթանոսական տաճարը, որ մեր հանրապետության հուշարձանների վերականգնման պրակտիկայի փայլուն արդյունքներից մեկն է, իրավամբ հանդիսացավ Ալեքսանդր Սահինյանի գիտական սխրանքը, որով նրա անունը ոսկե տառերով առհավետ արձանագրվեց այդ նշանավոր կոթողի անվան հետ: Ահա թե ինչու հուշարձանների վերականգնող մեր ճարտարապետների մեջ նա առաջինն էր, որ 1975 թ. այդ աշխատանքի համար արժանացավ Հայաստանի հանրապետության պետական մրցանակի դափնեկրի բարձր պատվին:

Մինչև իր կյանքի վերջը Ա. Սահինյանը հետևողականորեն ու մեծ նվիրումով ծառայեց մեր ճարտարապետական հուշարձանների պահպանության ու վերականգնման կարևոր գործին: Որպես անդամ հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության գիտա-մեթոդական խորհրդի և Մայր Աթոռի ճարտարապետա-շինարարական հանձնաժողովի, նա տարիներ շարունակ մասնակցեց բազմաթիվ հուշարձանների վերականգնման նախագծերի քննարկմանն ու նրանց իրականացման ընթացքում կատարված կոնսուլտացիաներին: Նրա նախագծով

են այժմ իրականացվում Քասաղի տաճարի վերականգնման աշխատանքները, որոնց ավարտը մի նոր պսակ պետք է դառնա մեր վաղամեռիկ ընկերոջ հիշատակին:


Ա. Սահինյանը եռանդուն մասնակցություն բերեց նաև պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության աշխատանքներին: Նա այդ ընկերության հանրապետական խորհրդի և նախագահության անդամ էր նրա հիմնադրման օրից: Նա նույնպես գործուն մասնակցություն ցուցաբերեց Հայաստանի ճարտարապետների միության աշխատանքներում որպես նրա վարչության մշտական անդամ, ինչպես նաև ճարտարապետության պատմության բաժնի նախագահ:

Հիշատակության արժանի է նաև Ա. Սահինյանի մանկավարժական գործունեությունը Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում: Վերջին տարիներին, որպես պետական քննական հանձնաժողովի անդամ, նա մասնակցել է ճարտարապետական հուշարձանների վերականգնման մասնագիտացման ճարտարապետների դիպլոմային նախագծերի պաշտպանությանը՝ նպաստելով կադրերի պատրաստման շատ կարևոր գործին:

Ժողովրդի սրտում անմար են մնում իր նվիրյալ զավակների անունները: Հայ ժողովրդի այդպիսի երախտավոր զավակներից մեկն էր Ալեքսանդր Սահինյանը:

ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱՐԱՋԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՅԱՆԻ ԵՎ ՌԻՏԻՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ

ՆՈՐ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց «Դիվան հայ վիմագրության» ժողովածուի հերթական՝ 5-րդ պրակը, որը կազմել է ծանոթագրել է անվանի վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը: Պրակն ընդգրկում է պատմական Հայաստանի Արցախ և Ուտիք նահանգների տարածքում սփռված հայատառ արձանագրությունները, որոնք պետեղված են «Դիվան»-ում գիտական հրատարակության երեք բաղկացուցիչ մասերով՝ վերծանություն, գրչագիր և լուսանկար: Անհրաժեշտ նկատված տեքստերը ծանոթագրված են:

Վիմագրերն ընդգրկում են Թ—ԺԸ դարերը: Շինարարական ու նվիրատվական, սոցիալ-իրավական ու հիշատակագրային արձանագրությունները չափազանց արժեքավոր տեղեկություններ են պարունակում Արցախի քաղաքական, սոցիալ-տնտեսական, իրավական ու մշակութային պատմության վերաբերյալ:

Առանձնակի արժեք ունեն ջինարարական վկայագրերը, որոնց շնորհիվ ճշտվում են բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձանների կառուցման ժամանակը, ջինարարության հեղինակն ու նվիրատուները: Մեծ թիվ են կազմում խաչքարերի կանգնեցման առթիվ փորագրված վիմագրերը: Բազմաթիվ արձանագրություններ մեզ տեղեկացնում են Արցախում գործող իշխանական տների գործունեության մասին:

Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց Հ. Գ. Մանուչարյանի «Պողոս Տարոնացի» ուսումնասիրությունը, որը նվիրված է հայ նշանավոր մատենագիր, Մշո Առաքելոց վանքի վանահայր Պողոս վարդապետ Տարոնացու կյանքին ու գործունեությանը և նույն վանքի գրչության դպրոցի պատմությանը:

Ուսումնասիրությունը բաղկացած է առաջաբանից և յոթ գլուխներից:

Առաջաբանում խոսվում է Պողոս վարդապետ Տարոնացու կենսագրության և տվյալ ժամանակաշրջանի Հայաստանի հասարակական-քաղաքական իրավիճակի մասին:

Գրքի հաջորդ մասերում հեղինակը խոսում է Հայաստանը սելջուկ-թուրքերի կողմից ավերիչ արշավանքների ենթարկվելու, Բյուզանդական կայսրության՝ ընդդեմ Հայաստանի վարած նվաճողական ձգտումների, հայ ժողովրդի դավանափոխության ու ընդհանրապես Հայաստանի խաչառ վերացման քաղաքականության և բազմաթիվ այլ հարցերի մասին: Այստեղ հեղինակը մասնավորաբար ներկայացնում է պատմական Սասունը ԺԱ—ԺԲ դարերում և Մշո Առաքելոց վանքը, որի հիմնադիրն է եղել Ս. Գրիգոր Լուսավորիչը:

Այնուհետև Հ. Մանուչարյանը հանգամանորեն խոսում է Առաքելոց վանքի գրչության կենտրոնի և հատկապես վերոհիշյալ վանքի վանահոր՝ Պողոս վարդապետ Տարոնացու մասին, որին ժամանակակիցները

սրբացրել են և տվել «Մեծ իմաստասեր», «Երկրորդ Լուսավորիչ Տանն Հայոց», «Վեմ աղամանդյա ընդդեմ հերձվածողաց» կոչումները:

Պողոս վարդապետ Տարոնացուց մեկ են հասել մի քանի աշխատություններ՝ բազմաթիվ ընդօրինակություններով, որոնցում ակնհայտորեն երևում է դավանաբանական վեճերի և ժամանակի հասարակական-քաղաքական անցողիկների նկատմամբ Պողոս վարդապետ Տարոնացու դիրքորոշումը: Հ. Մանուչարյանն իր ուսումնասիրության մեջ տալիս է նաև վերլուծություններ Պողոս վարդապետ Տարոնացու աշխատությունների, խոսում նրա դավանաբանական վերլուծությունների, Քրիստոսի ծննդյան և մկրտությունների մասին: «Այս առթիվ կատարում է տոմարական բարդ հաշվումներ՝ իրար կուգադրելով արաբական, մակեդոնական, եգիպտական, աթենական, բուքարեստական, կապադոկյան, վրացական, հունական, հռոմեական, ասորական և հայկական համապատասխան ամիսները», գրում է Հ. Մանուչարյանը:

